ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

491.99-8
Ի-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1939

1005-10
491.928
Դ-98

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝
ԴՈՒՐԳԱՐՅԱՆ Մ.
ԽԱՉԻԿՅԱՆ Ա.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ

Չորրորդ վերամշակված հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1930

4 APR 2013
8273

9797
39

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Книга для чтения

учебник для III-го класа

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

Լ. ՑԵՐԵԽԱՆԵՐ

Ծեր Սուլեմանից ձեզ հաղար վողջույն,
Ծաղկում է կյանքը մեր, յերեխանե՛ր,
Ձեզ համար յերկրում նոր այդ է բացվում,
Նոր խինդ է բերում ձեզ, յերեխանե՛ր։

Վանեցեք ձեզնից անպետք ծուլություն,
Ցերդով վողջունեք դուք որը արթուն։
Թող յեղնիկի պես արևը խնդուն
Դիմավորի ձեզ, ջա՛ն յերեխաներ։

Բաց է դրքի պես՝ կյանքում ամեն ինչ։
Սովորեցեք դուք լող, վազք ու թռիչք։
Աստղերի ցոլքն ու ծովը հմայիչ
Մի՛շտ գրավել են ձեզ, յերեխանե՛ր։

Լայն է յերկիրը մեր ու ընդարձակ,
Անհուն խինդ ունի, գիրք մեծաքանակ։
Կուզե՞ք ձեռք բերել։— պետք է չարքաշակ
Սովորեք անդուլ, ի՛մ յերեխաներ։

Մեր հայրենիքում— դարուն է խնդուն,
Ձեզ անուշանող յերկիրը սիրուն
Թող փքթի, դառնա ուժեղ, զվարթուն,
Ցոլա ալմասի պես, յերեխանե՛ր։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Այգ— առավոտ, լուսաբաց։
2. Վանել — հեռացնել, հեռու տանել։
3. Անդուլ — անդադար, յեռանդուն։
4. Հմայիչ — գրավիչ, շատ գեղեցիկ։
5. Սնուցանող — կերակրող, մեծացնող։
6. Փքթել— ծաղկել, բողբոջել։

---

2. ԾԱՂԿԱՁՈՐՈՒ

Այնքա՛ն ծաղիկ, այնքա՛ն բույր,
Այնքան առվակ ու աղբյուր,
Այնքան գետակ քչքչան,
— Ձա՛ն Ծաղկաձո՛ր,
Ձա՛ն, ձա՛ն, ձա՛ն...

Ծաղկաձորում ծաղկախաղ,
Թմբուկ, նվագ, յերգ ու տաղ,
Ձով խրիկուն, թեժ խարույկ,
Հոգով–մարմնով մենք առույգ,
Ծաղկի նման հոտավետ,
Թիթեռի պես հովի հետ,
Գետակի պես կարկաչուն
Յե՛վ յերգում ենք, և՛ աճում։



Այնքա՛ն ծաղիկ, այնքա՛ն բույր,
Այնքա՛ն առվակ ու աղբյուր,
Այնքա՛ն գետակ քչքչան,
— Ձա՛ն Ծաղկաձո՛ր,
Ձա՛ն, ձա՛ն, ձա՛ն...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բույր — անուշահոտություն։
2. Առույգ — զվարթ, ուրախ։

---

3. ԽԱՂՈՂԻ ՊՅԳՈՒՄ

1

Մի ամառ, յերբ դեռ փոքր եյի, հյուր եյի գնացել քեռուս այգին:

Ցեռ առաջին անգամն եյի լինում խաղողի այգում· ամեն ինչ այդտեղ նոր եր ինձ համար ու հետաքրքրական,— թե՛ խաղողի թփերը, թե՛ դեղձի ու փշատի ծառերը, թե՛ հնձանը և թե՛ խաղող քաղելը: Ամբողջ որը, ամեն ինչ մոռացած, թափառում եյի այդում, իսկ յերեկոյան հոգնած ու անուշ քնում հնձանում:

— Այդ անպիտան վոզնին խաղող ե տարել,— ասաց քեռիս կնոջը, յերբ բոլորս միասին թեյ եյինք խմում:

Վոզնին — խաղո՞ղ... Ցեռ վոզնի տեսել եյի, բայց յերբեք չեյի լսել, վոր վոզնին խաղող պոկի: Այդ խեղճ, անճարակ կենդանին, վոր շարունակ իր փչի մուչտակում փաթաթված ընկած ե լինում մութ ու ծածուկ տեղեր և հաղիվ ե ման գալիս—ի՞նչպես կարող ե նա խաղող քաղել:

— Քեռի՛, վոզնին ձեռք ունի՞, վոր խաղող պոկի,— հարցրի ես:

— Բանն էլ հենց այն ե, վոր չունի ու պոկում ե. մի որ նայիր, կտեսնես:

Ցեռ սկսեցի փնտռել, հետևել, թե վորտեղ են ապրում վոզնիները, ինչպե՛ս են դուրս գալիս ու խաղող տանում:

Ու մի յերկու որ զգուշությամբ թմբից-թումբ անցնելով՝ նայում եյի թփերի արանքը, թփերի տակ, ու վոզնի եյի փնտռում:

Առաջին որը վոչինչ չտեսա, բայց հետևյալ որը, յերբ մի թփի մոտ նստած խաղող եյի ուտում, հանկարծ տարորինակ խշխշոց լսեցի· ինձ թվաց, թե ոմ ե սողում, ու մնացի անշարժ, աչքերս խշշոցի կողմը:

Ու ի՞նչ տեսա...

Վոզնի՛· բայց վոչ թե մենակ, այլ ճուտերով: Խողի նման՝ յերեք փոքրիկ-փոքրիկ ճտերը հետևը գցած, ինչ-վոր բարակ ձայն հանելով, դալիս եր դլուխը փչի կծիկից դուրս հանած· նույնն արել եյին նաև ճտերը:

Գալիս եր նա թփերի առաջ կանգ առնելով ու վերև նայելով: Այդ ժամանակ կանգ եյին առնում և ճտերն ու տարորինակ ծվծվոցով նայում իրենց մորը:

Մայր վոզնին թփերին նայելով՝ շարունակում եր քայլել դեպի իմ կողմը:

Ցեռ մոտ թփերի արանքը, թաղ կացա, վոր նա ինձ չտեսնի: Լսել եյի, վոր վոզնին մարդ տեսնելիս՝ կծիկ ե դառնում ու անշարժանում:

Նա մի փոքր ել առաջ յեկավ ու կանգ առավ մի մեծ թփի տակ, վորի վոդկույզները կախվել, հասել եյին դետնին:

Մայր վոզնին մոտեցավ այդ վոդկույզներից մեկին ու տարորինակ ձայն հանեց:

Ճուտերը մոտեցան նրան:

Այդ ժամանակ մայրը մի փոքր բարձրացավ ու առաջին թաթերով սկսեց խաղողի հատիկները պոկել վոդկույզներից ու թափել դետին:

Նա աշխատում եր յերկու թաթով· ամեն անգամ թաթը վոդկույզին տալիս՝ հատիկներն ընկնում եյին դետնին:

Ցերը մայրն զբաղված եր դրանով, ձագերը փոր-ձում էին բարձրանալ թփի վրա։

Շատ ծիծաղելի էին այդ փշոտ փոքրիկներն իրենց անճարակ փորձերով։ Հազիվ բարձրանում էին մի թիզ, յերկու թիզ, նորից ընկնում էին դետնին։

Իսկ մայր վողնին յեռանդով շարունակում եր հատիկները վողկույզներից թափել դետնին։

Ցերը բավական թափել եր, նա խոճկորի նման մի ձայն հանեց։

Ձագերը փշոտ դնդակների նման գլորվեցին դեպի մայրը։

Այդ ժամանակ մայր վողնին թավալվեց դետնի վրա, այնտեղ, ուր խաղողի հատիկներն էին թափված։

Թավալվեց ու վեր կացավ։

Հատիկները մեկ-մեկ ցցվել էին նրա փշերին։

Վեր կենալով՝ նա առաջվա պես խռկացրեց։

Մնացած հատիկների վրա թավալվեցին ձագերը։ Հատիկները ցցվեցին նրանց փշերի վրա, ու նրանք դրանից կարծես մեծացան։

Ցերը յերեք ձագնել հերթով թավալվեցին ու վեր կացան, նորից լսվեց մայր վողնու տարօրինակ ձայնը։

Ու այդ ձայնը մի յերկու անգամ կրկնելով՝ նա հետ դարձավ յեկած ճանապարհով, ճուտերն էլ նրա հետևից։ Բոլորն էլ խաղողով բեռնավորված էին։

Այնքան հետաքրքրական ու տարօրինակ եր այդ ամենը, վոր յես զարմացած նրանց եյի նայում։

Իսկ յերբ նրանք բավական հեռացան, վազեցի նրանց հետևից— մեկն ու մեկին բռնելու, կամ սպանելու,— նրանք արդեն թաղնվել էին։

Ցերեկոյան, յերբ տեսածիս մասին պատմեցի քեռուս, նա չզարմացավ։

— Իհարկե, ասաց, վողնին այդպես է...

Իսկ յերբ հայտնեցի, թե ուզում եյի նրանց սպանել, նա գլուխն որորեց։

— Այդպիսի բան չանե՛ս... Ցեթե վողնին չլինի, այդին ոձերով կլցվի։

— Իսկ վողնին ոձին ի՞նչ է անում վոր...

— Ինչ է անո՛ւմ։ Ոձերին վոչնչացնում է։ Նա ոձի պոչը բռնում է ու գունդ ու կծիկ դալիս։ Ոձը թափահարում է իրեն, վոր պոչն ազատի։ Չի ազատվում։ Տեսնում է՝ չի ազատվում, սկսում է խփել բռնողին։ Այնքան է խփում՝ արյունլվա յե լինում վողնու փշերից ու սատկում։ Հապա՛... Վողնին այդու պահապան է. դրա համար էլ նրան չպետք է սպանել։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հնձան — այն շենքը, վորտեղ խաղողից գինի յեն պատրաստում։
2. Անճարակ — անոգնական, խեղճ։
3. Մուշտակ — մորթե վերարկու, քուրք։
4. Վողկույզ — խաղողի ճիթ։
5. Խոճկոր— խոզի ճուտ։

---

4. ԽԱՂՈՂԻ ՑԵՐԳԸ

— Հի՛յ Ջան, Մխո՛, կողմվդ բեր,
Դարսենք առատ քաղած ճիթերը,
Են առաջվա ժամանակին
Ազան տերն եր մեր բարեբին։

Քաղում եր մեր աչքի լույսը,
Հետն էլ աղնիվ մեր վողջույրը,
Խլում մեզնից ընտիր նուռը,
Փակում մեր դեմ կյանքի դուռը...

— Հե՛յ ջան, Մխո՛, կողովդ բերը,
Դարսենք առատ քաղած ճիթեր,
Տե՛ս, խաղողը կիտուկ-կիտուկ,
Յեզանդարի, լիծապտուկ,
Համայնական բաղի միջին,
Խաղող քաղենք՝ համեղ խարջին։
Համով-հոտով ու գինեբուղխ,
Ինքը կարմիր, աչքերը թուխ,
Գառան դմակ, լոբիկ, կախեթ,
Գինին անենք հենց վարար դեռ։

— Հե՛յ ջան, Մխո՛, կողովդ բերը,
Դարսենք առատ քաղած ճիթեր,
Մերն է հիմի հողն ու հերկը,
Բերքն ու բարին, կյանքն ու յերդը։
Ցերկիր ունենք՝ ծաղկած պարտեզ,
Արեվն անուշ ժպտում է մեզ,
Ջա՛ն, հողն առատ, ջուրը՝ վարար
Աշխատավոր մարդու համար։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գինեբուղխ — գինի տվող, գինի պարունակող։
2. Վարար — առատ, հեղեղած։
3. Համայնական— ընդհանուրին պատկանող։

ՀԱՐՑԵՐ

1. Ուրիշ ինչ տեսակ խաղողներ գիտեք։
2. Ինչ համեմատություն է անում հեղինակն այս գրված քի սկզբի և վերջին մասերում։

---

5. ՏԵՐ-ԱՎԱՆԵՍԻ ԴՊՐՈՑԸ

Տեր-Ավանեսը գյուղացի յեր, յեկել եր մեր քաղաքը, գրել-կարդալ սովորել և յեկեղեցում տիրացու դարձել։ Իսկ թե հետո ինչպես եր քահանա դարձել, վոչ վոք չգիտեր։ Գլխավորն այն եր, վոր ինքը հաղիվ-հաղ կարդալ գիտեր. ուստամնարան եր բաց արել և դաս եր տալիս մեզ, ամեն մեկիցս վերցնելով ամիսը մի ռուբլի։

Ցեվ ի՞նչ դաս. «այբ, ժե, ճե, ռա, բեն, ինի» և այլն։

Գեր գեմքով, սև, թանձր ու յերկար միրուքով մի մարդ եր տեր-Ավանեսը։ Նրա ունքերը միշտ կիտված եյին, յերեսը թթված։

Ցերկու բանում նա շատ յեռանդուն եր՝ ուտելում և ծեծելում։

Ամենից ավելի սիրում եր խնձորի տոմա և փախ-
լավա։ Ընկուզի հալվա ել եր սիրում, բայց ավելի
պակաս, քան ճուտով փլավը։

Մեր ծնողները այդ բանը գիտեյին. ով կարող եր,
տեր-հորը բաժին եր ուղարկում։

Նա ծեծում եր մանավանդ այն աշակերտներին,
Զորոնց ծնողները չեյին կարողանում խնձորի տոմա
կամ ընկուզի հալվա ուղարկել իրեն։

Ամենից շատ ծեծվում եր Շամչյանց Ավետը։ Այն
ել ասեմ, վոր դա մի վերին աստիճանի անհանգիստ
տղա յեր. շարունակ թռչկոտում եր, պարում, յեր-
գում։ Յերբեմն դասամիջոցներին կանգնում եր ձեռ-
ների վրա, գլուխը դուրս եր բերում վոտների արան-
քով և ասում.

— Փի՛չ-փիչ, փի՛չ-փիչ։

Նա սիրում եր սրան-նրան խառուտ տալ կամ կմըշ-
տել։ Հակառակի պես միշտ իմ կողքին եր նստում և
դասի ժամանակ շարունակ կմշտում եր ինձ։

Մի որ Ավետն ինձ այնպես պինդ կմշտեց, վոր
յես գոռացի.

— Վա՛յ, վա՛յ։

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց տեր-Ավանեսը՝
յերկար ճիպոտը բարձրացնելով։

— Ճանճը կծեց ականջս,— պատասխանեցի յես։

— Ճանճի կծելուց կարելի՞ յե արյի պես գո-
ռալ,— կատաղեց տեր-Ավանեսը։

Բարեբախտաբար այդ որը մենք խնձորի տոմա
ունեյինք և տեր-հայրն արդեն յուր բաժինն ստացել
եր. նա ինձ չծեծեց։

---

6. ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ չենում
Մի հարգելոր հարս և լինում։
Նրա բերանից կեսուր-կեսուր
Չեյին լսել մի չունչ, մի բառ,
Չեյին տեսել շուրթը մի որ...
Եսպես խոնարհ ու հարգելոր։
Մի որ մենակ ոդում նստած,
Իր ճոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփույթ սանրում, հյուսում,
Հետն ել ձենով յերգ եր ասում։
«Աչխարքը բանտ,
Մեջը անբախտ
Յես մի դերի անխնդում.
Սիրուն շորեր,
Զահել որեր
Ի՞նչ եմ անում ես բանտում։
Երնե՛կ ծտին,
Ճյուղքի միջին
Ծլվլում և, թրթռում,
Թռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազա՛տ, կանա՛չ արտերում։
Ա՛խ, սև ըլի,
Զբվի, փլի
Ծնված որը աղջիկ,
Ցավ ու խնդում
Փակված սրտում,
Ծիծաղ չկա, ա՛խ, չկա՛...»
Մին ել հանկարծ բացվեց դուռը,
Ու ներս մտավ ծեր կեսուրը։
— Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը,
Գնացին պատռի՛, մոնեմ մեջը...

— Հոպոպ դառնաս,
Անամոթ հարս։
Մի տե՛ս, մի տե՛ս,
Գլուխը քաց,
Աղաս նստած՝
Վո՛նց է կանչում,
Չի ամաչում...
Լեղուդ լալկի,
Մազդ թաղքի,
Գլխիդ կպչի
Սանրը միջի։
Ասավ-չասավ,
Մին էլ տեսավ՝
Սանրը գլխին
Հարսն առաջին
Հոպոպ դառավ,
Ցերդկից թռավ,
Ու վերացավ,
Վե՛ր, հեռացավ։

Են եր ու են.
Խեղճն են որեն
Հանդերն ընկած՝
Հոպոպ մնաց.
Միշտ էլ են հին
Սանրը գլխին,
Զալի՛կ մալի՛կ,
Լեղուն լալիկ,
Անխոս ու լուռ,
Մոլո՛ր, տխուր։

Բայց յերբ հանկարծ
Միան է գալիս,
Վոր գլխաբաց

Ցերդ տանելիս՝
Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր է թռչում
Սրտատրոփ
Ու դեռ ճչում.
— Հո՛-պո՛պ... Հո՛-պո՛պ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Շեն — գյուղ։
2. Ոդա — գյուղական սենյակ։
3. Հարգելոր — խոնարհ, պատիվ իմացող։
4. Անփույթ — անհոգ։
5. Կեսուր — հարսի ամուսնու մայրը։
6. Կեսուր — հարսի ամուսնու հայրը։
7. Լալկել — համբանալ, մնջվել։
8. Թաղքել — իրար կպչել, թաղիք դառնալ։
9. Սրտատրոփ — անհանգիստ, անհամբեր։

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ հետ է համեմատում հարսն իրեն և ի՞նչ է ասում։
2. Ի՞նչ է ասում հարսը յերիտասարդ կնոջ վիճակի մասին։
3. Կեսուրն ի՞նչպես եր վերաբերվում հարսին։
4. Հ. Թումանյանի վո՞ր հեքիաթներն եք կարդացել։

Բացատրեցեք հետևյալ դարձվածքները.
ա) Չեյին լսել մի շունչ, մի բառ։
բ) Չեյին տեսել շուրթը մի որ։
գ) Ցես մի դերի անխնդում։

9797
34



7. ԶՐԱՆՑՔԻ ԲԱՑՈՒՄԸ

1

Այսոր հաղթության տոն է:

Վոսկեձորի բոլոր գյուղերից, քաղաքից ավտոմոբիլներով, կառքերով, ձիերով, եշերով, վոտքով դալիս են ու դալիս:

Բոլորն շտապում են դեպի ձորը:

Սմեն մեկն աշխատում է մոտ կանգնել դրոշակներով զարդարված պատվանդանին, վորի վրա ծաղիկների մեջ դրված է Լենինի կինոանդրին:

Ոդը թնդում է հարյուրավոր մարդկանց ուրախալի ձայներով: Տարիներով չոր ու ցամաք ձորն այսոր պետք է հեղեղվի և ներքևի հսկայական, ճաքճքած հողը պիտի ծծի կենսատու հեղուկը:

Հանկարծ հեռվում լսվեց մի խուլ աղմուկ: Զորի դլխին յերևացին մի քանի հոդի: Նրանք ձորն եյին իջնում, և նրանց տասնյանալու հետ միասին ուժեղանում եյին ուրախության աղաղակները: Ահա և բանվորները մխացան իջնող խաբին ու խուռն բազմությունը ձեռների վրա բերեց ճարտարապետին ու վարպետին: Ներքևում իրար անցան, ծովի պես որորվեց ժողովուրդը և դրոհ տվեց դեպի ձորը:

Թնդացին չրջակա լեռները:

Վարպետն ուզեց խոսել, բայց հուզմունքից վոչինչ չկարողացավ ասել և դրկելով ինժեներին՝ հուզված ձայնով ասաց.

— Ընկերներ, տասնց Խորհրդային իշխանության անկարող կլինեյինք այսքան դժվարություններ հաղթահարել: Առաջ հողն ու ջուրը մերը չեր, այլ ագաների: Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը, վոր հողն ու ջուրն աշխատավորին տվեց:

Վարպետի ձայնը խլացավ ծափերի, ուրախ բացականչությունների ու յերաժշտության հնչյունների տակ:

Խոսեցին մի շարք բանվորներ ու քաղաքից յեկած հյուրերը:

2

Ժամը 4-ն անց 15 րոպե՝ ոդի մեջ սլացավ հրթիռը և պայթեց:

Յերաժշտությունը դադարեց:

— Բանա՛լ շլյուզները,— ելեկտրոկայանի հեռախոսի միջից լսվեց ճարտարապետի հուզված, բայց ինքնավստահ ձայնը:

— Բանա՛լ շլյուզները...

— Բանա՛լ շլյուզները... բանա՛լ... ձայն տվին իրար շլյուզների մոտ կանգնած բանվորները:

Հարյուրավոր մարդիկ չունչերը պահած, լուռ, սրտատրոփ սպասում են: Բոլորը հայացքները հառած ձորին, լարված ուշադրությամբ, գլուխները վեր, ամեն ինչ մոռացած՝ սպասում են: Ամեն մեկն աշխատում է շուտ տեսնել...

Մեկը բարձրաձայն ճչաց.

— Գե՛տը: Ջո՛ւրը:

Ցեվ խիկուն ձորի գլխից պղտոր, փրփրադեղ առաջին ալիքն իրեն ցած նետեց և փշուր-փշուր յեղավ: Առաջին ալիքին հետևեց յերկրորդը, յերրորդը, և լայնաբերան ջրվեժն անընդհատ հոսանքով զարկեց ձորի կարծր հատակին, առաջ անցավ փրփրադեղ ու կատաղի, և ջրի փոշու մեջ փայլեց ծիածանը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Պատվանդան — չինած բարձրություն
2. Կիսանդրի — կիսարձան:
3. Կենատու — կյանք տվող:
4. Գրոհ տալ — հարձակվել:
5. Շլյուզ — ջրի առվակը փակող, վեր բարձրացող և իջնող դռներ:
6. Հրթիռ — պայթուցիկ նյութերից կազմված լուսավորող ձողիկ կամ գնդիկ:

---

8. ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի հզոր առյուծ նստել ելը ճանապարհին: Ամեն տեսակ գազաններ գալիս եյին և դողալով անցնում այդ ճանապարհով:

Առյուծը հարցրեց նրանց.

— Ինչո՞ւ յեք փախչում, այդ ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում:

Նրանք պատասխանեցին.



— Դու էլ փախիր, վորովհետև ահա գալիս է մարդը:

Առյուծն ասաց.

— Ո՞վ է մարդը, ի՞նչ է նա, վո՞րն է նրա ուժը և ի՞նչ կերպարանք ունի նա, վոր փախչում եք նրանից:

Նրանք պատասխանեցին.

— Կգա, քեզ կտեսնի և «վա՛յ» քո որին:

Ահա հանդիպ գալիս է մի հողագործ մարդ:

Առյուծն ասաց նրան.

—Մի՞թե դու յես այն մարդը, վոր փախցնում ես գազաններին:

Նա ասաց.

— Այո՛, յես եմ:

Առյուծն ասաց.

— Արի կռվենք։

Մարդն ասաց.

— Լա՛վ, կռվենք, բայց քո զենքերը քեզ վրա յեն, իսկ իմը՝ տանն են. արի նախ քեզ կապեմ, վորպեսզի չփախչես, մինչև յես գնամ, զենքերս վերցնեմ դամ ու ապա կռվենք։

Առյուծն ասաց.

— Լա՛վ, կապիր ինձ, շուտ գնա և հետ դարձիր։

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապեց կաղնի ծառին. մի մեծ փայտ կտրեց ծառից և սկսեց խփել առյուծին։

Առյուծը բացականչեց.

— Յեթե դու մարդն ես, ավելի ամուր ու անխնա խփիր իմ կողերին, վորովհետև իմ խելքին այդ է արժանի։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հզոր — շատ ուժեղ։

2. Զարհուրել — սաստիկ վախենալ։

---

9. ԱՌԱՏ ԲԵՐՔ

Դաշտերի վրա աշուն է իջել
Խաղաղ ու հանդիստ և բերքով առատ,
Մանուկներն ուրախ հայացքներով ջերմ
Ճամփա յեն ընկնում դեպ այգի ու արտ։

Զեռնառատ մոր պես այգիները բաղում
Կանչում են, ժպտում ամեն անցորդի.—
Բերքից կռացած ծառերն են նազում,
Մրգի բուրմունքը փռելով չորս դին...

Ու աղջիկների յերգն է զընգում.
Ամեն մի մարդում—ամեն ծառի տակ...

Զինչ ու գալարուն դեռատին է հոսում
Յեվ ճայնակցում է նրանց հետ կայտառ։

Դաշտերի վրա աշուն է իջել
Խաղաղ ու հանդիստ և բերքով առատ,
Մանուկներն ուրախ հայացքներով ջերմ,—
Հանդիպ տուն կդան լիացած, ուրախ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զեռնառատ — առատաձեռն։

2. Նազել — «կոտրատվել»։

---

10. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչը շարադրություն տվեց գրելու և ասաց.

— Ամեն մեկդ ձեր կյանքից մի դեպք գրեցեք։

Հետևի նստարանին մի դանդրահեր յերեխա յեր նստած — Գասպարյան ազգանունով։ Գասպարյանը չգիտեր, թե ինչ գրի։ Նա կամաց հարցրեց իր հարևան Աշխենին.

— Դու ի՞նչ պետք է գրես, Աշխեն։

— Պետք է գրեմ, թե ինչպես վախեցա,— պատասխանեց Աշխենը։

Գասպարյանը հարցրեց իր մյուս հարևանին՝ Հարությունյան Լևոնին.

— Լևոն, դու ի՞նչ պետք է գրես։

— Յե՞ս, յես եվ պետք է գրեմ, թե ինչպես վախեցա,— պատասխանեց Լևոնը։

Բոլորն եվ գրիչները վերցրին և սկսեցին գրել իրենց կյանքից՝ ով ինչ ուզում եր։

Գասպարյանը չգիտեր՝ ինչ գրի. մեկ սրան նայեց, մեկ նրան և մի կտոր սրանից արտագրեց, մի կտոր նրանից։ Ահա յուրաքանչյուրի գրած շարադրությունը.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՑԱ

Մի անգամ ամառը հարևան գյուղից մեզ մոտ եյին յեկել քեռիս ու իր կինը։

Ցերեկոյան յես գնացի նրանց ուղեկցելու։ Վերադառնալիս շտապում եյի, վորովհետև յերկյուղալի եր։ Զեռքիս մի յերկար ձող կար։

Գյուղում արդեն բոլոր ճրագները հանգցրել եյին։ Ցերբ մոտեցա մեր տանը, տեսա, վոր դուռը փակ է։ Սկսեցի դուռը ծեծել։ Ցերկու ձեռքով եյի խփում. ձողը կռանս տակն եր. հանկարծ լսեցի, վոր հետևս մեկը պտտվում է, խակ խոսն ել շարժվում, խշխշում է։ Սաստիկ վախեցա։ Ինչքան ուժ ունեի զոռացի և դուռը թակեցի։

Մերոնք տնից դուրս թափվեցին։ Պարզվեց, վոր խոսը խշխշացնողը իմ կռնատակի ձողն է յեղել։

Անահեն Պետրոսյան

ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՑԱ

Մենք փոքրիկ վառիկներ ունեյինք, նրանց հատիկներ եյինք ուտեցնում։

Ուրախանում եյինք, վոր մեծանում են։

Մի առավոտ նոր եր սկսել լուսանալ։

Հանկարծ լուսամուտի տակ մեկը սոսկալի կերպով խռռացրեց։ Զարթնեցի, վախեցա, զարթեցրի յեղբորս։ Ցերկար ժամանակ չեյինք համարձակվում լուսամուտից ցած նայել. հետո նայեցինք։ Բանից դուրս յեկավ, վոր դա մեր փոքրիկ աքաղաղն եր յերգում. դեռ «ծուղրուղու» կանչել չգիտեր և միայն «ծկը՛ ըրբ» եր անում։

Լ. Հարությունյան

ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՑԱ

Ց՛ Ս

Մի անգամ ամառը հարևան գյուղից մեզ մոտ եյին յեկել քեռիս ու իր կինը։ Նրանց հատիկներ եյինք ուտեցնում, ուրախանում եյինք, վոր մեծանում են։ Գիշերը յես ու յեղբայրս քնած եյինք հատակին։ Զեռքիս մի յերկար ձող կար։ Զարթնեցի, վախեցա, զարթեցրի յեղբորս։ Դեռ «ծուղրուղու» կանչել չգիտեր և միայն «ծկը՛ ըրբ» եր անում։

Ս. Գասպարյան

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գանգրահեր — խուճուճ մազերով։
2. Ուղեկցել — հետը գնալ։
3. Զարթնեցի — քնից արթնացա։

11. ԱՂԲՅՈՒՐԸ

Սարի լանջին, ժայռի տակ
Զուր եր բղխում սառնորակ
Ու ցրվելով խոտերում,
Իզուր ճահիճ եր դառնում։

Նրա առջև մի խոր գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ,
Զրեց հոտը իր ծարավ։

Պախրեն անցավ են սարից՝
Շոգից հանած չոր լեզուն,
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նայեց նա հեռուն։

Անցվորն յեկավ տոթակեզ,
Սառն աղբյուրին վոր հասավ,
Գլխարկն առավ ու չոքեց՝
Խմեց, սիրտը հովացավ։

Ու ավազ իր որհնանքը՝
Անցվոր մարդը են բարի.
«Քո չինողի որ-կյանքը
Զրի նման յերկարի՛...»

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գուշ — փոս՝ աղբյուրի առջև։
2. Տոթակեզ — տոթից, շոգից այրված։
3. Պախրա — յեղջերու։

12. ՃՆՃՂՈՒԿԸ

Վորսից վերադառնալիս՝ անց եյի կենում մի պարտեզի միջով: Շունս վազում եր իմ առջևից:

Նա հանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց ու զգույշ առաջ դնալ. կարծես վորսի հոտ եր առել:

Ցես նայեցի ու փոքր ինչ հեռու, ճամփի վրա տեսա մի փոքրիկ ճնճղուկ, վորի կտուցի շուրջը դեղին եր, իսկ գլուխն աղվամազով ծածկված: Նա ընկել եր ընից ու անշարժ պառկել եր, միայնակ ու անոգնական, հազիվ դուրս յեկած փոքրիկ թևերը փռած:

Ցերը շունս ծանրաքայլ մոտենում եր նրան, հանկարծ մոտակա ծառի վրայից մի մեծ, սև կրծքով ճնճղուկ քարի պես ցած նետվեց, ընկավ ուղղակի շան առաջը և հուսահատ ծղրտոցով մի յերկու անգամ թռավ դեպի շան դունչը:

Նա հարձակվում եր, վոր փրկի, պահպանի ձագին... Բայց նրա փոքրիկ մարմինը դողում եր սարսափից: Նրա ծղրտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկնում եր. նա իրեն զոհում եր:

Ի՞նչ ահագին հրեշ պիտի յերևար նրա աչքին շունը... Բայց և այնպես նա նստած մնալ չկարողացավ բարձր ու անվտանգ ճյուղին...

Շունս կանգ առավ. հետ քաշվեց...

Ցես շտապեցի չվարած շանս հետ կանչել և հեռացա՝ զգալով մեջս պատկառանք դեպի այդ փոքրիկ թռչունը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Աղվամազ — քնքույշ փետուրներ:
2. Նետվել — ուժով ընկնել:
3. Հրեշ — անճոռնի, այլանդակ, սարսափելի մի բան:
4. Շվարել — շչկվել, մոլորվել:
5. Պատկառանք — հարգանք:

---

13. ՎԱՆԿԱ

(Անցյալից)

1

Վանկա Ժուկովը, ինը տարեկան մի տղա, վերջին յերեք ամիս առաջ ավել եյին իրեն աշակերտ կոշկակար Ալյախինի մոտ, նոր տարվա նախընթաց գիշերը չեր պառկում քնելու: Սպասեց, մինչև տանտերերն ու աշկերտները հյուր գնացին, վերցրեց

տանտիրոջ պահարանից թանաքի սրվակը, ժանգոտած դրչածայրով դրչակոթը և դնելով իր առջև մի ճմըլված թերթ՝ սկսեց գրել:

Թուղթը դրած էր նստարանին, իսկ Վանկան ծունկ էր չոքել նստարանի առջև:

«Սիրելի պապիկ, Կոնստանտին Մակարիչ,— գրում էր նա:— Ահա գրում եմ քեզ ճտակ: Շնորհավոր ծնունդ, ցանկանում եմ քեզ ամեն ինչ: Ցես վոչ հայր ունեմ և վոչ մայր, միայն դու ցես մնացել»:

Վանկան աչքերը դարձրեց մութ լուսամուտին, վորի մեջ յերևվում էր մոմի արտացոլումը, և պարզ պատկերացրեց իր պապ Կոնստանտին Մակարիչին, վոր ծառայում էր աղայի մոտ՝ Իրբև դիշերային պահակ: Ցերեկը նա քնում էր ծառաների խոհանոցում, իսկ գիշերը, լայն քուրքի մեջ փաթաթված, մոմ էր դարձնում աղարակի չուրջը և թրխկթրխկացնում թակիչը: Նրա հետևից, գլուխը կախ դցած, քայլում էր պառավ Կաշտանկան:

Հիմա, յերևի, պապը կանգնած է դարպասի մոտ, աչքերը կկոցած նայում է գյուղական յեկեղեցու վառ կարմիր լուսամուտներին և զվարճախոսում է ծառայող տղամարդկանց և կանանց հետ: Նրա թակիչը նստած է գոտուց: Նա ձեռքերը խփում է իրար ու կուչ է գալիս ցրտից: Գիշերը մութ է, բայց յերևում է գյուղն իր սպիտակ տներով, յեղյամով արծաթագծված ծառերը, ձյունի հյուսերը:

Վանկան հոգոց հանեց, թաթախեց դրչիչը թանաքի մեջ և շարունակեց գրել.

«Իսկ յերեկ ինձ մի լավ դնչեցին: Վարպետը մագերիցս բռնած քարշ տվեց ինձ բակն ու լավ ուտացրեց դայիշով՝ նրա համար, վոր յես նրանց յերեխին որորում եյի ու եյ չիմացա, թե վոնց քնել եյի: Իսկ ես շաբթին աղջիկ-պարոնն ինձ ձուկը տվեց, վոր մաքրեմ, յես պոչից սկսեցի մաքրել, նա եյ վերցրեց ձուկն ու խփեց իմ դնչին: Աշկերտները ձեռ են առնում ինձ, ուղարկում են գինետուն, վոր արաղ առնեմ և ստիպում են գաղանալ տիրոջս վարունգները, տերս եյ ծեծում է սիրտն ուզածին պես: Իսկ ուտելու բան եյ չկա: Առավոտը տալիս են մի քիչ հաց, ճաշին քաշովուց-բանից և յերեկոյան՝ եյի հաց, իսկ թեյ կամ թե նեռակուր իռենիֆ, տանտերհոն են խմում: Ինձ եյ ստիպում են, վոր հաշտում քնեմ. հենց վոր նրանց յերեխեն լաց է լինում, եյ իսկի չեմ քնում, յես եմ

որորոցն որորում: Սիրելի՛ պապիկ, տար ինձ եստեղից գյուղ, ել իսկի ճար ու հնար չունեմ... Կարոտով բարևս քեզ, վոտքիդ հողն ըլնեմ և մինչև մահս կաղոթեմ, տար ինձ եստեղից, թե չե կմեռնեմ...»:

Վանկան ծռմռեց բերանը, տրորեց աչքերն իր սև բռունցքներով ու հեծկլտաց:

«Ցես քեզ համար թուրթուն կտրորեմ,— *շարունակեց նա,*— իսկ թե վոր մի բան յեղավ, դնքսիր ինձ, վոնց վոր կուզես: Պապիկ ջան, ել ճար-հնար չկա, մահ ե իսկական: Ուզեցի վոտով փախչեմ գյուղ, համա կոշիկ չկա, ցրտից վախենում եմ: Իսկ վոր մեծացա, ես բանի համար քեզ կկերակրեմ ու չեմ թողնի, վոր մեկը քեզ դիպչի...

«Պապի ջան, յերբ աղաների տանը տոնածառ լինի ճվերներով, վերցրու ինձ համար մի վոսկեջրած ընկույզ ու կանաչ սնդուկի մեջ դիր: Ուզիր որիորդ Ոլգայից, ասա՝ Վանկայի համար ե»:

2

Վանկան ծռմռեց բերանը, տրորեց աչքերն ու նայեց լուսամուտին: Նա հիշեց, վոր աղաների համար միշտ պապն ե գնում անտառ տոնածառ բերելու և նրան ել հետն ե տանում: Ի՞նչ ուրախ ժամանակ ե: Պապն ել ե ճքճքում, սառնամանիքն ել ե ճքճքում: ԵՒ, նրանց աչք տալով, Վանկան ել ե ճքճքում: Պատահում ե, վոր նախ քան ծառը կտրելը պապը ծրլում ե ծխամորճը, յերկա՛ր քաշում ե քթախոտը, ու ծիծաղում մրած Վանյուշկայի վրա...

Կտրած ծառը պապը քարշ ե տալիս աղայի տունը, իսկ ենտեղ սկսում եյին զարդարել ծառը... Ամենից շատ չարչարվում ե որիորդ Ոլգան, Վանկայի սիրելին: Յերբ դեռ կենդանի յեր Վանկայի մայրը՝ Պելագեյան և ծառայում ե աղաների մոտ, Ոլգան կերակրում ե Վանկային չաքարեղենով և պարապ

Ժամանակը տվորեցրեց նրան կարդալ, գրել, հաշվել մինչև հարյուրը և նույնիսկ կարդին պարել: Յերբ Պելագեյան մեռավ, վորբ Վանկային տարան ծառաների խոհանոցը՝ պապի մոտ, իսկ խոհանոցից քաշվաք՝ կոշկակար Ալյախինի մոտ:

«Արի եստեղ, պապի ջան,— *շարունակեց Վանկան,*— աղաչում եմ, տար ինձ եստեղից: Խղճա դու ինձ, թշվառ վորբիս, թե չե ինձ բոլորը ծեծում են, իսկ յես սոված եմ, ենպես ել ուտել եմ ուզո՛ւմ, ենպես ել ձանձրալի յե եստեղ, ել ասելու չի, միշտ լաց եմ լինում: Են որն ել վարպետը կաղապարով գլխիս խրփեց ենպես, վոր վեր ընկա ու հազիվ խելքս գլուխս յեկավ: Իմ կյանքը հո կյանք չի, շնից ել վատ... Մեկ ել վոր բարևում եմ Ալյոնային, շլդիկ Յեգորկային և Նառապանին, իսկ իմ գարմոնը մարդու չտաս: Մնամ քո թոռ՝ Իվան Ժուկով. պապի ջան, արի»:

Վանկան չորս տակ ծալեց գրված թուղթը և գրեց ծրարի մեջ, վոր յերեկ եր առել մի կոպեկով... Մի փոքր մտածելով՝ նա թաթախեց գրիչն ու գրեց հասցեն.

ԴԵՊԻ ԳՅՈՒՂ. ՊԱՊԻՍ

Հետո միտք արեց ու ավելացրեց՝ «Կոնստանտին Մակարիչին»:

Գոհ լինելով, վոր իրեն չխանգարեցին գրել, նա գրեց գդակը և առանց մուշտակի, ուղղակի շապկանց դուրս վազեց փողոց...

Մսի խանութի ծառայողները, վորոնց նա հարցրել եր նախընթաց որը, ասել եյին նրան, վոր նամակները գցում են փոստի արկղները, իսկ արկղներից ցրվում են ամբողջ աշխարհը փոստային կառքերով, վորոնք քշում են հարբած կառապանները և վորոնք ունեն զրնգուն զանգակներ: Վանկան վազեվազ մոտեցավ առաջին փոստարկղին և գցեց Թանկագին նամակը արկղի մեջ...

Քաղցր հուշերով տարված՝ նա մի ժամ հետո պլնդ քնած եր... Նա յերազում տեսավ վառարան։ Վառարանի վրա նստած է պապը, բոբիկ վոտքերը կախած ներքև և կարդում է Վանկայի նամակը... Վառարանի մոտ ման է գալիս շունն ու խաղացնում պոչը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խժռել — ագահաբար ուտել։
2. Սրվակ — փոքրիկ չիչ։
3. Արտացոլում — առարկայի պատկերը բեալը։
4. Անգարակ — մշակված անտառեր հողատաս։
5. Հյուս — ճյունի մեծ գունդ։
6. Դայիշ — գոտի (կաշվե)։
7. Ծխամոքն — ծխելու փող, ատան (մուշտուկ, չիբուխ)։
8. Գարմոն — յերաժշտ. գործիք՝ ստեղներով (կլավիշ)։
9. Նախընթաց — նախորդ, անցյալ։

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ եր Վանկան, վո՞ր տեղ եր ապրում նա և վո՞ր տեղ՝ նրա պապը։
2. Ինչպե՞ս եյին վարվում Վանկայի հետ քաղաքում. ո՞ւմ եր կարոտել նա։
3. Նամակն ուղարկելուց հետո Վանկան ինչո՞ւ հանդիստ քնեց։
4. Ի՞նչ կգրեր Վանկան իր պապին, յեթե նա այժմ սովորելիս լիներ մեր քաղաքներից մեկի դպրոցում։

---

1. Պատմեցեք «Վանկայի կյանքը քաղաքում»։
2. Գրեցեք, թե ինչ պատասխան կգրեր պապը Վանկայինց, յեթե նրա նամակն ստանար։

---

14. ՀԵՐՈՍ ՄԱՆՈՒԿԸ

Գիտե՞ք ով է
Մեր Պավլիկը
Ուզեցի...
Նա մի ագնիվ
Պիոներ եր
Խելացի.
Հայրենասեր,
Ուշիմ, զգաստ,
Կարգապահ,
Ամբողջ տարին
Զուներ վոչ մի
Բացակա։
Ուներ նա միշտ
Տետրակներում
Զորս ու հինգ,
Նկարում եր
Ու գրում եր
Գեղեցիկ։

Գիտե՞ք ով եր
Մեր Պավլիկը
Մորոզով,
Վոր ջոկատում
Աշխատում եր
Ցեռանդով.

Վոր հեռավոր
Տայգաներում
Սիբիրի
Կուլակների
Դեմ եր յելել
Պայքարի.
Վոր իր ագնիվ
Մատաղ կյանքը
Թանկագին
Զոհաբերեց
Սոցիալիզմի
Սուրբ գործին։

Անց կկենան
Հազարավոր
Տարիներ,
Մինչ կտան
Նրա դեմքին
Անվեհեր,
Ու կպատմեն.
Ցեղել է մի
Պիոներ,
Վոր իր կյանքը
Սոցիալիզմին
Ե տվել...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տայգա — հյուսիսում խիտ անտառ։
2. Զգաստ — ուշադիր, աչքուն։

---

15. ԱՐՋԸ

1

Ձմեռը մոռացել էր. մենք դեռ վառելիք չունեցինք: Մայրս շարունակ ասում էր.

— Ա՛յ Սերոբ, ձմեռը յեկավ, ճար արա:

Աշունքվա մի ցուրտ որ, դեռ լույսը չբացված, վեր կացա, կացինը դռտիս խրեցի, գնացի անտառ:

Գնացի մոտ ծմակն ու հասա մի չորացած ծառի, որը վաղուց աչքաղրել եյի: Առաջ դեռ մի քանի չորը փետ, ցախ հավաքեցի, հետո էլ կացինն առա ու սկսեցի այդ չորացած ծառը կտրել՝ թըխկ-հա-թըխկ, թըխկ-հա-թըխկ...

Կտրում եմ եսպես՝ քսի ու քրտինք մոտած: Հանկարծ եդ թունդ ժամանակը մեկը սուս ու փուս փաթաթվում է մեջքիս ու յետ քաշում ինձ: Ինձ հետ միասին փայտ կտրելու եյին դալու մեր մի քանի կոլտնտեսականները: Կարծեցի՝ ինձ փաթաթողն ընկերը ա— կատակ է անում: Բայց ես վոնց յեղավ, որը ձայնը չլսեցի: Մեկ էլ մոտածում եմ՝ ինչո՞ւ յե եսպես մեջքս բռնել ու ձայն չի հանում: Զարմանալի յեր... Բայց մեկ էլ աչքս ցած դցեմ— ի՞նչ տեսնեմ... մեջքովս պատ ավածը մարդու ձեռներ չեն...

Արջի թաթե՞ր...

Ես անգամ ջանս դող ընկավ: Վո՞նց թե, իմ մահն էլ արջով պիտի լինե՞ր,— մոտածում եմ ու ահից չեմ իմանում՝ ինչ անեմ. շարժվեմ— ավելի վատ, չշարժվեմ— մինչև յե՞րբ: Արջի շունչն արդեն ուսս տաքացնում էր: Լսել եյի, որ արջը կենդանի մարդ չի ուտում.— թաղում— հոտեցնում և հետո յե ուտում. ուրեմն, ասում եմ, դեռ հույս կա: Մեկ էլ մոտածում եմ— իսկույն չի ուտի, բայց յեթե հակառակեմ, կարող է կծատել, կարող է ջարդել... Ու փայտացել եմ հացինը ձեռիս...



2

Մեկ էլ վոր յետ չնայեցի— տեսնեմ սա բերանը բաց ինձ է նայում. ահագին բերանը վոր տեսա, ավելի վախեցա: Ի՞նչ անեմ, մոտածում եմ— սուտ մեռած ձևանամ... Մեկ էլ, վոնց վոր մեկն ասի,— ելի ի՞նչ ես սպասում, հնար ունես՝ տես: Մի տոքս հանկարծ մի բան ընկավ. կացնի կոթը կամաց տարա դեպի ուսս և ուժով խրեցի բերանը... առաջ դեռ կամաց, վախենալով, ինքս էլ չիմացա վոնց, հետո մի անգամից հուպ տվի — արջը ղլղլացրեց ու մեջքս թողեց: Յես ինձ դցեցի ցած. մեկ էլ վոր յետ նայեցի, տեսնեմ դա յետի թաթերի վրա կանգնել է՝ դունչը վեր տնկած, կացինը բերանում... դաղազած նայում է ինձ. ուզում է վրա պրծնի, բայց չի կարողանում կըռանա, կացնի ահագին կոթը խրվել էր կոկորդը, վիզը չեր կարում կռացնի. մենակ են եր անում, վոր գըլուխը տարուբերում էր, վորպեսզի կացինը բերանից դուրս հաներ, բայց կացինը դուրս չեր դալիս...

Մի քանի բոպե նա ինձ ետ նայում, յես՝ նրանց Հետո վոտքենց դուռալ ու դեպի ինձ դալ։ յես վախից ծառի յետևն անցա։ Բայց եդ ել զուր ետ։ արջը մի յերկու վոտ փոխեց յետևի վոտներով ու ելի կանգնեց, դլուխը թափահարեց։ Ինչպես յերևում է՝ կացինը շատ ետ նեղում... եդ վոր տեսա, սրտապնդվեցի։ Մի փայտ վերցրի ու առ հա քեզ — ավի դրա դլխին... Բայց նա, կացինը բերանին, դունչը վեր տնկած, յեկավ դեպի ինձ։ Հետո նորից ղղլացրեց ու կանգնեց, դլուխը թափահարեց։

Յես կրկին վերցրի փայտը, վոր խփեմ։ նա իրեն դցեց ցած, դլորվեց։ Դլորվեց մի քիչ տեղ ու նորից կանգնեց, թաթով կացինը բռնեց։ Շարժում է մին դես, մին դեն։ Զեղավ։ դուրս չեկավ, շատ ետ պինդ ու խոր։

Յես հեռու, ծառի յետևը կանգնած՝ նայում եմ ու ինքս ինձ ծիծաղում։

— Ա՛յ, քեզ,— ասում եմ,—ուզում եյիր ինձ ուտե՞լ։ հիմի կե՛ր...

Մեկ ել մոտածեցի, թե լա՛վ, յես ազատվեցի, հապա կացի՞նս։ ինչո՞վ պիտի փայտ կտրեմ։

Առանց յերկար մոտածելու՝ վազեցի տուն, տանից հրացանս տարա ու արջին տեղն ու տեղը...

Մորթին բերի տուն։

Իսկ կացինը... մեծ չարչարանքով հանեցի արջի բերանից...

---

16. ՁԱՐԻ ՎԵՐՋԸ

Լինում է մի սար,
Են սարում մի ծառ,
Են ծառում փչակ,
Փչակում մի բուն,

Բնում յերեք ձագ,
Ու վրեն կկուն։
— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուները,
Ցե՞ր պիտի դուք առնեք թևեր,

Թռչեք, գնաք,
Ուրախանաք...

Ցերգում եր մարիկ կկուն։
Մին ել ըհը՛, Աղվեսն յեկավ։

— Ես սարը իմն է,
Ես ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում մի բուն,
Ես ո՞վ է յեկել
Տիրացել թաքուն։

Ա՛խ դու կկու, հիմա՛ր կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Յերեք հատ ձագ, ապա Աղվես։
— Յերեք հատ ձա՛գ ցույց կտամ քեզ։
Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղրկես ինձ մոտ։
Զգի՛ շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...

— Վա՛յ, չկտրես,
Հոգիդ սիրես,
Ես մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե եղպես
Մի՛ ջնջիլ մեզ
Բնով, տեղով,
Ամբողջ ցեղով։

Խնդրեց մարիկ կկուն ու ձագերից մինը ձգեց նրանց։ Աղվեսը հա՛փ, առավ գնաց։

— Վա՛յ-վա՛յ, դո՛ւ-դո՛ւ,
Իմ լավ կուկու,
Վո՞ր սև սարում,
Վո՞ր անտառում,
Վո՞ր թփի տակ
Կորար մենակ...
— Վա՛յ-վա՛յ, դո՛ւ-դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց եր լինում մարիկ կկուն, մին ել, ըհը,
Աղվեսը հետ յեկավ։
— Ես սարը իմն է,
Ես ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում մի բուն,
Ես ո՞վ է յեկել
Տիրացել թաքուն։
Ա՛խ դու կկու, հիմա՛ր կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Յերկու հատ ձագ, ապա Աղվես։
— Յերկու հատ ձա՛գ ցույց կտամ քեզ։
Ա՛խ, չարամիտ դու ավազակ,
Ի՞նչ ասել է, յերկո՛ւ հատ ձագ,
Ի՞նչ, ուզում ես եստեղ զոռով
Լցնես ամբողջ կկուներո՞վ...
Զգի՛ շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
— Վա՛յ, չկտրես,
Հոգի՛դ սիրես,
Ես ել առ տար,
Ու թող գազար՝
Վերջի՛նը դեթ
Մնա ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կկուն ու յերկրորդ ձագն էլ ճղեց ներքև: Աղվեսը հա՛փ, ես էլ առավ ու գնաց։

— Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,
Ընչի համար
Յեկա ես սար,
Բուն չինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն յեկավ,
Տարավ կերավ,
Յերկու, յերկու,
Կուկու... կուկու...
Լաց եր լինում մարիկ Կկուն:

Ես մի ջոցին—դա՛, դա՛, դա՛... Աղռավն անց եր կենում են կոչմերով:

Լսեց Կկուի լացի ձայնը:
— Եղպես տխուր ու զարհուրիկ,
Ի՞նչ ես լալիս, Կկու քուրիկ:
— Ինչպե՞ս չլամ, ա՛յ սանամեր.
Աղվեսն յեկավ են սրտամեռ,
Գլխիս եսպես փորձանք բերավ,
Ձագուկներս տարավ կերավ:
— Վո՛ւյ, իմ աչքին, պնխելք Կկու,
Ի՞նչպես խղուր խաբվել ես դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի:
Վո՞նց թե սարը իմն է՝ կասի:
Ո՞վ է տվել եդ լրբին սար.
Սատն ամենքիս է հավասար...
Ո՞վ կթողնի վեր կենա նա՝
Սմբողջ սարին դա տիրանա,
Անունը տա սրած կացնի,
Սրան, նրան սուտ վախեցնի,
Ու մինն եսոր, մյուսը յերեկ,
Ձագեր տանի, ուտի՛ մեկ-մեկ...
Սև գրողի են տարածին
Ո՞վ է տվել սրած կացին:
Մին էլ վոր դա ու սպառնա,
Մի՛ վախենա, քչի գնա:
Եսպես ասավ Աղռավն ու թռավ գնաց:
Ահա կրկին Աղվեսն յեկավ:
— Ես սարը իմն է,
Ես ծառը իմն է...
Հազիվ եր ասել, Կկուն ընկեց գլուխը հանեց:
— Սուտ ես ասում, դու խաբեբա՛,
Անխիղճ գազան, անկուշտ, ագահ,
Ո՞վ է տվել եստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է հավասար:
Ի՞նչ ես յեկել սուտ տեր դարձել,
Ցես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Ձագուկներս տվել եմ քեզ...
Կորի՛, գնա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան սուտ ես ասել,
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ,
Կացին չունես՝ ծառը կտրես:
— Ո՞վ ասավ քեզ:
— Աղռավն ասավ:
— Աղռա՞վը. լա՛վ:

Ու Աղռավի վրա բարկացած՝ Աղվեսը պոչը քաշեց, հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տեղավ, վեր ընկավ, իբրև թե սատկել է: Աղռավն էլ կարծեց, իրավ սատկել է. թռավ, յեկավ վրան իջավ, վոր աչքերը հանի, Աղվեսը հա՛փ, հանկարծ բռնեց։

— Դա՛-դա՛, դա՛-դա՛,
Աղվես ագա...
— Ա՛յ դու կռռվան չարալեզու,
Վանց թե Կկուին ասել ես դու,

Թե յես կացին չունեմ սրած...
Կացին չունե՞մ... դե հիմի կաց...
— Վա՛յ, քեզ մեղա,
Աղվես աղա,
Յես եմ ասել, չեմ ուրանում,
Ինձ քրքրիր, ինձ կեր հում-հում.
Տուր ինչ պատիժ սիրտդ կուզի,
Բայց մի վերջին խոսքս լսի:
Յես են տարում, հենց դեմ ու դեմ,
Ենպես մի թանգ պահուստ ունեմ,
Վոր չես գտնի դու քո որում
Վոչ մի թառում կամ անտառում:
Ինչի՞ համար են ահագին
Գանձը կորչի հողի տակին:
Աբի գնանք, հանեմ տամ քեզ,
Ենքան ուտե՞ս, ենքան ուտե՞ս...
Թե չլինի ու սուտ դուրս գամ,
Յես հո եստեղ միշտ կամ ու կամ...

— Գնանք,— ասավ Աղվեսը: Թե կլինի, շատ լավ, թե չի լինի, ելի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ագռավը նկատել եր, վոր մի թփում պառկած եր գյուղացու շունը: Աղվեսին տարավ, տարավ դուրս բերավ ուղիղ են թփի վրա:

— Ա՛յ, ասեց. ես թփում ե իմ պահուստը:

Աղվեսն ոտահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:

Աղվեսը խեղդվելով սկսեց խոխռալ.
Ա՛խ, յես... ա՛խ, յես...
Զգուշ աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ եսպե՞ս...

Ա՜խ, անիրավ
Դու սև ագռավ...
— Ինչքան ել վոր լինես զգուշ,
Զարի համար թե վաղ, թե ուշ,
Եղ ե պահված, Աղվես աղա,
Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛...
Պատասխանեց Ագռավն ու թռավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գեր — գոնե:
2. Զարհուրիկ — զարհուրած, սոսկալի վախեցած:
3. Պահուստ — պահած բան:

17. ԳԵՂԸ

Ծիրան անունով մի յեղն ունեյինք: Մի ձմեռ ես յեղը կորավ: Ախպերս ինձ ղրկեց ման գալու: Ցես եվ եսպես 16—17 տարեկան ջահել տղա յեմ: Գնացի գեղի չորս կողմը ման յեկա, ման, չգտա: Գոմահանդ ունենք, ենքան մեծ գեղիցը հեռու չի: Ասի՝ յեղը սովոր է, կարելի յե եդ կողմն է գնացել: Գնացի եդ գոմահանդը: Գնացի, ես գոմը նայեցի, են գոմը նայեցի, վերջը տեսնեմ, վոր յեղը մի գոմում է: Ցեղը դուրս արի: Դուրս գամ՝ տեսնեմ՝ արդեն մութն ընկնելու վրա յե: Սիրտս մի ահ ընկավ: Տեսնում եմ, վոր լուսով չեմ կարող գեղը հասնել: Մտածում եմ՝ գնա՞մ-չգնամ:

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ոմայի ձյունապատ դաշտ, - չեն չկա, ձեն չկա. ձեռիս եվ մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք է անեմ: Ցեղն առալս արի, քշեցի: Մի քիչ տեղ անց եյի կացել. հանկարծ իրիկվան դառը քամու հետ մի տխուր ձայն ընկավ ականջովս: Կանգնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գելի վոռնոց է. ո՛ւ, ո՛ւ...

Ես վոռնոցին միացավ մի ամբողջ խումբ: Սարատիով լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ վոր աջ կողմս, հեռվում, մթան մեջ վառված ճրագների մի բազմություն է շարժվում... Եվ ի՞նչ. ձեռաց հասկացա, վոր գելերի աչքերն են՝ սոված բոլուկ է...

Ցեղը յետ ավի գեպի գոմերն ու քշո՛ւմ եմ, վոնց եմ քշում. վազում եմ, վո՛նց եմ վազում... Ցետ նայեմ, վոր արդեն գալիս են: Ցեղը թողի, փախա, ընկա գոմը: Ընկա գոմը, բարձրացա... տների գերանների միջև դատարկ տեղեր են լինում, վոր կոչվում է կոնդ:

Եդ կոնդերից մեկին վեր յելա: Դեռ չեյի տեղավորվել, մին եվ տեսնեմ յեղանս գոռոցը բարձրացավ: Զարմանք բան է, թե ենքան տարածությունը մի յերկու բոպեյում վոնց կտրեցին ու հասան:

Յեղանս գոռոցը բարձրացավ ու խսկույն եվ կըտրեց, խռխռոցն ընկավ: Խռխռոցն եվ կտրվեց, միայն գելերի ժընգժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ վոնց են լափում...

— Վա՛յ, Ծիրան ջան... դուրս թռավ սրտից:

Բայց ի՞նչ Ծիրանի ժամանակն է: Ցես իմ գլուխն եմ լաց ըլում: Մտածում եմ թե՝ ես լավ եր, յեղնովը կըլեն, մինչև կլուսանա, կամ կկչտանան ու կգնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնի... Դու մի ասիլ՝ սոված գելի բոլուկ, յես հիսուն ասեմ, դու հարյուր իմացի. ձեռաց հախռել են ու մին եվ տեսնեմ, մութը գոմը լցվեցին են վառած ճրագները, ռեխները բաց արած...

Գտան...

Ցեկել են—լցվել, ներքևից ադահ—ադահ ինձ են մտիկ անում:

Ցես եվ չորացել եմ, մնացել վերևը՝ գերանին կպած: Մտիկ արին, մտիկ, ու թողին դուրս գնացին:

Շունչս յետ յեկավ: Մին եվ ի՞նչ եմ լսում:

Իմ ուղղությամբ վերևից կոուրը քանդում են, չանգերով հողը յետ են տալիս: Արդեն լսում եմ՝ չանգերը կոնդերին են կպչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի՝ տեղս փոխեցի, անցկացա մյուս կոնդի վրա, կուչ յեկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չը կամ:

Ելի յեկան ներքև: Մտիկ արին, վոր մյուս կոնդի վրա յեմ, ելի դուրս գնացին: Հիմա ես կոնդի վերևից սկսեցին քանդել կտուրը:



Դարձյալ տեղս վոխեցի: Եսպես՝ նրանք քանդելով, յես տեղս փոխելով, հասանք վերջին կոնդին:

Եվ ո՞ւր գնամ:

Յեկան, մտիկ արին կատաղած ու յետ գնացին: Քանդում են, վո՞նց են քանդում...

Մի սուր դանակ ունեյի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնեցի:

Իսկ հենց ականջիս վերևը քանդում են: Քանդելով, հասան կոճերին: Մինը կոճերի արանքով թաթը մեկնեց, վոր կոճը յետ քաշի, թաթը բռնեցի ու են սուր դանակովը, ղ՚ըթ, կտրեցի... Թաթը փախցրեց, վոռնալով, կոնծկոնծալով յետ գնաց ու կարի վրա իրարով անցան: Իմացել եյի, վոր գելերի մինը յեթե վիրավորվեց, մյուսները վրա յեն թափվում,

նրան ուտում: Ասի՝ ուրեմն սրան ուտում են: Հիմի սպասում եմ, վոր սրան ուտեն պրծնեն, յետ կդան: Ելի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

3

Ականջս ձենի յե: Դիշերվա մի ժամին՝ վոնց վոր յերազում՝ մի բարակ ձեն եմ լսում:

— Ավ, հե՛յ...

Ինձ են կանչում...

Մի՞թե ինձ են կանչում... Մի՞թե ախպերս ե!.. Մի՞թե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոռում եմ:— Աղանիկ, հե՛յ... Եստեղ եմ... Գոմումն եմ, գելերն ինձ ուտում են... Ողնեցեք, հե՛յ...

Ելի նրանք ձեն են տալիս, իմ ձենը չեն լսում, թեև յես շարունակ կանչում եմ:

Մին ել տեսնեմ հրացանները տարաբեցին, յեսևից լսեցի հեռացող գելերի կաղկանձն ու մարդկանց հաբահրոցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը:

— Ավ, հե՛յ...

— Եստե՛ղ եմ... Եստե՛ղ եմ... Կենդանի յեմ...

Ներս թափվեցին գոմը: Ուրախացած ու զարմացած կանչում եյին ամենքը: Ցած յեկա վերջին կոնդի վրայից: Ախպորս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

Դուրս յեկանք գուռը, ուր թափված եյին մեր Ծիրան յեզան վոսկորները:

Դեռ լույսը չեր բացվել:

Հեռվից լսվում եր գելերի վոռնոցը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գոմահանդ—ձմեռը կամ աշնանն անասունները պահելու տեղ՝ պրոտավայրում:

2· Ամայի — անմարդաբնակ:
3· Բոլուկ — դայլերի խումբ, վոհմակ:
4 Կոնդ — գերան:
5· Հախտել — միանգամից արագ ուռել:
6· Կաղկանձ — գազանների վոռնոց, հաչոց:

18· ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Երկու ընկերներ խրախճանքահին
Հրացան առած՝ անտառ գնացին,
Վոր մեկ բան վորսան.
Շուտով հետ դառան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ
Ու կատաղությամբ նրանց վրա վազեց.
Մեկն չտատալով ծառը բարձրացավ,
Մյուսն անճարացած՝ գետնի վրա պառկեց

Շունչն իրեն քաշեց
Ու անշարժ մնաց,
Վոր արջը կարծե,
Թե նա մեռած է:

Արջը մոտալով՝ մոտեցավ նրան,
Ականջը կամաց դրավ բերանի վրան.
Ականջը դրեց
Հոտ քաշեց,

Գերջապես նրան մեռած կարծելով,
Հեռացավ գնաց՝ դունչը լվալով:
Փախած ընկերը ծառից իջավ ցած,
Ընկերին հարցրեց, թե արջն ի՞նչ ասաց:
— Արջն ինձ պատվիրեց, վոր յես մյուս անգամ
Քեզ պես մարդու հետ վորսի չգնամ,
Վոր մեզ մի վտանգ, բան պատահելիս՝
Մենակ չթողնես ու ինքդ փախչիս:

---

19. ՀԵՐՈՍ ՏՂԱՆ

1

Մի քանի որ անդադար անձրև եր գալիս։ Փոքրիկ վտակները մի-մի հեղեղ եյին դարձել ու կատաղած ցած եյին գլորվում լեռների վրայից։ Ճորերն ու կիրճերը դղրդում եյին։

Յերկաթուղու գծի մոտ գտնվող մի տնակում խաղում եյին չորս տղա, բոլորն ել գրեթե իրար հասակակից։

— Դե՛հ, Սաքո՛,— կանչեց նրանցից մեկը,—յեթե քաջ տղա յես, կանգնիր յերկաթուղու վրա։ Շուտով անցնելու յե արագ գնացքը։

— Ինչո՞ւ կանգնեմ,— պատասխանեց Սաքոն,— բան ու գործս կորե՞լ է։

— Ի՛, վախկոտ, պարծենում ես, թե ամենքից քաջն ես։

Յեվ յերեք ընկերներն սկսեցին ծաղրել Սաքոյին, բայց նա վոչինչ չեր պատասխանում։ Մի փոքր հետո նրանք դուրս թռան սենյակից՝ նայելու, թե ինչպես կանցնի արագ գնացքը, իսկ Սաքոն նրանց հետևից ձայն տվեց։

— Ավելի լավ է տանը մնաք, անձրևի տակ դուրս տեղն ի՞նչ եք թրջվում։

Հանկարծ սարսափելի աղաղակներ լսվեցին։

— Սաքո՛, Սաքո՛։

Տղան դուրս վազեց։ Նա իսկույն նկատեց, վոր մոտակա կամուրջը քանդվել է։ Իսկ գնացքը հենց այն է՝ պիտի գար ու վրայովն անցներ։

— Կգլորվի, անպատճառ անդունդը կգլորվի։

Բոլորի սրտերը սաստիկ բաբախում եյին։

— Պետք է շուտով մի հնար գտնենք գնացքը փրկելու,— կանչեց Սաքոն։—Ինչքա՞ն ժամանակում կարելի յե կայարան հասնել։

Կես ժամում։ այստեղից կարճ ճամփով չորս կիլոմետր կլինի։

— Ձի՞ կարելի ձի ճարել։

— Ջրաղացպան Գիքորն ունի, բայց մինչև Ջրաղացը բավական հեռու յե։

— Հոգե՛վ, վազի գեպի Ջրաղացը և փորձիր մի կերպ կայարան հասնել գնացքի դուրս գալուց առաջ։ Արմենա՛կ, դու ել շտապիր գծի ճամփով, գուցե կարողանաս պահապանին իմաց տալ, վոր գնացքը կանգնեցնի։ Իսկ յես ու Աշոտը կմնանք այստեղ։ Յեթե գուցե բան չանենք, մենք կաշխատենք կանգնեցնել գնացքը։

2

— Վազուց է՝ այսպիսի հեղեղ չեմ տեսել,— ասում եր մեքենավարը։

— Յես ել,— պատասխանեց ոգնականը,— տե՛ս, սարերից ինչ հեղեղներ են թափվում։

Գնացքը վչչալով ոձի պես, արագ սողում եր կատաղած գետի ափով։

— Առա՛ջ նայիր,— կանչեց մեքենավարը,— աչքդ ի՞նչ պիտի լինի։

— Յերկու յերեխա։ Ժամանակ չունել գծերի վրա խաղալու։ Սուլի՛ր, վոր հեռանան,— պատասխանեց ոգնականը։

Մեքենան սուլեց։ Արձագանքը խուլ կրկնվեց ճորերի պատույտների մեջ։

Ճամփին կանգնած եյին տղաները։ պարզ եր, վոր ոպասում եյին գնացքին։ Մեկը թաշկինակը թափ եր տալիս ավելի և ավելի ուժով։

— Ելի՛ սուլիր, ելի՛ սուլիր։

Անհանգիստ սուլոցները կրկնվում եյին։ Տղանե-

րից մեկը վախած, իսկ մյուսը կանգնած եր ուղիղ յերկու գծերի մեջտեղն ու շարունակում եր թաշկինակը թափ տալ։

Մեքենավարն ու ոգնականն ամեն կերպ աշխատում եյին գնացքը կանգնեցնել։

Միմիայն մի հարյուր, հարյուր քսան քայլ եր բաժանում յերեխային գնացքից։

«Արդյոք յերեխան պիտի փրկվի՞»,—մտածում եր մեքենավարը։

3

Գնացքն իր թափից դեռ առաջ եր մղվում և ավելի ու ավելի մոտենում յերեխային։ Անդադար սուլոցները վախեցրել եյին ուղևորներին։ Բոլորն ելատափահար խռնվում եյին դեպի դռներն ու պատուհանները։ «Ի՞նչ է պատահել»,— հարցնում եյին միմյանց։

Միայն մի քսան քայլ եր բաժանում աղջկին մահից, միայն տասը քայլ... Գնացքը կանգ առավ աղջկից յերկու-յերեք քայլ հեռու։ Հանկարծ մեքենավարի և ոգնականի կրծքից ուրախության մի բարձր ճիչ դուրս թռավ։

Մեքենավարն անմիջապես դուրս թռավ և գայթացած աղաղակեց.

— Այ աղա... դենը կորի՛ր։

Տղան խելագարի պես վեր թռավ և ցույց տալով դեպի կամուրջն՝ ասաց.

— Քանդվել է... Ու իսկույն ուժասպառ ընկավ գետին։

Ուղևորները դուրս թափվեցին վագոններից ու վազում եյին դեպի մեքենավարը՝ աղաղակելով.

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել։

— Կամուրջը քանդվել է, ահա մեզ ապատոգը,— կանչեց մեքենավարը հուզված։

Ու բազմությունը խռնվեց Սաքոյի գլխին...

Վերևից անձրևը շարունակ թափվում եր և լեռնային հեղեղը դղրդալով վիժում եր ցած, դեպի վերերած ու կատաղած գետը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Վտակ — մեծ գետի մեջ թափվող փոքր գետակ։
2. Ուղևոր —ճանապարհորդ։
3. Բազմություն — մարդկանց մեծ խումբ։
4. Խռնվել — հավաքվել իրար գլխի։
5. Վիժել — արագ թափվել։



20. ԲԵՎԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐ

(Պապանինականների որագրից)

Խաղաղ օրերն անցան... Նորից սկսվեց բուքը: Հանդիպակաց քամին ծակում է յերեսները: Առաջ շարժվելը շատ դժվար է: Սայթաքելով դեպի տուն ենք գնում: Գործ մշուշի միջով վոչինչ չենք տեսնում: Յերևի մենք կմոլորվեյինք, յեթե հոգատար Դմիտրիևիչը սառույցի ճեղքից մինչև մեր վրանը չանցկացներ մեկ կիլոմետրանոց պարանը:

Մեկ անգամ բուքին Պապանինն ու Կրենկելն անցան դեպի ճեղքը՝ նայելու — արդյոք վտանգ չի սպառնում մեզ: Բուքը քանի գնում՝ ավելի յեր սաստկանում: Գրպանի ելեկտրոլապտերներն անզոր եյին թափանցելու ձյունի թանձր շերտերը, վոր գալարվում եյին մեր շուրջը: Գնում եյին յերկու ընկերներն ու տեղ չեյին հասնում — վրանը չկար ու չկար: Ահա այդ դեպքից հետո Իվան Դմիտրիևիչն անցկացրեց «ճարոլեյբուսի գիծը» (պարանը):

... Կրենկելն սպասում է մեզ՝ տաք թեյն ու հեռագրերը պատրաստ: Յես նայում եմ մի կապ հեռագրերը ու հանձնելով ծծում եմ տաք թեյը:

Ապա շտապում եմ անկողին: Քնում ենք «մաս-մաս»: Վեց ժամ մինչև ճաշը, ապա մինչև «վերջին լուրերը» և, վերջապես, մինչև առավոտ:

Զարթնելով՝ յես գնում եմ իմ լաբորատորիան— այսինքն՝ յերեք քայլ անկողնից այն կողմը: Այստեղ յես բազմաթիվ անոթներ ունեմ Սառուցյալ օվկիանոսի խորքերից վերցրած ջրերի նմուշներով: Պետք է տեսակավորել, կարդի բերել ջրերը, դրանցել մատյանում:

... Ժամանակն անցնում է շատ արագ: Ընկերները ուրախ-ուրախ մտնում են իրենց պարկերը՝ քնելու: Իսկ յես դեռ ևս իմ ջրերով եմ զբաղված:

Վերջապես յես ել մտնում եմ իմ պարկը: Իսկ Վրանից դուրս վոռնում է քամին: Բուքն ելի ուժեղանում է:

Վերջապես քնում եմ... Զարթնելով դուրս եմ նայում իմ պարկից: Ֆեոդորովի գլխավերևում մեղմ բարձրանում է նրա շնչառությունից առաջացած գոլորշին: Ժենյան պլինդ քնած է: Վոչ մի բուք չի կարող նրան արթնացնել: Իսկ Պապանինն արթուն է: Նա շուռ ու մուռ է գալիս, տաքանում է, հոգոց հանում: Աչքի տակով նայում եմ Երնեստ Կրենկելին: Նա հակված է իր սեղանին և ճանապարհորդում է յեթերի վրայով (ռադիոյի միջոցով):

— Երնեստ...—կամացուկ ձայն է տալիս Պապանինը, վախենալով զարթեցնել Ֆեոդորովին:

Կրենկելը չի լսում այդ շշնջյունը: Ապա միայն դառնալով դեպի Պապանինը՝ սիրալիր հարցնում է կամացուկ.

— Ինչո՞ւ չես քնում, Իվան Դմիտրիևիչ:

— Քունս չի տանում... մտածում եմ շարունակ:

Վաղն—ընտրությունները են: Դու միայն փորձիր դիտակցել. մեր ճմեռանոցի բնակչությունը հարյուր տոկոսով Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ են...

Ցեվ դեռ յերկար ժամանակ լսվում է խոսակցությունը՝ մեզ—չորսիս վիճակված մեծ պատվի մասին:

Կամացուկ նայում եմ ժամացույցին: Սլաքը ցույց տալիս ժամը վեցը: Այդ— դեկտեմբերի 12-ին է, ժամը 6-ը:

Ընթրությունները սկսվել են:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տրոլեյբուս — տրամվայ -առանց ռելսերի:
2. Անոթ — սման:
3. Լաբորատորիա—աշխատանոց (դիտական):
4. Տեսակավորել— տեսակների բաժանել:

---

21. ՐԵՎԵՌԻ ԱՌՈՒՄԸ

Լույսը բացվեց յերկրի վրա,
Արեվ ծագեց վոսկեզրահ,
Արար-աշխարհ դորձի յելան:
Առու, աղբյուր կցոլցոլան...
Բայց բեվեռում
Հողմն է գոռում,—
Շուրջն ամայի ափեր մեռած,
Սառցալեռներ, ծովեր սառած:
Ու հեռագիր յեկավ սիրով՝
— «Գրավված է բեվեռը ծով,
Մեծ ՍՏԱԼԻՆ, մեզ հետ ես միշտ,
Մենք հպարտ ենք, հավետ անվիշտ,
Ցեվ բեվեռի ցուրտ դագաթին
Զարկինք մեր ալ-դրոշն անդին,
Վոր փողփողա նա շարունակ՝
Աշխարհն առած իր շուքի տակ»:
Ու յերկրի հետ չքնաղ ու վես
Կարդաց, ժպտաց արևի պես
Առաջնորդը մեր լուսախոհ,
Վորից անդամ արեվն է գոհ:
Համբավն հասավ ամենուրեք՝
Ծովերից ծով աշխարհ անցավ,
Թե մեր դրոշն ալ-վառ ու սեղ
Ցուրտ բեվեռից վե՛ր խոյացավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Վոսկեզրահ—վոսկե զրահ հագած:
2. Ամայի—անկյանք, անբնակ:
3. Հավետ— հավիտյան, ընդմիշտ:
4. Փողփողել—ծածանվել:
5. Վես—հպարտ, դեղեցիկ:
6. Լուսախոհ— լուսավոր մտքերով (հանճարեղ):
7. Համբավ—լուր, տեղեկություն:
8. Սեզ—հպարտ:
9. Խոյանալ—ծառանալ, վեր բարձրանալ:

---

22. ՑԵՐԻՏԱՍԱՐԴ ՔԱՂԱՔԱՑԻՆ

1

Զմռան մի գիշեր մեր քաղաքում հրդեհ պատահեց: Վառվում եր քաղաքի հինգ հարկանի բնակելի շենքը:

Հրդեհն սկսվելով յերրորդ հարկից՝ արագ կերպով սողաց դեպի վերևի ու ներքևի հարկերը և շուտով ամբողջ շենքը ծածկվեց ծխի վիթխարի քուլաներով:

Թվում եր, թե վառվում է մի ամբողջ քաղաք: Փրկարար աշխատանքները կատարելու համար հրդեհի

Վայրն էին հավաքվել մի քանի հրդեհաշեջ խմբեր, միլիցիայի ջոկատներ ու կարմիր բանակային մարտիկները: Արհամարհելով խեղդող ծուխն ու բոցերի հրաշեկ, լափող լեզուները, վճռական ու անվարան մտադրվում էին նրանք դեպի բոցավառվող լուսամուտները, կրակից դուրս բերելով խուճապահար մարդկանց:

Շատ չանցած՝ յերրորդ հարկի միջանցքներում փլվածքներ առաջացան:

Փակվեցին շենքի մուտքերը:

Փրկություն կարելի յեր հասցնել միայն լուսամուտներից: Յեվ վաթսուն վերելակներով արագորեն դեպի կրակներն էին սողում խիզախ հրդեհաշեջները, վորոնք ուշադրություն չդարձնելով սեփական մարմնի այրվածքներին՝ կրակի ճանկերից ազատում էին կանանց ու յերեխաներին:

2

Կրակն ամենից ավելի սպառնում եր հինգերորդ հարկի անկյունի լուսամուտին, վորի առաջ բոցերի մեջ մի յերիտասարդ կին, յերեխան կրծքին սեղմած՝ հուսահատական ճչոցով ողնություն եր կանչում: Դեպի այդ լուսամուտն արդեն յերրորդ անգամ մտադրել էին հրդեհաշեջները և յերեք յերեխա էին դուրս բերել: Զորրորդ անգամ, յերբ հրդեհաշեջը դեպի լուսամուտն եր մտադրվում, բոցերն արդեն սկսեցին լափել լուսամուտի չրջանակները և նետվել դեպի փայտե վերելակը: Լուսամուտի առաջ հրդեհաշեջը մի ակնթարթ կանգ առավ: Վերելակի յերկարությամբ սողացող կրակը մի պահ չվոթեցրեց նրան, սակայն նա չցանկանալով դատարկաձեռն ներքև իջնել, ճարպկությամբ լուսամուտից ներս ցատկեց: Ներքևից դեպի այրվող լուսամուտը, վերելակն ու հրդեհաշեջն էին

ուղղված ջրմուղ խողովակները, վորոնցից դուրս չպրված ջուրն անզոր եր կատեցնելու բոցերը:

Ներքևում հավաքված բազմությունը հինգերորդ հարկի անկյունի լուսամուտին հետևում եր շունչը պահած: Սոսկումի մի հառաչանք դուրս պրծավ բազմության միջից, յերբ վառվող վերելակը վերևի մասում կոտրվելով, խուլ շառաչյունով թեքվեց դեպի ձախ և աղմուկով դետին տապալվեց: Այդ բոպեին կրակի միջից յերևաց հրշեջը, կնոջ ու յերեխայի հետ միասին, բայց իր առջև վերելակ չտեսնելով՝ հուսահատ ընկավ լուսամուտի դոդը:

Նույն միջոցին ներքևում, միլիցիոներների ոգակը ճեղքելով, վառվող տանը մոտեցավ մի յերիտասարդ: Նա մի հայացքով չափեց դեպի տանիքը ձգվող ջրատար թիթեղյա խողովակը, հանդգնությամբ հանեց վերարկուն, մի անգամ ել նայեց դեպի վառվող լուսամուտը և ձեռքերը շփելով՝ հաստատուն քայլերով մոտեցավ խողովակին:

Մի բոպե հետո կարելի յեր տեսնել, թե ինչպես յերիտասարդն անասելի ճարպկությամբ ջրատար խողովակով դեպի հինգերորդ հարկի անկյունի լուսամուտն եր մտադրվում:

3

Յերիտասարդը նետվեց պատուհանից ներս և խիստ հայտնվեց լուսամուտի առաջ, ուշաթափ կնոջը գրկած: Ներքևում լուսամուտի տակ, յերեսուն մարտիկներ ոդի մեջ փռեցին բրեզենտի մի փոքրիկ հրապարակ: Յերիտասարդը արծվի աչքերով ներքև նայեց, դիտեց սպիտակ տարածությունը և ուշաթափ կնոջը վայր նետեց: Կնոջը վերցրին: Հետո նա արագությամբ վայր նետեց յերկու յերեխաներին և ուշաթափ հրդեհաշեջին:

Ժողովուրդը սարսափով նկատեց, վոր կրակն անցավ յերիտասարդին, պատուրեց նրան իր հրեղեն բոցերով և յերիտասարդի զգեստներն սկսեցին պայվել: Սակայն նա սառնասրտությամբ ու անվրդով կանգնեց լուսամուտում, ձեռքը դեպի ջրատար խողովակը մեկնեց, բռնեց ու սկսեց ներքև սահել: Խողովակով սահելով՝ ներքև իջավ, թևով սրբեց քրտնած ու մրոտ դեմքը և թույլ տվեց, վոր կապեն ձեռքերի այրվածքները: Հետո վերարկուն վերցնելով ուղում եր հեռանալ, յերբ հևիհև վազելով, նրան մոտեցավ մի ուրիշ յերիտասարդ:

—Ցեռ խնդրում եմ ինձ ասեք ձեր անուն-ազգանունը և զբաղմունքը:

— Ինչո՞ւ համար:

— Թերթում հրապարակելու:

— Ի՞նչը:

— Ձեր հերոսական վարմունքը:

— Այստեղ վոչ մի հերոսական բան չկար,—ժպտալով պատասխանեց յերիտասարդը:— Այդպես կվարվեր խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի: Ճիշտ այդպես եվ դրեցե՛ք: Ցտեսություն:

Իսկ կրակները շենքի շուրջը թռչում եյին վոխակալած ու չար:

Նրանք զոհեր չտարան, նրանք պարտված եյին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Արվարձան— քաղաքի ծայրամասային թաղ:
2. Անվարան—առանց վարանելու, տատանվելու:
3. Խուճապահար—խուճապի մատնված:
4. Կասեցնել—արգելել, դադարեցնել:
5. Բրեզենտ—խիտ, ամուր, ջուր չթափանցող կտոր:
6. Վոխակալած—վրեժխնդրությամբ լցված:
7. Ուշակորույս—ուշքը կորցրած:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսի հրդեհ ծագեց քաղաքում:
2. Ո՞ւմ եր սպառնում հրդեհը:
3. Ինչո՞ւ հրդեհաշեջը հուսահատվեց:
4. Ի՞նչպես «խորհրդային քաղաքացին» փրկեց կնոջն ու յերեխաներին:
5. Ի՞նչպես վերաբերվեցին ներկա յեղողները յերիտասարդին:
6. Ի՞նչպես եր նա դնահատում իր կատարած անձնվիրությունը:

---

23. ՀԻՆ ԶԻՆՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Քո հին զինվորից վողջույն, կոմիսա՛ր.
Արդեն լրացավ տասնևութ տարին,
Բաժանում են մեզ այ-քան դեռ ու սար,
Բայց չեմ մոռացել իմ կոմիսարին:

Քանևմեկ թվին... Հյունապատ, անծիր
Դաշտերն եմ, ահա՛, քամ առջև դիտում,—
Փոսի մեջ դրած մի հատ գնդացիր՝
Կանգնած եմ նորից Նորադավիթում:

Խավարն ե իջնում ձյան հետ միասին,
Ու պառկում եմ յես իմ նեղլիկ փոսում:
Անծայր տափարակ, վո՛չ աստղ, վո՛չ լուսին,
Քնաբեր քամի, ծանր ըսպասում:

Ցեվ, ասես, դեռևից թռչում եր հանկարծ
Թշնամին հեծյալ ու դոփում արագ:
Խուճապ ու նահանջ: Ցեռ փոսում պառկած
Իմ գնդացիրից բացում եմ կրակ:

Ճարճատում է նա: Պարզ լսում եմ յես
Զորս ամբակների դոփյունը վերջին.
Փախչում են նրանք, իսկ մերոնք անտես
Հասել են արդեն գյուղի կամրջին:

Գնդացիրն առած և անհավասար
Մարտ տալով բքին սողում եմ մինչ ծեգ,—
Ա՛խ, այդ գիշերը, ընկեր կոմխա՛ր,
Ուղեղիս մինչից չի ջնջվի յերբեք:

Այդ որից յերկար ամիսներ անցան,
Մենք մարտեր տեսանք ավելի դաժան.
Յես բերի ինձ հետ մի հին հրացան
Յեվ կրծքիս՝ կարմիր մի շքանշան:

Յեվ յերբ պետք լինեմ, հետ կգամ նորից.
Յես չեմ մոռացել գնդացիրն անգին:
Վաղվուն կոմխա՛ր, քո հին զինվորից,
Վոր պատրաստ է քո նոր հրահանգին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Անծիր—անսահման, անծայր:
2. Խունապ— չփոթություն, իրարանցում:
3. Դոփյուն—ձիերի վոտնաձայն:
4. Մարտ տալ—կռվել, պայքարել:

———

24. ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՈՒՍԱՆՈՎԸ

1

Սահմանապահ Ուսանովն իր մարտիկների հետ անցնում էր խիտ մացառների միջով:

— Սպասեցեք այստեղ, իսկ յես առաջ կանցնեմ,— ասաց նա ընկերներին:

Ու առաջ անցավ:

Գիմացի արահետը դեպի բլուրն էր տանում: Վոչ շատ չկար: Յերբ անցավ բլրի աջ կողմը, հանկարծ իրենից 6–7 քայլի վրա, թփուտների մեջ յերևաց ճապոնական մի սպա: Կպած էր հեռադիտակին, սպան ապահովությամբ զննում էր խորհրդային հարթավայրն ու ինչ-վոր նշաններ էր գծում իր ձեռքի տետրում:

Ուսանովն աննկատելի կերպով մոտեցավ իր ընկերներին ու շշնջաց.

— «Սագերից» մեկն այստեղ է, մյուսները յերևի բլրի այն կողմն են: Կտրեցե՛ք նրանց ճանապարհը, պետք է վոչնչացնենք այս մեկին:

2

Սպան ծոցը դրեց տետրը և վերցրեց իր հրացանը: Հանկարծ նրա գլխավերևում լսվեց.

— Կանգ ա՛ռ: Ձեռքերդ վե՛ր:

Սպան հանկարծակի դալով ցած գցեց հրացանը, սակայն ոձի պես ճգվելով՝ ձեռքը մեկնեց հրացանին:

Ուսանովի ցուցամատը չոչափեց իր նագանի շնիկը: «Վո՛չ, պետք է վոչնչացնեմ այս ոձին»,— մտածեց նա: Ցատկեց: Մեկ ձեռքով խփեց հրացանին, մյուսով—նագանի մի հարված հասցրեց սպայի գանգին:

Սպան ձեռքով ծածկեց դեմքը: Մառների արանքից յերևում եյին նրա փայլուն չար աչքերը:

— Առա՛ջ անցիր,— ձայն տվեց Ուսանովը:

Մյուս կողմից կրակոցներ լսվեցին: «Մերոնք յերկուսն են, իսկ ճապոնացիները հինգ հոգուց պակաս չեն»,— կրակոցները հաշվելով մտածեց նա:

Հրելով սպային՝ Ուսանովը նրա հետ բարձրացավ բլուրը:

Խիտ խոտերում պատսպարված վեց ճապոնացիներ հարմար տեղերից կրակում եյին Ուսանովի յերկու ընկերների վրա, վորոնք հատ-հատ եյին միայն կրակում: Անհարմար դիրքը նրանց հնարավորություն չեր տալիս միանգամից հարձակվելու թշնամիների վրա:

Ճապոնացիներից մեկը սուրը քաշելով, գոռաց՝ «բանզա՛յ»:

Նրան խլացրեց խորհրդային սահմանապահների միահամուռ «ուռան»:

Սահմանապահները վեր կացան: Ուսանովը, հրելով սպային, վազում եր ճապոնացիների վրա՝ նաղանը ձեռքին:

— Ուռա՛,— կանչեցին սահմանապահները և հետևեցին իրենց ընկերոջը:

Թշնամիներին վերցրին վողջ-վողջ: Շատ չանցած՝ յոթ գերիները կանգնած եյին ուղեկալի պետի առջև:

Ուսանովն իր անվեհերության և հայրենասիրության համար կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մացառ—թփուտ:
2. Արահետ—նեղ ճանապարհ (վոտքի):
3. Նագան— ատրճանակի մի տեսակը:
4. «Բանզայ» (ճապոնեերեն)—«ուռա», «կեցցե»:

25. ՀԱՄԱՐՁԱԿ ՏՂԱՆ

Գերմանական դպրոց է մտնում վոստիկանապետը և հարցնում մի աշակերտի.

— Ի՞նչ է անունդ, տղաս:

—Վիլհելմ, պարոն վոստիկանապետ:

— Ի՞նչ կուսակցության ես համակրում:

— Ֆաշիստական, պարոն...

— Լավ, շատ լավ, ապրես:

Հարցնում է ավելի մեծահասակ մի տղայի.

— Իսկ քո անունն ի՞նչ է, բարեկամս:

— Ֆրից,— պատասխանում է տղան:

—Դո՞ւ ինչ կուսակցության ես պատկանում:

— Ֆաշիստական, պարոն վոստիկանապետ:

Այնուհետև վոստիկանապետը դիմում է մի այլ տղայի և հարցնում նրան.

— Իսկ քո անունն ի՞նչ է:

— Կարլ,— պատասխանում է տղան:

— Լավ, դու ե՞լ ես Ֆաշիստ:

— Վոչ, յես կոմունիստ եմ,— պատասխանում է փոքրիկը համարձակ:

— Կոմունի՞ստ, ինչո՞ւ, ինչպե՞ս...

— Մեր ընտանիքում բոլորը կոմունիստներ են:

— Դա պատճառ չե. իսկ յեթե ձեր ընտանիքում բոլորը գողեր ու մարդասպաններ լինեյի՞ն...

— Այն ժամանակ յես Ֆաշիստ կլինեյի, պարոն վոստիկանապետ,— համարձակ պատասխանում է Կարլը:

---

26. ՏԱՋԻԿԱԿԱՆ ՅԵՐԳ

Հնչի՛ր, դութա՛ր, հյուսիր յերգեր,
Հնչե՛ք, սիմե՛ր իմ զնգուն,
Արագ վազեք, ճկուն մատներ,
Վանե՛ք թախիծ, վանե՛ք քուն:

Գատմեք՝ ինչպես հին աշխարհում
Դժբախտ եյինք, շղթայված,
Բայց եր միայն ազատ չնչում,
Վողջ աշխարհին տեր դառած:

Ինչպես մի որ շարքեր կազմած՝
Կռվի յելանք բայի դեմ,
Կին, տղամարդ հրացան առած,
Մեզ հետ փոքրեր թխադեմ:

Արյուն հոսեց, հողը ներկվեց,
Բայեր յեկան անհամար.
Բոց ու կրակ վողջ խառնվեց,
Թնդաց հովիտ, դաշտ ու սար:

Բայեր յեկան հագած ատլաս,
Ցեվ կռվեցին ձի հեծած.
Խալաթներին դումաշ ու խաս՝
Արյան փոշի կար նստած:

Իսկ մենք յելանք վոտաբոբիկ,
Բայց սամումի պես դաժան,
Առանք բերդեր կուռ, անառիկ,
Դարերի դեմ անսասան:

Հնչի՛ր, դութա՛ր, ըմբոստ յերգեր,
Հնչե՛ք, սիմե՛ր իմ զնգուն,
Արագ վազեք, ճկուն մատներ,
Վանե՛ք թախիծ, վանե՛ք քուն:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դութար— յերաժշտական գործիք (լարային)
2. Վանել— քշել, հեռացնել:
3. Բայ—հարուստ հողատեր:
4. Ատլաս, դումաշ, խաս — մետաքսե կտորներ:
5. Խալաթ—յերկար փեշերով զգեստ:
6. Անառիկ—անմատչելի:
7. Սամում—ավազախառն մրրիկ (անապատում):

---

27. ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կինանքով, մորս ծնունդով, վեր կացանք մի որ հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք: Հադին եր, Հյուդին եր, Զատին եր, Մատին եր, հայրս եր, յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝ սուս ու փուս գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզեկուզ գնացինք...

Գնացի՛նք, գնացի՛նք, չատ թե քիչ, մին ել տեսնենք յերեք լիճ, յերկուսը ցամաք, մնի մեջ ել իսկի ջուր չկա: Մին ել, ըհը՛, մտիկ տանք, վոր այս անջուր լճում լողում են, ճչում յերեք հատ սպիտակ բադ, յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թե՝ թվանք չունեմ:

— Հյուդի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Ցես ել չունեմ:

— Զատի՛... Մատի՛...
— Մենք էլ չունենք։
— Բա ի՞նչ անենք...
— Հորս ձեռին կարճ ու յերկար, հատա ու բարակ մի փետ կար. յերեսն առավ, նշան դրեց, մին էլ՝ տրա՛ք, վոր կրակեց... Նա կրակեց, յես զարկեցի՝ վոր զարկեցի՝ փռվեց եսպես—ամեն թեւը հինդ դաղ ու կես...
— Հաղի՛, դանակ...
Թե՝ դանակ չունեմ,
— Հյուղի՛, դու...
— Յես էլ չունեմ։
— Զատի՛, Մատի՛...
— Մենք էլ չունենք։
— Բա ի՞նչ անենք...
Հերս էլ ունի, բերան չունի։
Ես անբերան դանակը քաշեցինք։ Հաղին մորթեց, չկարաց. Հյուղին մորթեց, չկարաց. Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց. յե՛ս քաշեցի, մորթեցի։
Մորթեցի, վեր դցեցի. բաղ մի ասել, մի գոմեշ ասա։ Հաղին շալակեց, չկարաց. Հյուղին շալակեց, չկարաց. Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, յե՛ս շալակեցի։ Շալակեցի, դնացինք։
Դնացինք, դնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք յերեք գեղ, յերկուսի տեղն խսկի չի յերևում, մնումն էլ խսկի մարդ չկա։ Ես անչեն գյուղում դես ման յեկանք, դեն ման յեկանք, մի տուն դտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած, մնի բերնումն էլ չունչ չկա։
— Տղերք, ասինք, յեկեք բաղով վլավ անենք։
Ես անչունչ պառավը դնաց դես ման յեկավ, դեն ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ, յերկուսը ծակ, մինն էլ խսկի տակ չունի։

Ջուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջն ածինք բաղն ու բրինձը, անկրակ յեփեցինք։ Յեփեց, յեփեց, միսն ու բրինձը դնացին, մնաց ջուրը։
Վորսից յեկած սոված մարդի՛կ, վրա յեկանք, կերա՛նք, կերա՛նք, վոչ աչքերս բան տեսավ, վոչ բերաններս բան մտավ։

ՀԱՐՑԵՐ

1. Գտեք այն տեղը, վորտեղով այս գրվածքը զվարճալի յե դառնում. (որինակ՝ «յերեք լիճ— յերկուսը ցամաք, մնի մեջ էլ ջուր չկար»)։
2. Արտադրեցեք այս գրվածքում յեղող հակադրությունները (որինակ՝ «կարճ ու յերկար փետ» և այլն)։
3. Թվեցեք գրվածքում յեղած դեպքերը։

28. ՄԱԶԱՅ ՊԱՊՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Մեր արձակ յերկրում
Հարթ ու տափարակ,
Հորդ անձրևներ են
Լինում շարունակ։

Գարունքին մի որ,
Յերբ ջուրը վարար
Իր տակն եր առել
Դաշտեր ու անտառ,

Նստեցի նավակ,
Ասի՝ մի գնամ,
Վառելիք բերեմ
Ձմեռվա համար։

Տեսա ջրի մեջ
Մի փոքրիկ ցամաք,
Վորտեղ նստած են
Զորս–հինգ նապաստակ։

Ասի. «Մի՛ վախեք
Գալիս եմ ահա,
Հորդացած ջուրը
Ձեզ նեղել է, հա՞»:

Իսկ նրանք անշարժ
Ականջները ցից,
Կպել են գետնին
Ու նայում են ինձ:

Մեկին բռնեցի,
Դրի նավակում,
Մյուսները, դու տես
Թե վո՛նց են ցատկում:

Հենց վոր վերջինը
Թռավ ու նստեց,
Ջուրը բարձրացավ,
Ցամաքը պատեց:

Մին էլ ի՞նչ... Հեռվից
Առաջ է գալիս

Մի կատաղ գետան՝
Ջորս չղջիկ վրան:

Գետանը թոկով
Նավիս կապեցի,
Ուռած ու փքված
Առաջ սահեցի:

Ցերը վոր մոտեցանք
Բանջարանոցին,
Իմ չղջիկները
Կարծես գժվեցին:

Նավակը ափին
Դեմ առավ թե չէ,
Մի մտիկ արա՛—
Փախչե՛լ, ի՞նչ փախչել:

Ցես էլ ժպտալով՝
Նավակի միջից
Ասացի ուժգին
Նրանց հետևից.

«Իմ չիլ-չղջիկներ,
Դուք բարով գնաք,
Բայց ձմռան որին
Աչքիս չերևա՛ք,

Թե չէ, հո գիտե՛ք—
Իմ հրացանը
Վորս է վորոնում
Դաշտում ձմռանը»...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
1. Հորդ—վարար:
2. Սահել—արագ գնալ:
3. Ուժգին—ուժով:

29. ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

(Հեքիաթ)

1

Յերկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝ ի՞նչ անեն, վո՞նց անեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են, վոր փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ռոճիկ ստանա, ուղարկի տուն: Փոքրը մնում է տանը, մեծը վեր է կենում, գնում մի հարուստ մարդու մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև գարնան կկվի ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման է դնում ծառային: Ասում է. «Մինչև են ժամանակը թե դու բարկանաս, հազար մանեթ տուգանք տաս ինձ, թե յես բարկանամ — յես տամ»:

— Ցես վոր հազար մանեթ չունեմ, ի՞նչ տեղից տամ,— ասում է ծառան:

— Վոչինչ, փոխարենն ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղան մին վախենում է այս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ի՞նչ պետք է պատահի: Ինչ ուզում են, անեն. յես եմ ու չեմ բարկանալ, վերջացավ գնաց: Իսկ թե իրենք բարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում է՝ լավ. համաձայնվում է: Պայմանը կապում են ու մտնում է ծառայության:

2

Մյուս որը վաղ տերը վեր է կացնում ծառային, ուղարկում է արտը հնձելու.

— Գնա, ասում է, քանի լույս է, հնձի, վոր մութն ընկնի, կգաս:

Ծառան գնում է ամբողջ որը հնձում, երեկոնը հոգնած դալիս է տուն:

Տերը հարցնում է.

— Եղ ո՞ւր յեկար:

— Դե արևը մեր մտավ, յես էլ յեկա:

— Չե, եղպես չի. յես քեզ ասել եմ՝ քանի լույս է, պետք է հնձես: Արևը մայր մտավ, բայց տե՛ս՝ նրա ախպեր լուսնակը դուրս յեկավ: Սա ի՞նչ պակաս է լույս տալիս...

— Եղ վո՞նց կլինի,— զարմանում է ծառան:

— Հը՛, դու արդեն բարկանո՞ւմ ես,— հարցնում է տերը:

— Չե՛, չեմ բարկանում... Ցես միայն ասում եյի՝ հոգնած եմ... մի քիչ հանգստանամ,— կակազում է վախեցած ծառան ու դնում է նորից հնձելուց:

Հնձում է հնձում, մինչև լուսնակը մեր է մըտնում: Բայց լուսնակը մեր է մտնում թե չի, դարձյալ արեգակն է դուրս դալիս:

Ծառան ուժասպառ վեր է ընկնում արտում:

— Վայ քո արան էլ հարամ ըլնի, քո հացն էլ, քո տված ռոճիկն էլ,— սկսում է հայհոյել հուսահատված:

— Հը՛, դու բարկանո՞ւմ ես,— կանգնում է գլխին հարուստը: Ցերը վոր բարկանում ես, մեր պայմանը պայման է. էլ չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է ծառային կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մտնում է կրակի մեջ: Հազար մանեթ չունեը, վոր տար, հոգին ազատեր, տասը տարի էլ ես տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր:

Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալիս հարստին, դառն ու դառարկ վերադառնում տուն:

3

Հը՛, ի՞նչ արիր,— հարցնում է փոքր ախպերը։ Ու մեծ ախպերը նստում է, գլխին յեկածը պատմում, ինչպես վոր պատահել եր։

— Բան չկա,— ասում է փոքրը,—դարդ մի՛ անի։ դու տանը կաց, հիմի ել յե՛ս գնամ։

Վեր է կենում, հիմի ել փոքր ախպերն է գնում ծառա մտնում ելի նույն հարուստի մոտ։

Հարուստը դարձյալ վորոշում է մինչև դարնան կկվի ձեն ածելն, ու պայման է դնում, վոր յեթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու այն որից ել ծառան ազատ է։

— Չե՛, եդ քիչ է,— հակառակում է տղան,— թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայեմ։

— Լա՛վ,— ուրախանում է հարուստը։

Պայմանը կապում են ու այժմ ել փոքր ախպերն է մտնում ծառայության։

Առավոտը լուսանում է, ես ծառան վեր չի կենում տեղից։ Տերը դուրս է գնում, տուն է գալիս, ես ծառան դեռ քնած է։

— Ա՛յ տղա, դե վեր կաց է՛, որը ճաշ դառավ։

— Հը՛, բարկանո՞ւմ ես,— գլուխը վեր է քաշում ծառան։

— Չե՛, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում է տերը,— միայն ասում եմ՝ պետք է արտը գնանք՝ հնձելու։

— Հա՛, վոր եդ ես ասում, վոչինչ, կգնանք։ Ի՞նչ ես շտապում։

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել։

Տերը դուրս է գնում, ներս է գալիս, սա դեռ տրեխներն է հագնում։

— Ա՛յ տղա, դե՛ շուտ արա, հագի, ելի՛...

— Հը՛, հո չե՞ս բարկանում։

— Չե՛, ո՞վ է բարկանում. յես միայն ուզում եյի ասել, վոր ուշանում ենք։

— Հա՛, եդ ուրի՛շ բան է. թե չե պայմանը պայման է։

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արան են գնում, ճաշ է դառնում։

— Ել ի՞նչ հնձելու ժամանակն է,— ասում է ծառան,— տեսնում ես ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո։

Նստում են, ճաշն ուտում։ Ճաշից հետո ել ասում է. «Մշակ մարդ ենք, պետք է մի քիչ քնենք, հանդստանանք, թե չե»։

Գլուխը կոխում է խոտերի մեջ ու քնում է մինչև իրիկուն։

— Տո՛, վեր կաց, մթնեց, է՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց. վա՛յ քո դեսը դրկողի վիզը կտրվի, վա՛յ քո կերածն ել հարամ ըլի, քո արածն ել... Ես ի՞նչ կրակի մեջ ընկա,— սկսում է գոռգոռալ հուսահատված տերը։

— Հը՛, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան։

— Չե՛, ո՞վ է բարկանում. յես են ելի ասում, թե մթնել է, տուն գնալու ժամանակն է։

— Հա՛, եդ ուրի՛շ բան է, գնանք, թե չե հո մեր պայմանը գիտես. վայ նրա մեղքը, ով բարկացավ։

4

Գալիս են տուն։ Տեսնում են՝ հյուր է յեկել։ Ծառային դրկում է, թե գնա վոչխար մորթի։

— Վո՞ր։

— Վորը պատահի։

Ծառան գնում է։

Մի քիչ հետո լուր են բերում հարստին, թե հասիր, վոր քո ծառան ամբողջ հոտը կոտորեց։

Ես հարուստը վազում է, տեսնում՝ ճիշտ վոր՝ ինչ վոչխար ունի, բոլորը մորթել է ծառան։

Գլխին վա՛յ է տալիս, գոռում.

— Եդ ի՞նչ ես արել, ա՛յ անխիղճ, քո տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր։

— Դու ասիր՝ «ինչ վոչխար պատահի, մորթի», յես էլ յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի, ուրիշ ավել պակաս ի՞նչ եմ արել,— հանգիստ պատասխանում է ծառան։— Բայց կարծեմ դու բարկանո՞ւմ ես։

— Չէ՛, չէ՛մ բարկանում, միայն ա՛յնքանս գալիս է, վոր ես քան ապրանքս փչացավ։

— Լավ, վոր չես բարկանում, էլի կծառայեմ։

5

Հարուստը մտածում է՝ ինչ անի, վոր ես ծառայից աղատվի։ Պայման է կապել մինչև մին էլ դարնան կկվի ձեն ածելը, այնինչ՝ դեռ նոր են մտել ձմեռը. դեռ վո՞ր բռեղ են դարձունն ու կկուն։

Մի քանի անգամ, մի քանի հնար է մտածում։ Կնոջը տանում է անտառում մի ծառի վրա հանում ու պատվիրում, վոր «կուկու» կանչի։ Ինքը գալիս, ծառային տանում է՝ թե արի գնանք վորսի։ Հենց անտառ են մտնում թե չէ, կինը ծառի վրայից կանչում է. «կուկո՛ւ», «կուկո՛ւ»։

— Ը՛հը, աչքդ լույս,— ասում է ծառային տերը,— կկուն կանչեց, ժամանակդ լրացավ։

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկությունը։

— Չե՛,— ասում է,— ո՞վ է լսել, վոր տարվա ես յեղանակին, ձմեռվա կիսին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն է ածում։ Ցես պետք է ես կկվին սպանեմ։ Սա ի՞նչ կկու յե...

Ասում է ու հրացանը քաշում դեպի ծառը։

Տերը գոռալով ընկնում է առաջը, սկսում կռնվել ու անիծել նրան ծառա բռնելու որը։

— Հը՛, չլինի՞ թե բարկանում ես...

Հա՛, ախպեր, հերիք է,— ասում է հարուստը։ Արի՛, ինչ տուգանք տալու յեմ, տամ, քեզանից ազատվեմ. իմ դրած պայմանն է, յես էլ պետք է տուժեմ։

Եսպես փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուգանքն էլ առնում ու վերադառնում է տուն։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տուգանք—հարկադիր վճար (իբրև պատիժ)։
2. Պարտամուրհակ—գրություն մի ուրիշին վճարելիք պարտքի մասին, պարտապանի ստորագրությամբ։

30· ԽՈԶՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Մի դարավոր կաղնու տակ
Խոզը ագահ ու անհագ
Ենքան կաղին զխավեց,
Վոր ցած ընկավ ու փռվեց:
Զարթնեց քնից ու տակից
Ծառը փորեց արմատից:
— Ի՞նչ ես անում, ա՛յ անզգա,
Խա՞ղ ես անում ծառի հետ,
Ագռավն ասավ վերևից:
Կչորանա արևից,—
— Չորանում է՝ չորանա,
Ինձ ի՞նչ ոգուտ՝ գորանա,
Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, պառկեմ, գիրանամ:
— Այ ապերախտ կենդանի,
Ով քեզ նման վիզ ունի,
Իր կույր աչքով չի տեսնի,
Վոր կաղինը հյութալի
Լոկ այս ծառն է ձեզ տալիս,—
Ագռավն ասավ խոզուկին,
Են կախ գլուխ կուզիկին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Անհագ—անկշտում, չկշտացող:
2· Զխտվել—անկարգ կերպով ուտել:
3· Անգետ—չհասկացող, չգիտեցող:
4· Չորանալ—մեծանալ, աճել:
5· Ապերախտ—լավությունը մոռացող:

ՀԱՐՑԵՐ

1· Ինչո՞ւ խոզը փռվեց ծառի տակ:
2· Խոզն ինչո՞ւ չեր մտածում, թե ծառը կչորանա:

3· Ինչո՞ւ ագռավը խոզին ապերախտ կենդանի յե համարում:
4· Ինչո՞ւ այս գրվածքն առակ է կոչվում:

1· Նման մի դեպք պատմեցեք մարդկանց կյանքից:
2· Այս առակն արտասանեցեք դերերով:

31· ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ

1

Ինչպես մեր շրջանի բոլոր ավաններում ու չիներում, այնպես էլ մեր գյուղում կային մի քանի ֆուրգոնատերեր· սրանց գործն այն եր լինում, վոր միշտ բուրդ, բամբակ, ալյուր, գետնախնձոր ու մարդ եյին տեղափոխում գյուղից քաղաք, քաղաքից գյուղ:

Այդ ֆուրգոնատերերից մեկն էլ մեր Հարևան Պետրոսն եր:

Լավ մարդ եր Հարևան Պետրոսը:

Յերբ իր քառաձի ֆուրգոնով նա վերադառնում եր քաղաքից, մենք, յերեխաներս, ագմուկով ընդառաջ եյինք գնում նրան և ծառս լինում ֆուրգոնի ճաղերից: Մեր նկատելով՝ նա գրպանից հանում եր կոնֆետ ու խնձոր և «ահա՛ ձեզ, տղաներ» ասելով, ցրում գետնին: Մենք իրար թակելով, հավաքում եյինք կոնֆետն ու խնձորը և գնում շրջապատում նրան իր դռանը՝ լսելու, թե ինչ լավ-լավ բաներ պետք է պատմի, կամ տեսնելու, թե ի՞նչ է բերել քաղաքից:

Յեվ այնպիսի՛ բաներ եր բերում նա քաղաքից իր տղաների համար, վոր յես միշտ նախանձում եյի նրանց: Իր տղաների համարնա բերում եր ճաքավոր կոշիկներ, չվի, ծոպավոր գոտի և, վերջապես, այնպիսի բաներ, վոր իմ հայրը յերբեք չեր առնում ինձ համար...Մի խոսքով՝ Հարևան Պետրոսը շատ եր սիրում

ֆը յերեխաներին։ Բայց նա ավելի շատ սիրում էր իր ֆուրգոնը և ձիերին և ամեն անգամ պարծենում էր, վոր իր ֆուրգոնի և ձիերի նմանը չի գտնվի վողջ նահանգում։

— Հապա՛, մերը չմեռնի Պետրոսի ձիերի, — ասում էր նա,— նրանց նման ձի վո՞ր տեղ կա... Սրանք հրեղեն են, վոչ թե ձիեր... Մի անգամ Յերևանի ճամբին ամենքի ձիերն էլ հոգնեցին, վեր թափվեցին, իսկ իմոնք այնպես եյին գնում, վոնց վոր թևավոր,— ֆը՛ռռռ...

Ու այս ասելով, հարևան Պետրոսը գոհությամբ ծծում էր ծխամորճը։

2

Պետրոսը մի սովորություն ուներ. միշտ մեր տունը կգար և Համռան յերեկոներին հորս հետ կնստեր ոջախի առջև ու զրույց կաներ ու ամեն խոսքի վերջում կկրկներ.

— Եսպես բաներ, հարևան...

Մի անգամ, շատ լավ միտս է, այդպիսի մի զրույցի ժամանակ հայրս ասաց նրան.

— Պե՛տրոս, հիմի ձեր գործը վատ կլինի. ասում են՝ յերկաթուղի պետք է գա...

— Բարով, հազար բարի,— ասաց հարևան Պետրոսն անտարբեր,— գա էլ, գնա էլ. ինձ ի՞նչ...

— Վո՞նց թե,— ասաց հայրս,— ախր այդ յերկաթուղին վոր գա, նրանից հետո ամեն բան՝ մարդ, ապրանք՝ յերկաթուղով կտանեն-կբերեն, այնպես վոր էլ ֆուրգոնի գործ քիչ կմնա...

Այս խոսքերի վրա հարևան Պետրոսը չիբուխը հանեց բերանից և զարմացած հորս նայեց.

— Վո՞նց թե,— ասաց նա, կարծես լսածը լավ չհասկանալով,— մաշինեն ֆուրգոնի բանը կանի՞։

— Իհարկե,— պատասխանեց հայրս, — գնացքն այնպիսի բեռ է տանում, վոր ֆուրգոնը չի կարող։

— Ե՛հ, դու էլ բան ես ասում,— ասաց հարևան Պետրոսը և նորից չիբուխը դրեց բերանը։

— Ցես քեզ հաստատ բան եմ ասում, — ասաց հայրս և սկսեց բացատրել, թե յերկաթուղին ինչեր է անում։

Նա ասում էր, թե լրագրում կարդացել է, վոր այդ գնացքը մեր խոտի ամբողջ դեզը մի որում կարող է տանել մինչև «Ֆրանդստան», իսկ մեր ամբողջ գյուղն իր տավարով ու մարդկանցով կտեղավորի իր մեջ։ Նա ուրիշ շատ բաներ էլ պատմեց, բայց դրանցից միտս է այն խոսքը, թե գնացքը կարող է հարևան Պետրոսի ֆուրգոնն իր ձիերով, ջրի դույլով ու դարու խախալով մի քանի րոպեյում թոցնել քաղաք։

Հորս խոսքերը լսելով, յես զարմանում եյի, թե ինչպես կարելի յե ֆուրգոնն իր ձիերով տանել այդպես. ապա այդ գնացքը չի կոտրվի՞, կամ ձիերը նըչան քացի չեն տա՞։ Մինչ յես զարմանում եյի այսպես, հարևան Պետրոսը, ծխամորճը քաշելով, բեղերի տակ ծիծաղում էր հորս խոսքերի վրա։ Յեվ յերբ հայրս վերջացրեց իր բացատրությունը, նա ծխամորճը հանեց բերանից, մոխիրը թափ տվեց ոջախի մեջ ու դարձավ հորս.

— Հը՛մ, մերը մեռնի՛ Պետրոսի ֆուրգոնի, վոր մաշինեն նրա բանը պիտի անի... Մի տեղ վոր ձի չըլծեն, մի տեղ վոր լուծ ու սանձեր չլինեն,— նրանով կարելի՞ յե մարդ ու ապրանք տանել-բերել...

— Քեզ ասում եմ, վոր կարելի յե,— ասաց հայրս և նորից սկսեց բացատրել շոգեքարշի առավելությունները։

Նա աշխատում էր հարևան Պետրոսին համոզել, վոր յերկաթուղու գնացքը կարողանում է ամեն բան տանել. բայց հարևան Պետրոսը չէր համոզվում ամենևին և շարունակ կրկնում էր խնդալով.

— Հարևա՛ն, մի՛ հավատա...

Յետ սրանից հետո գյուղում ով որ խոսում էր յերկաթուղու և մանավանդ գնացքի առավելությունների մասին, հարևան Պետրոսը միշտ ասում էր ժպիտը յերեսին.

— Հարևան, մի՛ հավատա. նա Ֆուրգոնի տեղը չի բռնի...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ավան—մեծ գյուղ:
2. Շեն—գյուղ:
3. Քառաձի—չորս ձի լծած:
4. Ծառս լինել—բարձրանալով կախվել:
5. Ծոպավոր—փունջ թելեր ունեցող:
6. Ծխամորճ—չիբուխ (ծխելու):
7. Ֆրանգստան—Ֆրանսիա:
8. Խախալ—մաղ՝ ցորեն կամ դարի մաքրելու համար:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ Ֆուրգոնատերերն իրենց Ֆուրգոններով շարունակ գյուղից քաղաք և քաղաքից գյուղ եկին գնում:

2. Յերկաթուղին ի՞նչ հարմարություններ ստեղծեց քաղաքի և գյուղի բնակիչների համար:

3. Ինչո՞ւ Պետրոսը չեր հավատում, թե յերկաթուղին կարող է փոխարինել Ֆուրգոնին:

1. Յեթե կարդացել եք Ստ. Զորյանի «Յերկաթուղին» գրքույկը, պատմեցեք շարունակությունը. յեթե չեք կարդացել, ինքներդ հորինեցեք շարունակությունը:

2. Կարդացեք գրվածքի այն մասերը, վորոնք ցույց են տալիս Ֆուրգոնատեր Պետրոսի համառությունն ու պարծենկոտությունը:

3. Պատմեցեք, թե պառկին անդամ դուք ի՞նչպես գնացք նստեցիք և ո՞ւր գնացիք:

---

32. ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա այցելության
Գործարանի պարիսպներին,
Յերկաթակուռ այն չենքերին,
Վոր չունչ տվին իմ յերգերին:

Ահա մտա նրա շեմքով,
Ինձ վողջունեց արթուն սուլիչ,
Մեքենաներն ուրախացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու վորոտաց՝ դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ձայնակցեցին
Զարտճճի հազար մուրճեր,
Ծլվլալով զրնգացին՝
Ինչպես ուրախ դեղձանիկներ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Յերկաթակուռ—յերկաթի պես ամուր չինած:
2. Փոկ—անիվները միացնող (պտտելու համար) կաշվե լայն ժապավեն:
3. Շոգեմուրճ—շոգու ուժով բանող մուրճ:

ՀԱՐՑԵՐ

1. Բանաստեղծն իրեն ի՞նչպես է զգում գործարանում:

2. Ի՞նչպիսի տրամադրությամբ և գրված այս վոտանավորը (տխուր, ուրախ, հուսահատ, զվարթ):

---

33. ԼԵՆԻՆԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՄԱՐԴԸ

(Կաբարդական զրույց՝ Կիրովի մասին)

Զորս ձիավորներ առուլ մտան: Ցերեքի ուսերին կային ծանր յափնջիներ, չորրորդը՝ զինվորական շինելով եր:

Նրանց դիմավորեց մի ծերունի:

— Վո՞ր տեղ ե գյուղական վարչությունը,— հարցրեց շինելավորը:

Ծերունին չորացած ձեռքը ծուլորեն մեկնեց դեպի գյուղի խորքը:

— Կարելի՞ յե ձիերը ձեզ մոտ թողնել. մենք կարմիր բանակայիններ ենք:

Ծերունու աչքերում փայլեց ուրախություն. նա սեղմեց անծանոթի ձեռքն ու ասաց.

— Համեցեք, համեցեք...

Անծանոթը—Կիրովն եր, հերոս զինվորը, ինչպես անվանում եյին նրան Կաբարդայի լեռնականները:

Սպիտակների անհամար շարքերը ճեղքելով, նա յեկել եր լեռնականների մոտ՝ Լենինի ու Ստալինի հանձնարարություններով: Նա յեկել եր, որ հողն ու արոտավայրերը հանձնի աշխատավորներին, պարտիզանական ջոկատներ կազմակերպի ու նրանց հանի խշխանների ու կալվածատերերի դեմ:

2

Կիրովը համաչափ քայլում եր խրճիթում: Ոջախում հուրհրացող կրակը վոսկեզոծում եր նրա չեկ մազերը:

Նա անհանգիստ մոտեցավ ծերուկին, նստեց կողքին ու սկսեց հարցուփորձ անել նրա ապրուստի, բերքի, հողի, լեռների ու արոտների մասին:

Ծերունին ապշել եր: Նրա յերկար կյանքի ընթացքում վոչ վոք այդպես մտերմորեն ու պարզ կերպով չեր խոսել նրա հետ:

Ցեվ սրտապնդված՝ նա սկսեց պատմել Կիրովին դառնագին կյանքի պատմությունը:

3.

Գյուղում լուր տարածվեց՝ թռչնի պես արագ.

«Ցեկել ե Լենինի ուղարկած մարդը»:

Գյուղական դրասենյակը լեփ-լեցուն եր մարդկանցով: Շատերը կանգնած եյին փողոցում, որ գոնե ականջի մի ծայրով լսեն այն մարդու ձայնը, որին ուղարկել եր Լենինը:

Մարդիկ զինված եյին արծաթապատ դաշույններով: Առաջին շարքերում, ըստ սովորության, նստած եյին ծերունիները:

Կիրովը թեթև ու վստահ առաջ անցավ մարդկանց խիտ շարքերով, մոտեցավ սեղանին: Բոլորը վոտքի յելան: Կիրովը ժպտաց և խնդրեց նստել: Ապա բարձրացրեց աջ ձեռքը և անխոս ցույց տվեց վոսկեզոծ

շրջանակում պատից կախած՝ թագավորի պատկերը:

Ժողովը հասկացավ՝ ինչ պետք էր անել, և պատկերը ձեռքից-ձեռք անցավ—դեպի դուռը: Քրքիջների միջով Կիրովը լսեց կոտրվող շրջանակի ճարճատյունը և փչրվող ապակու զրնգոցը:

Ժողովը ցանկություն հայտնեց դուրս տեղափոխվել:

Տիրեց լռություն: Կիրովն իր հայացքը դարձրեց մարդկային հոծ շարքերին, յետ շրջեց դեղեցիկ գլուխը և սկսեց խոսել: Խոսում էր ջերմորեն, չեշտելով ամեն մի բառը: Նա պատմում էր անցյալի տարաձնների մասին, պատմում էր նոր կյանքի մասին, որ պետք էր պայքարով ձեռք բերել: Նա հայտնեց, որ հեղափոխությունը ժողովրդին ավեց լեռներն ու ադրատները, հողն ու նրա ընդերքը, որ աշխատավորությունն այժմ իր բախտի տերն է և ինքն է ղեկավարելու իր ազատ յերկիրը:

Գյուղը յերբեք այսպիսի ժողով չէր տեսել:

4

Կիրովը վերջացրեց, բայց դեռ չեյին ցրվում:

Ծերունիները, քարշ տալով իրենց թուլացած վոտները, մոտենում եյին հերոս գինվորին, բռնում եյին նրա ձեռքն ու յերկար պահում, նորից ու նորից հարցնում հեղափոխության մասին, հողի մասին, Լենինի մասին: Նրանք լալիս եյին ուրախությունից և գրկում եյին Լենինի ուղարկած մարդուն:

Ամբոխը ցրվում էր: Կիրովին տանում եյին թեշանցուկ, որ նշան էր անտոմոր հարգանքի: Գյուղի ծայրին նրան սպասում էր թամքած ձին՝ մի խումբ ձիավորներով:

Կիրովը թեթև ու արագ ցատկեց ձիու մեջքին և թեքվելով՝ վոգեվորաբար ասում էր ծերունիներին.

— Մահվան չափ ատեցեք ստրկությունը: Կյանքի պես սիրեցեք հեղափոխությունը:

— Ցերդվում ենք և կհաղթենք:

Ցերեկո յեր: Գնում եյին ձիավորները, առջևից Կիրովը: Ձիավորների մեջ կային ալեհեր ծերունիներ, վորոնք չա՛տ տարիներ ե՝ ձի չեյին նստել, և նստեցին այս մեծ հանդիսման պատվին:

Դուրս յեկավ լուսինը: Կիրովը նայեց ժամացույցին: Կեսգիշերն անց էր, յերբ ուղեկիցները հետ դարձան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Առլ—լեռնականների գյուղ:
2. Պարտիզան—բնակչությունից կազմված մարտական ջոկատի անդամ:
3. Քրքիջ—ուժեղ, բարձրաձայն ծիծաղ:
4. Հոծ—խիտ, շատ:
5. Ընդերք—յերկրի խորքը, ծոցը:

34. ԽՆԴՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԾԱՌ

Հազար հույզով, հազար լույսով,
Հազար բերքով ես դու յեկել,
Ինչքան լավն ես, ինչքան պայծառ,
Հեյ Ջան, խնդության տոնածառ:

Մեր մեծ Ստալինը հարազատ
Պարգևվեց մեզ նոր կյանք ազատ,
Կյանքն ուրախ է, կյանքը պայծառ,
Հեյ Ջան, խնդության տոնածառ:

Մեր ուրախ յերգն է դիլ հնչում,
Առվակի պես միշտ կարկաչում,
Ստալինյան արևով վառ,
Հեյ Ջան, խնդության տոնածառ:

35. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

(Քրոջ պատմածից)

Ինձը և կես տարեկան Վոլոդյան ընդունվեց գիմնազիայի առաջին դասարանը: Գիմնազիայի համար նրան յերկու ձմեռ պատրաստեցին: Մանուկ հասակից չափազանց աշխույժ լինելով, նա ուղղակի թռչելով եր դասի գնում: Հիշում եմ, աշնան մի ցուրտ առավոտ մայրիկն ուզում եր նրա վերարկուն հագցնել, բայց մեկ ելտեսավ՝ Վոլոդյան չկա: Դուրս նայեց, վոր հետ կանչի, բայց Վոլոդյան հասել եր փողոցի անկյունը:

Նա հեշտությամբ ու հաճույքով եր սովորում և չափազանց ընդունակ եր: Հայրս նրան, ինչպես և մեծ յեղբորս ուքրոջս, տոկունություն և ճշտապահություն եր սովորեցնում: Հիշում եմ, վոր ուսուցիչները ասում եյին, թե Վոլոդյային շատ է ոգնում այն, վոր նա դասարանում միշտ ուշադիր լսում է դասի բացատրությունը: Իր հրաշալի ընդունակությունների շնորհիվ նա սովորաբար դասարանում արդեն յուրացնում եր տրված նոր դասը, տանը միայն մի քիչ պետք է կրկներ: Դրա համար էլ յերեկոյան, յերբ մենք տեղավորվում եյինք մեծ սեղանի շուրջը, ընդհանուր լույսի տակ պարապելու, Վոլոդյան արդեն իր դասերը սովորած եր լինում և խոսում եր, ուղղում ու խանդարում մեզ:

«Վոլո՛դյա, դադարիր»: «Մայրի՛կ, Վոլոդյան խանգարում է մեզ»,— ասում ենյինք մենք: Բայց Վոլոդյան ձանձրանում եր հանդիստ նստելուց և շարունակում եր խաղալ ու խոսել:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տոկունություն — դիմացկունություն:
2. Ճշտապահություն—գործը կատարել կանոնավոր և ժամանակին:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես եր սովորում Վոլոդյան:
2. Ի՞նչպես է կոչվում մարդու կյանքի նկարագրությունը:

---

36. ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

(Ընկ. Սերգո Որջոնիկիձեյի հիշողություններից)

Ընկեր Ստալինն առաջարկեց ինձ գնալ Լենինի մոտ:

Ինձ տրվեց մի բանվորի հասցե, որն ապրում եր Սեստրորեցկայա կայարանի մոտ: Մեծ վտանգ եր սպառնում, յերբ յես հանձն առա այդ գործը. վախենում եյի հանկարծ լրտեսի հանդիպեմ, և հայտնվի Վլադիմիր Իլյիչի տեղը:

Գիշերը հասա կայարան: Մի քիչ թափառելուց հետո գտա այն տունը, որտեղ ապրում եր հիշյալ բանվորը: Այդ նույն բանվորը տանը չեր, և նրա կինն ինձ հետ գրեց ուղեկցելու 9—10 տարեկան իր տղային: Մենք գնացինք լճի մոտ, նստեցինք նավակ, և հասնելով մյուս ափը, գնացինք թփերի միջով: Յես վորոշեցի, վոր ընկեր Լենինն ապրում է վորևե ամառանոցում: Հանկարծ մենք կանգ առանք հնձած խոտերի մոտ: Տղան կանչեց ինչ-վոր մեկի անունը: Խոտի դեզից դուրս յեկավ մի մարդ: Պարզվեց, վոր այդ մարդը տղայի հայրն է: Բարևեցի, բացատրեցի նրան իմ գալու նպատակը: Մտածում եմ — հիմա կտանի ինձ Լենինի մոտ: Այդ րոպեին մոտենում է մի մարդ սափրված մորուքով և բեղերով:

Մոտեցավ՝ բարևեց: Յես պատասխանեցի պարզ և չոր: Այն ժամանակ նա խփեց իմ ուսին և ասաց. «Ընկեր Սերգո, ինձ չե՞ք ճանաչում»:

Պարզվեց, վոր դա ընկեր Լենինն եր: Յես մեծ հրճվանքով սեղմեցի նրա ձեռքը և սկսեցինք զրուցել:

Մի քանի րոպեյից հետո Իլյիչն առաջարկեց ինձ ընթրել իր հետ սև հացով և սելյոդկայով: Ներանք ուրիշ վոչինչ չունեյին:

Այդ «ընթրիքից» հետո զրույցը շարունակեցինք Լենինի հետ, խոտի դեզի վրա:

Թարմ խոտը բուրում եր, սքանչելի տաք եր: Յերկար ժամանակ յես նրան պատմում եյի, թե նրա բացակայության ժամանակ ի՞նչ եր կատարվում քաղաքում, ինչպիսի տրամադրություններ կային բանվորների և գյուղացիների մեջ, ինչ եր կատարվում մեր կազմակերպության մեջ, Պետրոգրադի խորհրդում:

Վլադիմիր Իլյիչը լսեց ինձ, մի քանի հարցեր տվեց և ասաց.

— Իշխանությունն այժմ միայն կարելի յե վերցնել զինված ապստամբության միջոցով, և այդ կլինի վոչ ուշ սեպտեմբերին—հոկտեմբերին...

Այդ բոլորը յես լսում եյի լարված ուշադրությամբ. տպավորությունը շշմեցուցիչ եր:

Հետո Իլյիչը տվեց մի քանի ցուցումներ, թե ինչպես տանել գործը:

Խոսակցությունն ընդհատվեց, վորովհետև յես հոգնած եյի և անհնարելի կերպով քնեցի:

Առավոտյան փոխանակ ժամը 6-ին վեր կենալու՝ զարթնեցի 11-ին:

Այդ ժամանակ Իլյիչը պատրաստում եր մի շարք փոքրիկ հոդվածներ, նամակներ Ստալինին և ուրիշ ընկերների: Յես վերցրի այդ բոլորը, մնաս բարև արի և գնացի:

---

37. ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՞ՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԿՐԵՄԼՈՒՄ ՄԵԿ ԱՆԳԱՄ

Կա՞ արդյոք մի մարդ յերկրի յերեսին,
Վոր լսած չլինի Կրեմլի մասին.
Բայց ա՛յն, ինչ այստեղ ուզում եմ պատմել,
Վոչ վոք վոչ մի տեղ յերբեք չի լսել։

Մեկ անգամ, բահը գետնին քարշ տալով,
Անցնում եր մի աղջիկ Կրեմլի բակով։
Որը արև եր։ Խոտն եր կանաչում,
Առվակներն եյին փրփրում, կարկաչում,
Ցեվ յերկու փոքրիկ ճնճղուկներ սիրուն
Վորս եյին ճանկել— բռնել մի մրջյուն։
Ճչում են, ցատկում, բարձրանում նորից,
Կտցում են, հրհրում, փախչում իրարից։
Իսկ մրջյունիկը մեկ ձախ ու մեկ աջ
Քարի տակ մրտավ ու անցավ առաջ։

Նայում է աղջիկը, ձայնում է, քրքջում,
Կանգնել է անխռով, բարձր ու դիլ կանչում։
Դուրս յեկավ նույնպես Լենինը հանկարծ,
Նայում է, ժրպտում՝ աչքը կլկոցած։
Ապա կբռացավ, չչնջաց մի բան.
Աղջիկն ել բարձր տրվեց պատասխան.
— Շատ լավ վազում եմ, բայց դե ի՞նչ անեմ—
Ցեղբայրս հիվանդ է, ել ո՞ւմ հետ վազեմ։
Լենինն աչք ածեց, աղջկանը նայեց,
Ապա ժպտաց ու իր ձեռքը մեկնեց։
— Վազել սիրո՞ւմ ես, դե՛, արի վազե՛նք,
Ելի ուզում եր ինչ-վոր բան ասել,
Աղջիկը արդեն անցել եր առաջ,
Վազում եր՝ բաշլըղն ուսից ցած դցած։

Ծտերը մի կողմ փախան սարսափից,
Աղջիկը ցատկում է, ցած վազում բլրից։
Նրբա հետքերով Լենինն է վազում,
Աղջիկն առաջինն է— դարպասին հասնում։
Կանգնել է, քրքջում, ճչում բարձրաձայն.
—Լճակների վրայով Լենինը չանցա՞վ.—
Նայեց—Լենինը մոտ է դարպասին.
Աղջկա բաշլըղը բռնել է ձեռքին,
Ժպտում է նույնպես.— Հինգ տարեկան ես,
Սակայն մեծից լավ վազել կարող ես,
Բաշլըղ, վերարկու յեթե չես կորցնի—
Մի տարի անց քեզ վոչ վոք չի հասնի։
Վերջացրեց, սրբեց իր դեմքից քրտինք.
—Մեծացի՛ր, դարձիր դու լավ բոլշևիկ։
Լենինը գընաց։
Կրեմլի առվի վողջ յերկարությամբ
Առվակն եր փրփրում, խոտն եր կանաչում,
Ծիտիկներն եյին ցատկում խնդությամբ,
Ուրախ, յերջանիկ աղջիկն եր անցնում։
Նրանից յերջանիկ— չկար վողջ Կրեմլում,
Նրանից յերջանիկ— չկար վողջ յերկրում։

---

38. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ

1888 թվականին ծնողներս ինձ տվին Գորու ծխական դպրոցը: Դասարանում յես նստած եյի Իոսիֆ Ջուղաշվիլու հետ մի նստարանի վրա: Յես թույլ սովորող եյի, և իմ ընկերը, Սոսոն, միշտ ուրախությամբ ոգնում եր ինձ:

Մեր դասարանում սովորում եյին հարուստների ու չքավորների յերեխաներ: Հարուստների յերեխաներն իրենց հեռու եյին պահում մեզնից, չքավորներից: Նրանց հարաբերությունները մեզ հետ աստիճանաբար սրվում եյին նաև այն պատճառով, վոր Ստալինը, վորն առաջին աշակերտն եր համարվում դասարանում, մեզնից եր:

Ստալինը բացառիկ հիշողություն ուներ: Դասատուների բացատրությունները նա հիանալի յուրացնում եր և ապա ստույգ վերարտադրում:

Նա յերբեք չեր հրաժարվում իր խոսքերից, միշտ հավատացած լինելով, վոր դրանք ճիշտ են:

Նա հիանալի պատասխանում եր, յերբ կանչում եյին գրատախտակի մոտ: Այդ ամենն ել ավելի յեր զայրացնում հարուստների յերեխաներին և նրանք յուրաքանչյուր հարմար առիթով վրեժ եյին լուծում մեզնից:

Իոսիֆը դերք չատ եր սիրում և մեզ գրավիչ կերպով պատմում եր կարդացածի մասին: Նրա պատմությունները անչափ հետաքրքիր եյին և հուզող, վորը լսելու համար հավաքվում եյին նաև հասակավորները: Իմ հորեղբայրը սովորաբար չնորհակալություն եր հայտնում Սոսոյին, և խնդրում ավելի հաճախ այցելել մեր տուն:

Դասատու Իլուրիձեն համառորեն հետապնդում եր «կորել» Իոսիֆին, վորպես մեր խմբի առաջնորդի: Նա մեզ անվանում եր «աղքատների ու դժբախտների յերեխաներ»:

Մի անգամ Իլուրիձեն գրատախտակի մոտ կանչեց Իոսիֆին և հարցրեց.

— Քանի՞ վերստ է Պետերբուրգից մինչև Պետերդոֆ:

Սոսոն ճիշտ պատասխանեց: Բայց ուսուցիչը չհամաձայնեց նրա հետ: Իսկ Սոսոն պնդում եր իր ասածի վրա և չեր զիջում:

Նրա համառությունը, իր խոսքերից հրաժարվել չցանկանալը սաստիկ զայրացրին Իլուրիձեյին: Նա սկսեց սպառնալ և պահանջել, վոր Իոսիֆը ներողություն խնդրի, բայց վերջինս հաստատակամ բնավորություն ուներ: Նա նորից մի քանի անգամ կրկնեց միևնույն բանը, հայտարարելով, վոր ինքն իրավացի յե: Նրան մյացան աշակերտներից մի քանիսը և այս հանգամանքն ել ավելի զայրացրեց ուսուցչին: Նա սկսեց գոռալ ու հայհոյել: Իոսիֆը կանգնած եր անշարժ, նրա աչքերը զայրույթից լայնացել եյին...

Այդպես ել նա չզիջեց:

***

Այն տարիներին Ստալինը լինում եր մեզ մոտ, գյուղում, և գյուղում յեղած ժամանակ պարապում եր—դասեր եր տալիս գյուղացիների յերեխաներին: Նա գրքեր եր կարդում նաև հասակավորների համար, պատմում ու բացատրում նրանց համար անհասկանալի տեղերը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բացառիկ— սովորականից դուրս, հազվագյուտ:
2. Վերարտադրել—խմացածը պատմել, վերհիշել:
3. Գրավիչ—դուրեկան, գրավող:
4. Ստույգ—ճիշտ, խոկությամբ:

---

39. ՍՏԱԼԻՆ

Մեր լեռնային աղբյուրների
Կարկաչախինդ ջուրը քեզ,
Ծաղկածիծաղ բլուրների
Անմահական բույրը քեզ:

Մեր դաշտերի անծայրածիր
Մով արտերի հուրը քեզ,
Յեվ անթառամ պարտեզների
Բուրումնալի վարդը քեզ:

Մեր սրտաբուխ յերգիչների
Սիրո անհուն յերգը քեզ,
Ժողովրդիս անվերջ ուրախ
Ու բոցավառ սիրտը քեզ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Կարկաչախինդ—ուրախ կարկաչող:
2. Մով—կապույտ:
3. Սրտաբուխ—անկեղծ, սրտից բղխած:

40. ԻՆՉՈՒ ՅԵՄ ՍԻՐՈՒՄ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

(Յակուտացի յերեխայի պատմածը)

1

Մեր յերկիրը՝ Յակուտիան, Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսին մոտ է գտնվում, Լենա գետի ափին: Մեր յերկիրը մեծ է և ծածկված է խիտ անտառներով (տայգա): Յակուտիայի տայգաներում վայրի գազաններ շատ կան — արջեր, սամույրներ, կզաքիսներ և այլն: Շատ կան նաև սկյուռներ:

Իմ հայրը չորս տարեկան է յեղել, յերբ թոքախտից մեռել է պապս: Հայրս մնացել է իր մոր հետ, մենակ: Մի տարի անց մայրը կուրացել է յերկու աչքով: Նրանք մնացել են բարեկամների խնամքին: Ամբողջ տարին սպասով են կերակրվել— մի բուռ պլյուր, յերբեմն էլ ծառի մանրած կեղև:

Մեր շրջանում միայն մի դպրոց է յեղել, այն էլ մեր գյուղում: Իննսուն կիլոմետր տարածության վրա ուրիշ դպրոց չի յեղել: Դպրոցում սովորում էին միայն տասնչորս յերեխա:

Դպրոցը գտնվում եր մի փոքր, մութ խրճիթում: Պատուհաններին ապակու փոխարեն սառույց եր դրած: Մութն ընկնելիս մոմեր էին վառում:

Որական չորս անգամ ուսուցչուհին հավաքում եր աշակերտներին, կանգնեցնում եր սրբապատկերի առաջ ու ստիպում ռուսերեն աղոթքներ ասել: Ով վատ եր աղոթում, նրան ստիպում եր չոքել սուր փայտերի վրա:

Չորս տարվա ընթացքում հայրս սովորել եր միայն այբուբենն ու ռուսական չորս աղոթք:

Հայրս այնուհետև ծառայության է մտնում մի հարուստ վաճառականի մոտ, հետո արդյունաբերող

Վորսորդների հետ գնում է Բևեռային գոտում ծառայելու: Այդ աշխատանքներին գնացողներից յուրաքանչյուրի մեջքին յերեք հատ տախտակ եյին կապում՝ մահվան դեպքում դագաղ չինելու համար:

1919 թ. հայրս վերադարձավ: Այդ ժամանակ Յակուտսկում բանվորներն արդեն տապալել եյին սպիտակ գեներալ Կոլչակի լուծը:

Դեռ յերկար ժամանակ տեղական կուլակներն ու Հաճառականները կռվում եյին Խորհրդային իշխանության դեմ: Նրանց ոգնում եյին սպիտակ գեներալները: Իմ հորը նշանակեցին կարմիր Ջոկատի պետ:

Այսպես եր պատմում հայրս:

2

Այժմ յես ձեզ կպատմեմ, յերեխաներ, թե ի՞նչպես եմ ապրում: Իմ անունն է—Իլյա: Տասներկու տարեկան եմ: Պիոներ եմ: Ութ տարեկան եյի, յերբ դպրոց մտա: Մեր շրջանում այժմ տասնվեց դպրոց կա: Յակուտիայում այժմ բոլոր յերեխաները սովորում են: Դպրոցը նոր է, լուսավոր, դասարաններում և միջանցքներում ծաղկամաններ կան: Ամենից շատ յես սիրում եմ ռուսերեն և ֆիզկուլտուրա:

Արդեն մի տարի յե՝ Մոսկվայումն եմ: Հայրս ուսանող է: Այս ձմեռ նա վերջացնում է ուսումը և մենք Յակուտիա կվերադառնանք: Յես չտապում եմ՝ չուտով իմ ընկերներին տեսնելու:

Յես նրանց կպատմեմ Լենինի դամբարանի, Հեղափոխության թանգարանի մասին: Կպատմեմ մետրոյի մասին: Ինչպե՞ս դեղեցիկ է ու հետաքրքրական, ինչպե՞ս են գնում-գալիս գետնի տակ գնացքները: Կպատմեմ կենդանաբանական այգու մասին: Ամենից շատ ինձ դուր յեկան փիղն ու կապիկները: Այս ամառ

յես հանդիպացա Մոսկվայի մոտի պիոներական ճամբարներից մեկում:

Հաճախ վիճում եմ մայրիկիս հետ, թե յես ի՞նչ եմ դառնալու, յերբ մեծանամ: Մայրիկս ուզում է, վոր յես բժիշկ դառնամ:

— Մեր ժողովրդին բժիշկներ են պետք,—ասում է նա:

Իսկ յես ուզում եմ... ոդաչու դառնալ:

Յերբ հայրիկս պատմում է իր սարսափելի ծանր անցյալի մասին, տխրում եմ, իսկ նա ինձ սիրտ է տալիս:

— Այժմ այդ բոլորն անցել է, հիմա մեր ժողովուրդը զոհ է, ունևոր. խեղճեր ու տգետներ ել չկան. Յակուտյան ծաղկում է, դուք բոլորդ կմեծանաք և կոգնեք ժողովրդին:

Յես գիտեմ, վոր Խորհրդային իշխանությունը փրկեց մեզ կորստից. յես գիտեմ, վոր Յակուտիան ծաղկում է ընկեր Ստալինի հոգատարության շնորհիվ:

Ահա թե ինչու յես անչափ սիրում եմ ընկեր Ստալինին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Սամույր, կզաքիս—թանկարժեք մորթով կենդանիներ:
2. Բևեռ—յերկրագնդի հյուսիսային (այս դեպքում) ամենահեռավոր կետը ցուրտ գոտում:
3. Դամբարան—գերեզման:
4. Մետրո (մետրոպոլիտեն)— ստորերկրյա ելեկտրական յերկաթուղի:

41· ՈՐՈՐ

Ննջի՛ր, մանկի՛կ իմ դեռատի,
Ննջի՛ր, դիշե՛ր ե կապույտ,
Հայրդ անվախ մի նավաստի—
Ծովն ե մտել ծփանուտ։

Հայրդ կարմիր մի նավաստի
Մեր ջրերն ե հսկում միշտ,
Ննջի՛ր, մանկի՛կ իմ դեռատի,
Արտուտի պես դու անվիշտ։

Ծովից հսկա՛, ծովից ել մեծ
Մեր հայրենիքն ե ազատ,
Հոկտեմբերն այն քեզ նվիրեց,
Ննջի՛ր, մանկի՛կ հարարատ։

Հարուստինն եր. հայրենիքն այդ,
Արյան գնով խլեցինք.
Հիմի մերն ե, մե՛րն ե միայն,
Ննջի՛ր, պայծա՛ռ իմ մանկիկ։

Ձե՛նք տա մի թիզ՝ մենք թշնամուն
Մեր մեծ հողից հայրենի.
Ննջի՛ր, ծաղի՛կ իմ սիրասուն,
Մայրդ մատա՛ղ քեզ լինի...

———

42· ԱՌԱՋԻՆ ԹՌԻՉՔԸ

Ոդոստոսի յերեքին յես յեկա աերոդրոմ ու համարյա հույս չունեյի, վոր այդ որը պիտի թռչեմ։ Աերոդրոմի ճանապարհին մեր ավտոբուսը փչացավ։ Յես ուշացա։

Վազում եմ աերոդրոմով ու մտածում՝ «ափսո՛ս, ինչպե՛ս ուզում եմ թռչել...»

Աբևը մայր եր մտնում, իսկ յերեկոյան սովորաբար քամին խաղաղվում ե։ Նայեցի. իմ պարաշյուտը բերված ե։ Դիմում եմ Մոշկովսկուն.

— Ընկեր պետ, յես այսոր պիտի թռչե՞մ։

— Այո՛։

Զտեսնված ուրախություն պատեց ինձ։ Վերջապե՛ս։ Յեվ վոր ամենից կարևորն ե, շատ հանգիստ եյի զգում ինձ։ Իմ չորս կողմը դիտողների բազմություն հավաքվեց։ Աղջկա առաջին թռիչքն այն ժամանակ արտակարգ բան եր համարվում։

Մոշկովսկին ասում ե.

— Հագե՛ք կոմբինեզոնը։

Հրահանգչին նա հրամայեց.

— Ոգնեցե՛ք պարաշյուտը հագնելու և ստուգեցեք։

Հավաքվածները բարեսրտորեն սրախոսում ու հարցնում եյին.

Իսկ դուք չե՞ք վախենում։

Յես վախ չեյի զգում, բայց ուրախության հուզմունքից արագացել եր սրտիս խփոցը։

Բոլորն ինձ են նայում, իսկ յես մտածում եմ. «Իսկույն յես ձեզ ցույց կտամ»։

Մոտեցավ Մոշկովսկին։ Յես հարցնում եմ.

— Դո՞ւք պետք ե ինձ տանեք։

— Իսկ դուք այդպե՞ս եք ցանկանում։

— Իհա՛րկե։

Ցեռ նրան չատ եյի հարգում ու հաշատում։ Նրա հետ յես ինձ չատ վստահ եյի զգում։

Դեպի սավառնակի կողմը գնալիս ճանապարհին նա ամբողջ ժամանակ կատակում և ուրախ զրուցում եր։

Նատեցինք սավառնակը։

— Պատրաստ եք— հարցրեց Մոշկովսկին։

— Պատրաստ եմ։

Նա ինձ նորից նախազգուշացրեց.

— Յեթե սավառնակի թևի վրա վատ կզգաք, անհանգստություն կամ անվստահություն կնկատեք— վո՛չ մի դեպքում չթռչեք։ Հետ կգառնաք կարինը։ Դրանում վոչ մի ամոթ բան չկա։

— Այո՛, այո՛, լա՛վ, լա՛վ...

Բայց մտքումս վորոշել եմ, վոր վոչ մի դեպքում հետ չեմ դառնա։ Տասյան արդեն թռչում ե, կթռչեմ և յես։

Ցերը պոկվեցինք գետնից, իմ մտքերը կենտրոնացան մի բանի վրա։ Ցեռ կարող եյի մտածել միայն թռիչքի մասին։ Ժամանակ առ-ժամանակ նայում եյի Մոշկովսկուն։ Նա ժպտում եր ինձ։ Ժպիտը չատ եր վոգևորում։

Նայեցի ներքև։ Գետինն ինձ յերևաց հեռու, և ինձ այնպես եր թվում, վոր թռչելու յեմ վոչ թե գետին, այլ գեպի ոդը, տարածության մեջ։ Ցեռ նայեցի ալտիմետրին։ Վեցհարյուր մետրի վրա յենք։ Դա ամենից լաված վայրկյանն ե։ Հայելու մեջ նայում եմ Մոշկովսկուն։ Նա ցույց ե տալիս սավառնակի թևը։ Ցեռ բարձրացա։ Այդ վայրկյանին չքացավ վոգջ հուզմունքս։

Սավառնակի թևի վրա յելա չատ հեշտությամբ։ Քամին այնքան ուժեղ չե, ինչպես սկզբից թվում եր։ Սավառնակը գնում ե վոչ մեծ արագությամբ։ Մոշկովսկին ձայն ե տալիս.

— Ի՞նչպես եք զգում։

— Լավ։

— Պատրաստվեցե՛ք։

Բռնեցի ոդակը։ Պատրաստվեցի։

Այդ վայրկյանին յես չատ հանգիստ եյի, չեյի մտածում նույնիսկ այն մասին, վոր պիտի թռչեմ ու միայն լարված սպասում եյի հրամանին։

Մոշկովսկին մի անգամ ևս նայեց իմ կողմը...

— Գնացե՛ք։

Նա հրամայեց թե չե, յես թողի ձախ ձեռքս և անմիջապես ցատկեցի։ Թվաց, թե—քամին ինձ վերցրեց ու տարավ։

Նոր եյի կտրվել սավառնակից, քաշում եմ ոդակը, ցնցում ե, և պարաշյուտը բացված ե։

Նայեցի վերև։ Տեսա խայտաբղետ, վառ գմբեթ։ Բերկրալի յե, անդորրություն. հանդարտ ճոճվում եմ։

Ծագում ե առաջին միտքը. «Ինչո՞ւ չեմ իջնում»։ Թվում ե, թե կանգ եմ առել։ Նայում եմ գետնին— հեռու յե։ Նայում եմ չորս կողմը։ Տեսնում եմ սավառնակը։ Պատում ե դուրեկան հպարտության ինչ-վոր զգացում—ի՜նչ լավ ե, վոր չհրաժարվեցի։ Ցեռ իսկույն մտածեցի, վոր թռչելը վո՛չ միայն սարսափելի չե, այլ, ընդհակառակը, նույնիսկ հաճելի յե։

Գետինը մոտ ե։ Ելի մի քանի վայրկյան...Արդեն յերկրի վրա յեմ։

Մոտ վազեցին մարդիկ։ Հավաքեցին պարաշյուտը։ Ցեռ վոչ մեկին թույլ չտվի տանելու, այլ ինքս շալակեցի։ Մոտեցավ հրահանդիչը, շնորհավորեց ինձ ու վերցրեց պարաշյուտը։

Հետո մոտեցավ Մոշկովսկին։ Նա ինձ վոչինչ չասաց, բայց յես տեսնում եմ, վոր ամեն ինչ կարգին ե։

— Ինչպե՞ս եր, դուր յեկա՞վ։

— Շա՛տ։

Ցանկացա նորից թռչել։ Իհարկե թույլ չտվին։

Ստացա պարաշյուտիստի կրծքանշանը։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Աերոդրոմ — սավառնակների թռչելու և իջնելու հրապարակ (դաշտ):
2. Արտակարգ—անսովոր:
3. Կոմբինեզոն — ամբողջական զգեստ, որը հագնում են արտադրության մեջ, ոդաչուները և այլն:
4. Կաբին—փոքր առանձնասենյակ, խցիկ (սավառնակի):
5. Անիրական—վոչ իրական, դոյություն չունեցող:
6. Ալտիմետր—բարձրությունը չափող գործիք (բարձրաչափ):
7. Խայտաբղետ— գունդգույն, նախշուն:

ՀԱՐՑԵՐ

1. Ուրիշ վո՞ր կին ոդաչուների մասին եք լսել:
2. Ի՞նչ նշանավոր թռիչք կատարեցին Գրիզոդուբովան, Ռասկովան և Ոսիպենկոն 1938 թ.:

---

43. ԸՆԿԵՐ ՍԵՐԳՈՅԻ ՆՎԵՐԸ

Ցես դեռ յոթ տարեկան եյի, որ սկսեցի ելեկտրականությամբ հետաքրքրվել. կոճեր, մարտկոցներ եյի հավաքում, ելեկտրական զանգ, հեռախոս եյի սարքում...

Ցերբ մենք ընտանիքով փոխադրվեցինք տրակտորի գործարան, վորոշեցի ելեկտրական ավտո կառուցել, բայց այնպիսին, որ կարողանար 18 ժամ անընդհատ աշխատել. միայն թե հարմար ելեկտրական մոտոր և գործիքներ չունեյի: Շատ մտածեցի, թե ոգնության համար ում դիմեմ և վորոշեցի. պետք է նամակ գրել ընկեր Որջոնիկիձեյին:

Վոչ վոքի բան չասացի: Նստեցի, սկսեցի գծագրել և պատրաստեցի այն, ինչ վոր պետք եր: Հետո գրեցի

նամակս, վոր ուզում եմ ելեկտրական ավտո շինել, բայց մոտոր և գործիքներ չունեմ:

Նամակս ծրարեցի և հասցեն գրեցի.

Մոսկվա, Կրեմլ, ընկեր Որջոնիկիձեյին:

Մի ամիս անցավ. սառուցումների շրջանն եր. թվաբանությունից սառուցում ունեյի, յեռանդով պարապում եյի, բացի թվաբանությունից ուրիշ բանով չեյի զբաղվում:

Մի որ հանկարծ դպրոցի դիրեկտորը կանչում ե ինձ. «ի՞նչ ե պատահել»,— մտածում եմ. «չե՞ վոր վոչ մի անկարգ բան չեմ արել»:

Ցերբ ներս մտա դիրեկտորի սենյակը, նա առաջարկեց ինձ դասարանի ղեկավարի հետ միասին գնալ տրակտորի գործարանը:

Գնացինք. մեզ ընդունեց գործարանի դիրեկտորը:

— Այդ դո՞ւ յես պիոներ Սուսլովը,—հարցրեց նա:

— Այո՛... յես եմ,— պատասխանեցի:

— Ընկեր Որջոնիկիձեյին նամակ գրե՞լ ես:

— Գրել եմ:

Պարզվեց, վոր նամակս ստացել են և գծագրերիս ծանոթացել: Ցերբ մեր գործարանի դիրեկտորը գործով Մոսկվա յե գնում և ներկայանում ընկեր Որջոնիկիձեյին, նա պատմում ե դիրեկտորին.

— Պիոներ Սուսլովը հետաքրքրվում ե ելեկտրականությամբ, կանչիր մոտդ, ծանոթացիր և ոգնիր նրան:

Դիրեկտորն ինձ մի հիանալի փոքրիկ, դեղեցիկ մոտոր տվեց: Մոտորի վրա մի թիթեղ եր կպցրած և վրան գրված.

Վոլոդյա Սուսլովին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մոտոր—շարժիչ մեքենա:
2. Թիթեղ—յերկաթե բարակ թերթ:

44. ՎՈՍԿԻ ՁԿՆԻԿ

1

Մի ծերուկ ձկնորս և իր պառավ կին
Բնակվում էին մեծ ծովի ափին.
Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից,
Պառավն էլ տանը թել մանում բրդից.
Այսպես մի տասին՝ մի հին դեռնատան
Ցերեսուներեք տարի ապրեցան։

Ահա մեկ օր էլ ծերը գնաց ծով,
Վոր ձուկը վորսա իր մաշված ցանցով։
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,
Առաջին անգամ միայն տիղմ հանեց.
Յերկրորդ անգամը ցանցը ձգեց ծով—
Ցանցը դուրս յեկավ ծովային խոտով.
Իսկ յերրորդ անգամ վոր ցանցը ձգեց,
Չես կարող ասել, թե ի՞նչ դուրս հանեց.
Նա բերավ իր հետ մի վոսկի ձկնիկ,
Զկանց արքայի զուտարը դեղեցիկ.
Ծերի ցանցն ընկավ երբեմ խեղճ դերի
Վոսկի աղջիկը ձուկ-թագավորի։
Խե՛ղճ վոսկի ձկնիկ, ի՞նչպես ե խնդրում,
Մարդկային լեզվով ծերին աղաչում.
«Թո՛ղ ինձ, թո՛ղ, ծերո՛ւկ, թո՛ղ ինձ անվանդ,
Քեզ կվճարեմ թանկագին փրկանք.
Ինչ սիրտդ ուզե, ինչ վոր կամենաս,
Ուզիդ եմ ասում, ինձնից կստանաս»։

Վախեցավ ծերը, մնաց զարմացած.
Նա այնքան տարի ձկնորս եր յեղած,
Բայց ձկան մասին յերբեք չեր լսել,
Թե նա մարդու պես կարող ե խոսել։

«Գնա՛, ապրիր դու,— ասաց ծերունին,—
Ինձ չի հարկավոր փրկանք թանկագին.
Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»։

Այս դեպքից հետո ծերը տուն դարձավ,
Պատմեց պառավին, թե ինչ բան տեսավ.
«Այսոր յես ծովից, գիտե՞ս ինչ, ա՛ կնիկ,
Բռնեցի հանկարծ մի վոսկի ձկնիկ.
Վոսկի յեմ ասում, և վոչ քո գիտցած.
Այսպիսի հրաշք վոչ վոք չի տեսած։
Նա խոսել գիտեր ուզիդ մեր լեզվով,
Աղաչանք արավ, վոր յես ձգեմ ծով»։
«Թո՛ղ— ասաց, խնդրեմ, թո՛ղ ինձ անվտանգ,
Քեզ կվճարեմ թանկագին փրկանք»։
Բայց յես վոչ մի բան չպահանջեցի,
«Վոչինչ չեմ ուզում, գնա՛,— ասացի.
Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառավը յերբ վոր այս բանը լսեց՝
Խեղճ ալևորին շատ հանդիմանեց,
Թե ինչո՛ւ ձկնից փրկանք չի ուզել,
Ու այնպես ձրի յես ծովն ե ձգել։
«Ա՛յ հիմար, անմիտ,— հայհոյեց ծերին,—
Գոնե կասեիր դու վոսկի ձկնին.
«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կնկան,
Մերը կոտրած ե, ել չե պետքական»...

Դարձավ ծերունին, ծովի ափ գնաց,
(Տեսավ նա ծովը մեղմիկ ծածանված).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին,
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ»,— հարցրեց։
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, թագուհի ձկնիկ,
Ինձ նախատում ե իմ պառավ կնիկ,
Հանգիստ չի թողնում խեղճ ալևորիս,
Վրաս մրթմրթում, ուշունց ե տալիս.
Մի նոր տաշտակ ե հարկավոր իրան,



Մերը կոտրած է, էլ չէ պետքական»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ համարձակ, մի՛ տխրիր,— ասաց,—
Թող քո պառավը շատ չնեղանա.
Այսոր նա մի նոր տաշտակ կունենա»...

3

Ցետ դարձավ ծերը դեպի իր տնակ,
Տեսավ կնկա մոտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը գոհ չեր. նա այս անգամ էլ
Սկսեց ծերին սաստիկ նախատել.
«Գնացիր, անխե՛լք, տաշտակ ուզեցիր,
Ինչո՞ւ մի ուրիշ բան չինդրեցիր,

Ցետ դնա չուտով անմիտ, անասուն,
Գլուխ տուր նրան և ուզիր մի տուն»...
Ծերունին դարձավ, ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը պղտորված).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ»,— հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինես, թագուհի ձկնիկ,
Ինձ շատ նախատեց իմ պառավ կնիկ.
Խեղճ ալևորիս հանգիստ չի թողնում,
Հիմա էլ կատղել, մեկ տուն է ուզում»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ համարձակ, մի՛ տխրիր,— ասաց.—
Թող լինի այնպես՝ ինչպես կամենաք.
Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»...
Ծերը յետ դարձավ կրկին դեպի տուն.
Էլ նա չգտավ իր հին գետնատուն.
Մի նոր տուն տեսավ լուսամուտներով,
Կտուրից հանած ծխահաններով,
Պատ ու վառարան մաքուր սվաղած,
Կրով ու կավճով սպիտակացրած,
Վարպետի տաշած կաղնի տախտակից
Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից:
Պատուհանի տակ կինն ուռած նստել,
Իր չարությունից ուզում է տրաքել.
Ի՛նչ անեծք ասես աշխարհքիս տակին,
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.
Վերջը, յերբ փոքր ինչ բարկությունն իջավ՝
Մուրթը կախած ծերունուն դարձավ.
«Անշնորհք ծերուկ, տնա՛կ ուզեցիր,
Ցերևի քո մեջ մե՛ծ բան կարծեցիր.
Ցե՛տ դարձիր, անխելք, յե՛տ դարձիր, գնա՛,
Վոսկի ձկնիկին իմ կողմից ասա՛,



Վոր էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին,
Ուզում եմ լինել գերազնիվ տիկին»...

4

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը վրդովված).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Զուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ»,— հարցրեց։
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմա՛ծ լինիս, թագուհի ձկնիկ,
Հանդիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ,
Էլ չի կամենում մնալ գեղջուկ կին,
Ուզում է լինել գերազնիվ տիկին.
Զգիտեմ՝ գլուխն ի՞նչ քամի մտավ,
Վոր գեղջկությունից հանկարծ ձանձրացավ»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ դու հանդիստ, մի՛ տխրիր,— ասաց.
Թող քո պառավը հենց այսորվանից
Ազատ համարվի իր գեղջկությունից»...
Ցետ դարձավ ծերը, և ինչ՞ է տեսնում.
(Կարծես ցնորք է աչքին յերևում).

Մի տուն հոյակապ, վերնասրահում
Պառավն է կանգնած ինչպես նոր խանում.
Հագին սամուրե բաճկոնակ սիրուն,
Գլխին դիպակե չարդաթ դուլնդուլն,
Վիզը զարդարած մարգարիտներով,
Մատերին մատնիք անգին քարերով.
Մաշիկներն՝ ինչպես կաս-կարմիր վորդան,
Մյուս հագուստներն էլ մեռաքս պատվական.
Ծառաներ ունի մի քանի տասնյակ,
Բոլորն էլ իրեն հլու հպատակ։
Մարդուն վոր տեսավ, պառավը կատղեց,
Խեղճ ծառաներին ծեծել սկսեց.
(Յերևի ուզեց ցույց տալ ծերուկին,
Վոր հիմա ինքն է գերազնիվ տիկին)։
Հայհոյանք թափեց ամենքի վրա,
Տեղի-անտեղի քոթկեց անխնա,
Մեկի մազերից բռնեց, քաշքշեց,
Մյուսին մի լավ ապտակներ զարկեց։
Ծերը մոտեցավ դողդող քայլերով,
Ասաց պառավին՝ խոր գլուխ տալով.
«Բարո՛վ գերազնիվ խանում-խաթունիս,
Հիմա խոմ գո՞հ ես, հանդիստ կլինիս»...
Պառավ տիկինը այնպես բղավեց,
Վոր խեղճ ծերունու լեղին պատռվեց.
Նրան հրամայեց, վոր իսկույն գնա,
Գոմն ավլե, քերե ու այնտեղ մնա։

5

Մեկ-յերկու չարաթ հագիվ անց կացավ՝
Պառավ խանումը նորից կատղեցավ.
«Շուտ կանես, կերթաս,— ասում է մարդին,—
Ու իմ կողմից դու կասես ձկնիկին,
Վոր էլ չեմ ուզում տիկնություն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Այս խոսքի վրա ծերունին սոսկաց
Ցեվ աղաչելով պառավին ասաց.
«Դժվե՞լ ես, ա՛ կնիկ, յես չեմ հասկանում,
Արդյոք դու դիտե՞ս՝ ինչ ես ցանկանում.
Մեկ նայի՛ր վրադ, չենք ու շնորհքիդ,
Լբլբան լեղվիդ, ծուռ ու մուռ քայլքիդ.
Սիր ի՞նչ ունիս Թագուհու վայել,
Վոր խելքիդ այդպես քամի յե փչել.
Արի, լսիր ինձ, մի՛ անիր այդպես,
Ամբողջ աշխարհին կծիծաղացնես»...
Եվ չհամբերեց մեր պառավ տատը,
Վոր վերջացներ մարդն իր խրատը.
Նա այնպես գոռաց, այնպես վորոտաց,
Վոր ամբողջ տունը հիմնովին թնդաց.
«Ինչպե՞ս թե այդպե՛ս, հանդուգն ստահակ»,—
Գոչեց ու գարկեց մի ուժգին ապտակ.—
«Համարձակվո՞ւմ ես, գռեհի՛կ անդետ,
Վիճել ինձ նման ազնիվ տիկնոջ հետ.
Քեզ հրամայում եմ պատվավոր խոսքով,
Վոր իսկույն գնաս քո հոժար կամքով,
Ցեթե վոչ՝ ահա ժողովված կշտիդ՝
Սրանք կոտանեն խփելով վզիդ»:

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը սևացած).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.

«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ»,— հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.

«Վողորմա՛ծ լինիս, Թագուհի ձկնիկ,
Ելի յե կռվում իմ պառավ կնիկ.
Ների՛ր ինձ, խնդրեմ, յես ամաչում եմ,
Վոր չար պառավիս նոր ուզածն ասեմ.
Բայց վո՞ր ջուրն ընկնեմ, հանդիստ չի Թողնում,
Կրակն ե գցել, այրում, խորովում.

«Գնա՛,— ասում ե,— ա՛խ, նզովյա՛լ կին—
Շո՛ւտ գնա, ասա՛, վոսկի ձկնիկին,
Վոր ել չեմ ուզում տիկնուհի յուն անել,
Ուզում եմ ազատ Թագուհի լինել»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ դու հանդիստ, մի՛ տխրիր,— ասաց—
Թող քո պառավի ուզածը լինի,
Թող գնա դառնա ազատ Թագուհի»:

6

Ո՞վ կարե պատմել, Թե ծերն ինչ տեսավ,
Ցերը ձկան մոտից տուն վերադարձավ.
Ել ի՞նչ տուն, ի՞նչ բան. դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական
Մեծ–մեծ պալատներ շարեշար կանգնած,
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.
Շքեղ դահլիճներ, անթիվ սենյակներ,
Մարդ կշշկլվեր, յեթե մեջն ընկներ:
Ծերը բարձրացավ մարմար սանդուխքով,
Մի դահլիճ մտավ մեծ պատկառանքով.
Առջևը բացվեց մի նոր տեսարան,
Ցերը այդտեղ գտավ իր պառավ կնկան.—
Նա հիմա ազատ Թագուհի դառած՝
Առոք ու փառոք ճաշի յե նստած.
Մեծ–մեծ խչխաններ, խաներ ու բեգեր
Վոտքի յեն կանգնած վորպես ծառաներ,
Թագուհու համար գինի յեն ածում
Ցեվ ահ ու դողով աչք–ունքին նայում:
Շեմքում կանգնել են ահեղ զինվորներ,
Ուսերին բռնած կացնաձև սրեր:
Մենակ պառավն եր սեղանին բազմել.
Ո՞վ կհանդգներ նրա հետ նստել.
Բայց կերակուրներն այնքան շատ եյին,

Վոր հարյուր հոգի կկշտացնեին.
Ցեվ քանի՛ տեսակ անծանոթ բաներ,
Ի՞նչ անուշեղեն, ի՞նչ տապականեր...
Պառավն ուտում եր մեծ ախորժակով
Ու գինին դարտկում լիքը բաժակով.
Վերջն եվ մեղրահաց կերավ բավական,
Վոր քաղցրացնե շրթունք ու բերան:
Ծերն այս տեսնելով՝ մնաց չվոթված,
Ընկավ պառավի վոտքերն ու ասաց.
«Բարո՛վ քեզ, բարո՛վ, ահեղ Թագուհի,
Քո մեծությունը հավիտյան լինի»:
Այս խոսքից հետո կամաց չչնչաց
Ու փսփսալով պառավին ասաց.
«Հիմա վոր բախտի վերին ծայրումն ես,
Խոմ բավակա՞ն ես, ա՛ կնիկ, ի՞նչ կասես»...
Թագուհի դառած պառավն այս անգամ
Մարդի յերեսին չնայեց անգամ.
Հրաման մրմռաց նա քթի տակին,
Վոր դուրս վանդեն մեր անկոչ հյուրին:
Հենց վոր լսեցավ Թագուհու հրաման՝
Հնազանդ յերևալ ամենքն ուզեցան.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բեղեր,
Ինչպես վորսորդի արնախում շներ,
Խփելով ծերի շրջնքակոթին,
Շքեղ դահլիճից դուրս վանդեցին.
Շեմքումը կանգնած պահապաններն եվ
Գիշատիչ ճանկերն եյին պատրաստել.
Վրա վազեցին ամենքը մեկեն
Ու քիչ մնաց, վոր խեղճին պլոկեն:
Ինչպես վոր յեղավ՝ մի կերպ դուրս պրծավ,
Դուրսն եվ ամրոխի ծաղրի տակն ընկավ,
Վոր կարծես նրան լիներ սպասում.
Անձրևի տակին, ցեխոտ փողոցում.
«Ա՛յ թե լավ արին, ծերո՛ւկ դու անգետ,

Ո՞ւմ հետ ես մեկնում անճոռնի վոտներդ.
Թող այդ քեզ համար լինի լավ խրատ,
Վոր եվ չցանես մանր կտավհատ»...

7

Այս դեպքից հետո շատ որեր չանցան,
Պառավի այծերն ելի մոտ յեկան.
Ուղարկում ե նա իր իշխաններին,
Վոր գտնեն, բերեն արտաքսված ծերին:
Ցեկավ ծերունին: Պառավն սկսեց.
«Դու պետք ե գնաս ձկան մոտ,— ասեց.—
Կերթաս, խոր գլուխ կտաս դու նրան,
Ու իմ փափագս կհայտնես իրան.
Կասես՝ չեմ ուզում մնալ Թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի,
Ուզում եմ Ովկյան ծովումը կենալ,
Վոսկի ձկնիկին ծառա ունենալ,
Վոր իմ հրամանին միշտ պատրաստ լինի
Ու ինչ ուզենամ՝ իսկույն կատարի»...
Պառավին լսեց ծերը լուռ ու մունջ,
Առանց հայտնելու վորևե արտունջ:
Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ ծովը խիստ եր փոթորկված,
Փրփրած ալիքները սարեր դառնալով՝
Իրար են զարկում ահեղ գոռալով):
Վողբաձայն կանչեց վոսկի ձկնիկին.
Զուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ,— հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմա՛ծ լինես, Թագուհի ձկնիկ,
Իսպառ գժվել ե իմ պառավ կնիկ.
Ի՞նչ անեմ արդյոք այդ նզովյալին,
Մինչև յե՞րբ տանջվեմ տխմարի ձեռին.

Եվ չի կամենում թագուհի լինել,
Այլ, տե՛ս, անիծածն ի՞նչ միտք է արել.—
Իշխել է ուզում բոլոր ջրերին
Ու իշխանուհի դառնալ ծովերին.
Ուզում է Ովկյան ծովումը կենալ,
Վոսկի ձկանդ ծառա ունենալ,
Վոր իր հրամանին միշտ պատրաստ կենա,
Ու ինչ ուզենա՝ շուտ կատարում տաս»...
Վոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
Բայց ել ծերունուն չպատասխանեց.
Ջրի յերեսին շրմփաց պոչով
Ու անցավ— գնաց դեպի խորին ծով...
Շատ մնաց ծերը և շատ նայեցավ,
Բայց վոսկի ձկնիկն ել չերևեցավ:
Դարձավ գլխակոր, վոր հայտնե կնկան,
Թե ի՞նչ փորձանքի մեջ գցեց իրան...
Ցեվ գնաց, տեսավ... բայց ի՞նչ տեսնի լավ,
Վոր արդար լինի և վոչ անիրավ.
Հին խուղի շեմքում պառավը նստած,
Կոտրած տաշտակն ել առջևն է ընկած...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցանց—*ուռկան, ձուկ բռնելու գործիք:*
2. Տիղմ—*ցեխ:*
3. Դուստր—*աղջիկ:*
4. Փրկանք — *գերուն ազատելու վճար:*
5. Ծածանվել—*շարժվել, մեղմ որորվել:*
6. Ալեվոր — *ծերունի:*
7. Մռութը կախել—*նեղանալ:*
8. Գերազնիվ—*ազնվական:*
9. Սամույր — *թանկագին մորթի:*
10. Ցնորք—*տեսիլ, յերևակայական պատկեր:*
11. Բանկոնակ — *վերնաշոր:*
12. Դիպակ— *թանկագին կտոր:*
13. Մաշիկ—*ոտային թեթև կոշիկ (չուստ):*
14. Կարմիր վորդան—*կարմիր ներկատու միջատ:*

15. Վայել — *արժանի:*
16. Ստահակ— *անամոթ, համարձակ:*
17. Անգետ—*ուշետ:*
18. Արքայական—*թագավորական:*
19. Ապարանք—*պալատ:*
20. Պատկառանք—*հարգանք, պատիվ:*
21. Բուրգ—*աշտարակ:*
22. Տապակա—*տապակած ուտելիք:*
23. Այծերն յեկան— *բարկացավ, չարացավ:*
24. Արտաքսված—*վռնդված:*
25. Խուղ— *դատնատուն:*

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ եր պահանջում պառավը ձկնիկից ամեն մի անգամ:
2. Ի՞նչպես եր վարվում պառավը, յերբ՝ ա) գեղջկուհի յեր, բ) գերազնիվ տիկին, գ) թագուհի յեր:
3. Ի՞նչպես եր վերաբերվում ծերուկը պառավի պահանջներին:
4. Վոսկի ձկնիկն ինչո՞ւ մերժեց պառավի վերջին խնդիրը:
5. Ինչո՞ւ այս գրվածքը հեքիաթ է կոչվում:

---

1. *Հեքիաթը մասերի բաժանեցեք և ամեն մի մասին վերնագիր դրեք:*
2. *Այս հեքիաթը կարդացեք դերերով (հեղինակ, պառավ, ծերուկ, վոսկի ձկնիկ):*
3. *Նկարագրեցեք պառավի նիստ ու կացը, տունն ու տեղը, շրջապատողներին՝ տարբեր պայմաններում:*
4. *Համեմատեցեք ծովի դրությունը պառավի տարբեր պահանջներից հետո:*

---

45. ՄԻ ԴԵՊՔ ՖՐՈՒՆԶԵՅԻ ԿՅԱՆՔԻՑ

1907 *թվին ընկեր Ֆրունզեն աշխատում եր Շույա քաղաքում: Բոլշևիկները պատրաստվում եյին Ցերկրորդ պետական դումայի ընտրություններին: Պետք եր թռուցիկներ բաց թողնել բոլշևիկներին ձայն տալու կոչով, իսկ տպագրելու հնարավորություն չկար:*

Ընկեր Ֆրունզեն առաջարկեց իր դրուժինայի ու-

Ժերով դրավել Լիմոնովին պատկանող տեղական տպարանը և այնտեղ տպագրել թռուցիկները։ Այդպես էլ արեցին։ «Զեռքերդ վեր»,— հրամայեցին զինված դրուժիններիկները տպարանի բանվորներին, բացատրեցին իրենց գալու նպատակը և առաջարկեցին չարել թռուցիկը։ Տպարանատեր Լիմոնովն, առանց վորևե բան կասկածելու, գալիս է տպարան։

— Բարև ձեզ, Լիմոնով,— ասում է նրան ընկեր Ֆրունզեն.— նստեցե՛ք, միայն առանց աղմուկի։

Գրաշարները չարում են, իսկ տպարանատերը նստած է՝ կարծես մեխված է տեղում։ Վախենում է շարժվել։ Անցնում է մեկ ժամ, յերկու ժամ։ Լիմոնովը կառքով եր յեկել ու կառապանին դեռ վող էլ չեր վճարել։ Կառապանն սպասեց, սպասեց, համբերությունը կտրվեց և մտավ տպարան՝ վարձն ստանալու։

— Բարև՛ ձեզ,— ասաց կառապանին Ֆրունզեն,— վերցրեք աթոռն ու նստեցեք։

Նստել է կառապանը մեկ ժամ, յերկու ժամ, իսկ նրա ձին փախել է արդեն։ Մի վոստիկան բռնեց փախած ձին և վազեց տպարան՝ կառապանի «դատաստանը տեսնելու»։

— Ա՛, պարոն վոստիկա՛ն, բարով յեկաք։ Վերցրեք աթոռը և նստեցեք։ Խնդրեմ ձեր թուրն ու ատրճանակը։ Մեր կազմակերպությանը կարող է պետք գալ։

Մյուս որը վողջ քաղաքը վողողված եր թռուցիկներով, և Պետական դումա անցավ բոլշևիկների պատգամավորը։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Պետական դումա—ցարական կարգերում այսպես կոչված՝ պառլամենտ, գլխավորապես ունևոր դասակարգերից ընտրված ներկայացուցչական մարմին։

2. Դրուժինա—բանվորներից բաղկացած հեղափոխական մարտական խմբակ (այս հոդվածում)։

3. Դրուժիննիկ—դրուժինայի անդամ։

46. ԱՆՎԱԽ ՀՐԱՄԱՆԱՏԸ

1

Այս բանը պատահեց Ստալինգրադ քաղաքի մոտ (այն ժամանակ Ցարիցին եր կոչվում)։

Սպիտակների զորքը մոտենում եր քաղաքին։

Վաղ առավոտյան յեկավ սուրհանդակը և հայտնեց, վոր գեներալը հրամայում է սպասել իրեն։

Գեներալին դիմավորելու ուղարկեցին մի ձիավոր և կարգադրեցին, վոր նա ձեռքը բարձրացնելով նշան տա, յերբ կմոտենա գեներալի ավտոն։

Ահա հեռվում յերևում է մեքենան՝ փոշու քուլաներում թաղված:

Մի վայրկյան կանգ առավ մեքենան, ապա շուռ յեկավ և սրնարշավ մոտեցավ ձիավորին, վորը մոտենում եր արդեն թշնամու թնդանոթներին:

Ձիավորը բարձրացրեց ձեռքը և դիմեց դեպի մեքենան:

— Ցերեքն են... Զինվորականներ են... Իհարկե, գեներալն է, ուրիշ ո՞վ կարող է լինել, — մտածեց ձիավորը:

Նա կանգնեցրեց տաքացած ձիուն, ձեռքը վստահ մոտեցրեց դլխարկին, ուզեց զեկուցել, բայց... քիչ մնաց ձիուց ցած ընկներ... Մեքենայի վրայի մարդկանց դլխարկներին կարմիր աստղեր կային:

Լավեց կրակոց: Ձիավորն ընկավ, իսկ ձին բաց դաշտում փոթորկի պես առաջ արշավեց:

— Գնդացի՛ր, գնդացի՛ր, այս կողմը... Շո՛ւտ... Կրակել դեպի ավտոն,— դուռում եյին թնդանոթների շարքերից:

Իսկ ավտոն սլանում եր դաշտում: Կրակել նրա վրա—անմտություն եր: Նրա և թնդանոթների միջով արշավում եյին յուրայինները, սպիտակները: Գնդակները կարող եյին նրանց կպչել:

2

Ձիավորներն սկսեցին հետապնդել ավտոյին: Սակայն շուտով հետ մնացին: Ավտոյից կրակում եյին անվրեպ: Ձիավորներից մեկն իսկույն ցած ընկավ, մյուսին տրորեց վիրավոր ձին, յերրորդը վայր սողաց թամբից: Մյուսները հաղիվ եյին զսպում իրենց ձիերին: Ավտոն շուտով չքացավ ծխի քուլաներում:

Բլրի հետևում ավտոն կանգ առավ: Մարտիկները ցած իջան մեքենայից:

— Լա՞վ անցանք, այնպես չե՞, թշնամու միջով,— հարցնում եր նրանց ավագը:

— Անցա՞նք, ընկեր Վորոշիլով, — իրար ընդհատելով ասում եյին մարտիկները: Միայն թե, ընկեր հրամանատար, ձեր մասին եյինք անհանգստանում:

Ահա մեկն այն դեպքերից, վոր հիշում են հին մարտիկները, յերբ հանդիպում են իրենց ժողկոմ ընկեր Վորոշիլովին:

---

47. ՄԻ ԴԵՊՔ ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ

Մի անգամ, առավոտյան արշալույսին, Շչորսը հետապնդում եր սպիտակ-գվարդիականներին: Նրանք փախչում եյին դեպի գետի կողմը:

Սպիտակ-գվարդիականներն անցան գետի մյուս ափը և իրենց հետևից այրեցին կամուրջը:

Շչորսն իր մարտիկների հետ սլացավ դեպի գետը, իսկ կամուրջն ամբողջովին գտնվում եր բոցերի մեջ:

Շչորսը հանեց իր սուրը.

— Առա՛ջ, վոչնչացնե՛լ թշնամուն...

Կարմիր բանակայինները կանգ առան իրենց տեղը և առաջ չշարժվեցին:

— Վտանգավոր է, ընկեր Շչորս, կամուրջը կըջարդվի:

— Ուշացե՛լ եք,— հեռվից ասացին սպիտակները, —էլ մեզ չեք հասնի:

Շչորսը բղավեց.

— Վախկոտները թող մնան այստեղ, իսկ քաջերը թող հետևեն ինձ:

Շչորսը թռավ իր ձին և նետվեց դեպի կրակը:

— Ուռա՛, — կանչեցին բոլոր մարտիկները և հետևեցին իրենց հրամանատարին:



Կամուրջը բոցավառվում էր և մաղ էր մնացել, վոր բոլորովին ջարդ ու փշուր լիներ: Բայց քաջ մարտիկները մահից չեն վախենում: Բոցավառվող կրակի միջից նետվեցին դեպի դեպի մյուս ափը:

Շուտով նրանք հասան սիպտակ-գվարդիականներին, չրջապատեցին նրանց և բոլորին դերի վերցրին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Մարտիկ—*կռվող (զինվոր)*:

2· Մազ էր մնացել—*քիչ էր մնացել*:

48· ԱՆՁՆԱԶՈՀ ՆԱՎԱՍՏԻՆ

1

Փոթորիկը մի փոքր հանգստացել էր: Հերթապահ նավաստիները հավաքվել էին քամուց պաչտպանված մի անկյուն ու հանգիստ զրույց էին անում: Դրանց

մեջ էր նաև «Պատիկ նավաստին»: Նրա իսկական անունը Կուչկին էր, բայց բոլորը նրան Պատիկ նավաստի էին ասում· յերբ մի անգամ ավագ նավաստին հարցրել էր, թե ո՞վ ես, նա պատասխանել էր... «Պատիկ նավաստի»: Ցեվ ճիշտ վոր, այդ անունը հարմար էր իրեն:

Նա մի կարճահասակ, լղար, թխադեմ յերիտասարդ էր, քսաներեք տարեկան, կենսուրախ ու բարի դեմքով: Ման էր գալիս արագ-արագ ու սիրում էր վայելուչ հագնվել: Նրա բոլոր շարժումները դուրեկան էին, և նրան նայելիս ամենքը ժպտում էին:

Հանկարծ դիտարանից լսվեց հերթապահի ձայնը:

— Առա՛ջ նայեցեք:

— Ի՞նչ է զուր տեղը կոկորդը պատռում, — նկատեց նավաստիներից մեկը:

— Գուցե զուր չէ,— ասաց Պատիկը:

— Ցեթե վախենում է մի ուրիշ նավի հանդիպելուց, միևնույն է, վոչինչ չի յերևում· ո՛, սոսկալի դիշեր է:

— Հերթապահն ել հենց դրանից է վախենում... առաջ գնալու հնար չկա, — ասաց Պատիկ նավաստին:

— Ինչո՞ւ...

— Վորովհետև չգիտենք, թե փոթորիկն ո՛ւր է բերել մեզ: Ե՛հ, յեղբայրներ, ծովի վրա միշտ պետք է պատրաստ լինել,— ասաց Պատիկը, շուռ յեկավ և նայեց ովկիանոսին:

Նա շարունակ նայում էր· հանկարծ անբնական ու բարձր ձայնով ճչաց·

— Խութե՛ր, խութե՛ր:

— Կանգնեցնել նավը,— անհանդիստ ձայնով հրամայեց հերթապահը:

Նավը վայրկենապես կանգնեց, խրվեց ժայռերի մեջ և, թափարդն ընկած թռչունի պես, սկսեց թպրտալ:

2

Նավապետը քնած էր։ Նա խիստ արթնացավ ու մի բոպեյից հետո արդեն դիտարանի վրա էր։ Բոլորն էլ արագ հագնվելով՝ վերև վազեցին։

Նավն ուժգնությամբ դիպչում էր քարերին։ Մեքենան գործում էր վորքան ուժ ուներ, բայց չէր կարողանում նավը տեղից շարժել։ Խորն էր խրվել։

Սոսկալի դրություն էր։ անտանելի մութ էր ու փչում էր քամին։

Տասը բոպեյից հետո իմաց տվին, վոր ջուրը նավի ճեղքվածքով ներս է լցվում։ բոլոր միջոցները գործ դրին, բայց ջուրը հետզհետե ավելանում էր։ Դրությունը ծանր էր։ ազատվելու վոչ մի հնար չկար։ վոչ վոքից ոգնություն սպասել չէր կարելի։ Ամեն ինչ ներքևից բարձրացրին տախտակամած։ Նավն ազատելու մասին էլ վոչ վոք չէր մտածում։

Բայց գիշերով, այն սոսկալի ալեկոծության միջոցին, մակուլկիներով հեռանալն անմտություն էր։ պետք էր սպասել լուսաբացին։

Վերջապես արևելքն սպիտակեց։

Նավից հարյուր մետր հեռավորության վրա յերևաց բարձր և ուղղաձիգ ափը։ Քամին չէր հանդարտվում, և ալիքներն ահեղ մռնչյունով զարկվում էին ափին։

Մոտիկ ափն անհասանելի էր թվում, մահն՝ անխուսափելի։ Ափն էին հավաքվել մի խումբ մարդիկ, բայց ի՞նչ կարող էին անել նրանք, կամ ինչո՞վ ոգնել։

3

Լուսացավ։

Մութ ամպերը պատել էին յերկինքը։ Քամին չէր հանդարտվում։ ալիքներն առաջվա պես սոսկալի էին։

Նավը յերբեմն ճոճվում էր հարվածներից, բայց դեռ ջրի յերեսին էր մնում։

Նավապետը պաղարյունությամբ շրջում էր ամեն կողմ ու վոգևորում նավաստիներին։

— Դե՛, տղերք, մի՛ վախենաք, քամին շուտով կըդադարի, և նավակներով ափ դուրս կգանք։

Նավապետը դառնալով հերթապահին՝ ասաց։

— Յեթե հնարավոր լիներ պարանի ծայրն ափ հասցնել և այնտեղ ամրացնել, միակ փրկությունն այդ կլիներ։ Բայց խիստ դեպ չի կարելի։ քամին չի դադարում, մակուլկին խիստ ջրով կլցվի։

— Գուցե հնար լինի լողալով։

— Լողալո՞վ։ Բայց ո՞վ սիրտ կանի։ Յեթե նույնիսկ մեկը հրաշքով ափ հասնի լողալով, ափի քարերին կդիպչի ու կջարդվի...Բայց և այնպես, պետք է փորձել... Յեթե ափին գտնվողները պարանի ծայրը բռնեն, մենք փրկված ենք։ Հրամայեցեք, վոր նավաստիները հավաքվեն։

Յերբ բոլորը շարքով կանգնեցին, նավապետը մոտեցավ ու բացատրելով իր միտքը՝ ձայն տվեց։

— Դե՛, տղերք, կա՞ արդյոք ձեր մեջ մեկը, վոր ուզում է մեզ՝ բոլորիս ազատել։ Յեթե կա, թող ա՛յս կողմը կանգնի։

Վոչ վոք չշարժվեց։ բոլորը սոսկումով նայում էին փրփրած ալիքներին։

Միայն Պատիկ նավաստին դուրս յեկավ շարքից, համարձակ մոտեցավ նավապետին և քաշվելով ու կարմրելով ասաց։

— Ես կամենում եմ, նավապե՛տ։

— Դո՞ւ,— զարմացած բացականչեց նավապետը։

— Այո՛, նավապետ։

— Ի՞նչ քո բանն է, դու խիստ կխեղդվես։

— Անհոգ յեղեք, նավապետ, յես սովոր եմ ջրին, լողալ գիտեմ։

— Լա՞վ ես լողում:
— Այո՛:
— Բայց դու հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ ես անում:
— Հասկանում եմ, նավապե՛տ:
— Բայց և այնպես կամենո՞ւմ ես:
— Ընկերներիս փրկության համար ի՞նչպես չանեմ:
— Եթե պարանի ծայրն ափ հասցնես, դու մեր փրկիչը կդառնաս... Բոլորի կողմից շնորհակալություն եմ հայտնում քեզ, — ասաց նավապետը հուզված:

Պատիկ նավաստին արագությամբ մերկացավ, կապեց խցանե գոտին և պարանի ծայրը փաթաթեց մեջքին:

Յերբ պատրաստ եր, խոնարհությամբ գլուխ տրվեց ամենքին և հուզված ձայնով ասաց.
— Մնա՛ք բարև, ընկերներ:
— Գնա՛ս բարև, Պատիկ:
Բոլորը նայում եյին նրան իբրև մի զոհի:
Նա նետվեց ալիքների մեջ:

4

Բոլորի աչքերն ուղղված եյին դեպի անվախ լողորդը: Նրա գլուխը սև կետի նման յերբեմն յերևում եր ալիքների միջից, յերբեմն անհետանում:

— Կեցցե՛ս, լավ ե լողում,— ասում եր նավապետը, աչքը չհեռացնելով լողորդից:

Ճիշտ վոր Պատիկը լավ եր լողում... Արդեն մոտ ե. մի քանի շարժում ել, և ահա ափը կհասնի: Ափում գտնվող մարդիկ ինչ-վոր բան են աղաղակում նրան. դեպի աջ ցույց տալով, բայց նա վոչինչ չի հասկանում: Հանկարծ մի ալիք ուժով վերցրեց նրան և խրվեց ծովեզրի մի սուր քարի... Սոսկալի ցավն ու թուլություն խլուն հաղթեցին նրան և մթագնած աչքերով կարողացավ պարանի ծայրը միայն ցույց տալ մոտ վազող մարդկանց:



Ափին գտնվող մարդիկ դուրս քաշեցին Պատիկի դիակը և սկսեցին պարանը ձգել:

Կես ժամից հետո պարանի ծայրն ամուր կապված եր մի ժայռի: Նավի վրա յեղող մարդիկ սկսեցին պարանի ողնությամբ ափ դուրս գալ:

Յերբ բոլորն ափ դուրս յեկան, նավապետը, ցույց տալով Պատիկի դիակը, ասաց.
— Յեղբայրնե՛ր, ահա սա՛ յեր, վոր զոհեց իր կյանքը մեզ փրկելու համար:
Նա վերցրեց գլխարկը, խոնարհվեց և համբուրեց Պատիկի ճակատը:

Բոլորն էլ վերցրին գլխարկները և մեկ-մեկ սկսեցին համբուրել Պատիկին։

Այդ միջոցին նավը առաջվում էր։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Նավաստի—նավի վրա ծառայող։
2. Ավագ— գլխավոր, մեծ։
3. Խուր—ջրի տակի սուր-սուր քարեր։

---

49. ԲԱՍԿԱԿԱՆ ՀԻՆ ՅԵՐԳ

Մեր դաշտերում թափառում են
Քաղցած գայլեր վոռնալով.
Ու ակնդետ մեր հոտերին՝
Վորս են ուզում վոռնալով։

Քա՛ջ հովիվներ, արթուն կացե՛ք,
Մոտ են նրանք մեզ արդեն.
Քա՛ջ հովիվներ, վոտքի՛ յելեք,
Մեր հոտերը չըջնջեն։

Մեր պատիվն ու ազատությունն
Մեզնից խլել են ուզում.
Իրենց պետի չար բերանից
Ի՞նչ խոսքեր են մեզ ասում։

Պատանինե՛ր մեր գեղեցիկ,
Մեր լուսեղեն աղջիկնե՛ր,
Նրանց ծառա պիտի լինեք
Նրանց կանանց նաժիշտներ։

Դո՛ւրս մեր յերկրից, դո՛ւրս, ղազաններ,
Մեր հին հողը մի՛ պղծեք,

Կորչելու չե մեր հայրենիք,
Քանի կռվել մենք գիտենք։

Ապառաժներ մենք կպոկենք
Մեր յերկաթե լեռներից
Ցեվ ձեր գլխին վար կթափենք,
Ձեզ կվանենք մեր տնից։

Տեսեք մեր մութ յերկնում ծագեց
Ազատության աստղն ահ՛ա.
Մեր հին կաղնին նորից ծաղկեց,
Ցեվ ծփո՛ւմ է մեզ վրա։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բասկեր—Իսպանիայի հյուսիսային շրջանի (Բասկոնիայի) բնակիչներ։
2. Ակնդետ—աչքերը տնկած։
3. Նաժիշտ—կին ծառայող, սպասավորուհի։

---

50. ԼԻՆԱ ՈՂԵՆԱ

Լինա Ողենան իսպանական հերոս ժողովրդի հարազատ աղջիկներից մեկն եր։ 1936 թվի սեպտեմբերի 20-ին Լինա Ողենան մեռավ հերոսի մահով։ Գրենադա քաղաքի մոտ տեղի ունեցած կռիվների ժամանակ կոմյերիատուհի հրամանատար Լինա Ողենան առաջնորդում եր իր զորամասը։ Նա անվախ եր, խիզախ— քաջի նըման կռվելով առաջ գնաց, իսկ նրա զորամասը հետամընաց։ Մեկ ելհանկարծ Լինան նկատեց, վոր ինքը չըրջապատված է թշնամիներով։ Հասկացավ իր դրությունը, չվախեցավ, չտատանվեց, բայց վճռեց թանդ ծախել իր կյանքը։ Նա գիտեր, վոր թշնամիների ձեռքը պետք է ընկնի— բայց կանդ առավ, չոգեց, իր ունեցած բոլոր զնդակներից մեկը պահեց ծնկի տակ և

մյուս բոլոր գնդակներից ամեն մեկով մի ֆաշիստ սպանեց: Վերջին, պահած գնդակով վերջ տվեց իր յերիտասարդ ու վառվռուն կյանքին: Թշնամու ձեռքն ընկավ նրա անշունչ մարմինը միայն:

Կես ժամ հետո նրա ջոկատը վրա հասավ: Իր սիրելի հրամանատարի դիակը տեսնելով՝ ջոկատը կատաղի հարձակվեց թշնամու զորամասի վրա և վոչ մեկին կենդանի չթողեց: Ապա վերցրին հերոս աղջկա դիակը և տարան:

2

Լինա Ոգենայի մահը մեծ ցավ պատճառեց վոչ միայն Խոպանիայի, այլ և ամբողջ աշխարհի բանվորներին ու նրանց դավակներին:

Մեր՝ Խորհրդային յերկրի բոլոր յերեխաները կարդացին, իմացան Լինա Ոգենայի կյանքի և հերոսական մահվան մասին: Բոլորը սիրում ու հարգում են նրա անմահ հիշատակը:

Այդ սիրո ապացույց է Լինա Ոգենայի մորը գրված՝ իններ տարեկան Աստմա Մաուերի նամակը, Սիմֆերոպոլ քաղաքից:

Սիմֆերոպոլի 10-րդ դպրոցի աշակերտուհի իններ տարեկան Աստմա Մաուերը նախանցյալ տարի մարտի 16-ին նամակ է ուղարկել Բարսելոնա, ֆաշիստ խուվարարների դեմ ունեցած կռիվներում հերոսաբար ընկած կոմյերիտուհի Լինա Ոգենայի մորը:

Նա գրել է.

«Սիրելի մորաքույր Ոգենա.

Մեծ դժբախտություն է պատահել մեզ: Բայց դու մի՛ լար: Հանրապետական Խոպանիայում նույնպիսի ուրախ կյանք կլինի, ինչպես մեզ մոտ: Ելի մի՛ լար, մորովհետև դու, քո սեաչյա Լինայի փոխարեն, ունես կապուտաչյա Լինա: Դա իմ քույրն է— Լինա Մաուերը: Նա ծնվել է անցյալ տարվա ոգոստոսին, յերբ քո Լինան հերոսաբար ընկավ ֆաշիստների դեմ կռվելիս: Ցավ ահա այն ժամանակ յես ու մայրիկս վորոշեցինք մեր փոքրիկին Լինա անունը տալ, վոր պահպանենք քո հերոսուհի Լինայի հիշատակը և կարեկցենք ձեր վշտին:

Վողջ յեղիր, թանկագին մորաքույր Ոգենա: Մի՛ մոռացիր, վոր դու մի Լինա ել ունես»:

ԱՍՈՒՄԱ ՄԱՈՒԵՐ

---

51. ԻՆՉՈ՞Ւ ՄԱՅՐԻԿԻՆ ԳՐԻՇԿԱ ԱՆՎԱՆԵՑԻՆ

Մայրիկս հասակով ինձանից մեծ չեր,
Դիպուկ խփում եր, սակայն, ու քաջ եր:
Ցավ նրան մի ձի ու չինել տվին,
Մայրս միացավ հետախույզ Ջոկին:

Զորս որ է արդեն նրանք չեն քնել,
Քրտնած ձիերից չեն ել վայր իջել,
Ցավ լուսաբացին Ջոկը մայրիկի
Ողակել է Ջոկն սպիտակների:

Հրամանատարը խորհրդի կանչեց,
Տխուր լուրեր են բոլորը հայտնում.
— Հրացաններ քիչ են, փամփուշտն սպառվեց.
— Հացն ել վերջացավ, դե, ի՞նչ ենք անում:

— Մերոնց հասնելի՛նք.— բայց ի՞նչպես անել:
— Ողակել են մեզ.— պետք է լիճն անցնել:
— Սառույցը թույլ է— կկոտրի հանկարծ...
— Վազելով կանցնեմ, մայրիկս ասաց:

Մայրիկս փոքր է հասակով այնպես,
Հազցրին նրան շորեր տղայի,
Ձմուշկներ տվին. «Սառույցով կանցնես,
Կհարցնեն անունդ՝ ասա.— «Գրիշկա յե»։

Կանցնես լիճն—անտառ։ Այն կողմը—ձորակ։
Հեծելապորն է Բուդյոննու այնտեղ,
Մերոնց կհասնես, կասես համարձակ.
— Փամփուշտներ չունենք, հրացաններ են պետք։

Մթնեց. անցնում է մայրս սառույցով,
Սառույցն իջնում է, բայց չի կոտրվում։
Մայրս սղղում է հանդիսա, անվրդով—
Թշնամի չկա—առաջ է անցնում։

Վազում է, վազում, ու հանկարծ տեսնում—
Առջևում ջուր է տաս թե քսան քայլ։
Եվ ի՞նչ մտածել—նա ջուրն է ընկնում։
Ցուրտ է, բայց անցնում է նա անայլայլ։

Սառած զգեստը կպել է մարմնին,
Սուր սառույցներով ձեռքն է կտրատել,
Բայց—ահա քարեր, նա մոտ է ափին,
Թեկուզ վոտքերն են տիղմի մեջ թաղվել։

Հանում է շորերն—այսպես թեթև է,
Հեշտ է շարժվելը, սպորտը սակայն
Թրջվել է, ուռել ու չմուշկի հետ
Հանվում է նաև թաց սապոգն այն։

Ափ յելավ։— «Կանգնի՛ր»,— մի ձայն ահավոր
Լսվեց։ Աչ կողմից մի ձի ամբոխ
Առաջ է գալիս, մեջքին՝ ձիավոր.
«Ա՛, Գրի՛շկա, կյանքիդ վերջն յեկավ ահա»։

Վոսկե ուսադիր, արծաթե զարդեր,
Թավ բեխերից վեր՝ քիթը սապատով,
Ծանր նագանն է իր կողքից կախել...
Ի՞նչ անել... պետք է աղատվել շուտով։

Պինդ սեղմեց ձեռքում չմուշկն յերկաթյա,
Ինչքան ուժ ուներ շպրտեց դեմքին,
Դիպուկ եր հարվածն, ու կպավ ահա
Լկտի թշնամու— սպայի քունքին։

Դե չմուշկը վողջ յերկաթից ձուլված,
Մայրիկիս ձեռքն ել ուժեղ է, թափով,
Ինչպես խելագար՝ ցնցվեց ծառս յելած
Ձին — իսկ մայրիկս փախավ ապահով։

Ցերը ուշքի յեկավ սպան, գոռաց— «բռնի՛ր,
Խփե՛ք եդ տղին, սատանի ճուտին»։
Իսկ Գրիշկան ուղիղ անտառն է կտրում,
Ձյունի թմբերով դայլի պես ցատկում։

Անցավ անտառը։ Ձորակն է, գետակ։
Բանակայիններն են առաջ շարժվում։
Մայրս կորցրել է կոշիկ ու գլխարկ,
Ձեռքերից չանդռած — արյուն է կաթում։

Իսկույն կապեցին նրա վերքերը,
Իսկ յերբ լսեցին դեպքերի մասին,
Զոկատեան ասաց. «Թամբե՛ք ձիերը»—
Ու արշավեցին անտառ՝ միասին։

Հեծելազունդը մեր փոթորկի պես
Անցավ, հարվածեց անարդ թշնամուն.
Ուրախ են մերոնք, ցնծում են այնպես—
Գրիշկա—այսպես ել մնաց մորս անուն։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Ուսադիր—*սպայական նշան ուսերին:*
2· Սապատ—*ուռուցք (այտաղ):*
3· Քունք—*դեմքի մասը (աչքի և ականջի միջև):*
4· Ծառս լինել— *բարձրանալ հեռուի վոտների վրա:*
5· Անարգ—*պատվազուրկ, անպատիվ:*

52· ԲԱԶ ՆԱՊԱՍՏԱԿԸ

1

Վախկոտ նապաստակը ծնվեց անտառում:

Մի չոր ճյուղ եր կոտրվում, թե մի ճնճղուկ թռչում— նա սարսափում եր:

Վախեցավ մի որ, յերկու որ, մի շաբաթ, մի տարի, և յերբ մեծացավ, մեկ ել վախենալուց ձանձրացավ:

— Ցես վոչ վոքից չեմ վախենում, — գոռաց անտառովը մին:— Ամենևին չեմ վախենում...

Վազեցին, յեկան, հավաքվեցին մեծ ու փոքր նապաստակները և ականջ են դնում, թե վոնց ե պարծենում շլդիկը: Ականջ են դնում ու չեն հավատում իրենց լսածին: Դեռ չեր պատահել, վոր նապաստակը վոչ վոքից չվախենար:

— Ե՛յ, դու, շլդիկ, դայլի՞ց ել չես վախենում:

— Վո՛չ դայլից եմ վախենում, վո՛չ աղվեսից, վո՛չ ել արջից, վո՛չ վոքից չեմ վախենում:

Այդ արդեն չափից անց եր: Ծիծաղեցին նապաստակները, հռհռացին ու սկսեցին գլուխկոնձի տալ, վազվզել և ցատկոտել գժի նման:

— Ի՞նչ եմ ձեզ հետ յերկար ու բարակ խոսում,— գոռում եր քաջասիրտ նապաստակը:— Ցեթե ինձ մի դայլ պատահի, յես ինքս նրան կուտեմ:

— Ա՛խ, ի՞նչ ծիծաղելին ե, ա՛խ, ի՞նչ հիմարն և:

Նապաստակներն անընդհատ խոսում եյին դայլի մասին, իսկ դայլը, դու մի ասիլ, հեռու չի լինում:

2

Սոված դայլն անտառում մեն եր յեկել մեն ու մտքումն ասել. «ա՛յ մի նապաստակ պատահի՛, ինչ կուտե՛մ»... Հենց այդ ժամանակ ել քթի տակ լսեց նապաստակների ձայնն ու առավ նրանց հոտը: Մոտեցավ, թաքնվեց և լսեց, թե ինչպես են ծիծաղում իր վրա, և ամենից շատ այն պարծենկոտ շլդիկը:

— Կա՛ց, հենց քե՛զ պիտի ուտեմ հիմա, — մտածում ե դայլն ու ջոկում, թե վորն ե այդպես պարծենում:

Իսկ նապաստակները վոչինչ չեն տեսնում և ավելի ու ավելի յեն ուրախանում:

Բանն այնտեղ հասավ, վոր պարծենկոտ շլդիկը յելավ մի կոճղի, բարձրացավ հեռուի թաթերի վրա ու խոսեց.

— Լսեցե՛ք, ե՛յ վախկոտներ: Լսեցե՛ք և ի՛նձ նայեցեք: Ահա յես ձեզ մի բան ցույց կտամ... յես... յես... յես...

Այստեղ խեղճ նապաստակի լեզուն փորն ընկավ:

Տեսավ իրեն նայող դայլին: Մյուսները չեյին տեսնում, իսկ նա տեսավ ու վախից ձայնը կտրեց:

Մին ել հանկարծ մեր պարծենկոտ շլդիկը գնդակի պես վեր թռավ, դիպավ ուղղակի դայլի գլխին, գլորվեց նրա մեջքով, գլուխկոնձի տվեց ոդի մեջ ու ծլկեց. վո՛նց ե փախչում...

Ցերկար վազեց խեղճ նապաստակը, այնքան վազեց, վոր ուժից ընկավ:

Նրան թվում եր, թե դայլը կրնկակոխ գալիս ե հետևից և ահա կբռնի ու կգզգզի իրեն:

Վերջապես խեղճն ուժասպառ՝ աչքերը փակեց և կիսամեռ ընկավ մի թփի տակ:

Իսկ դայլն այդ ժամանակ վազում եր հակառակ կողմը:

Ցերը նապաստակը նրա դլխին ընկավ, դայլին թվաց, թե մեկն իրեն հրացանով զարկեց, դլուխն առավ ու փախավ:

3

Ցերկար ժամանակ նապաստակներն ուշքի չեյին դալիս· վորը թփի տակ եր թաք կացել, վորը կոճղի հետևը, վորը փոսի մեջ:

Վերջապես հոգնեցին թաղնվելուց, ովքեր ավելի քաջ եյին, կամաց-կամաց դլուխները հանեցին, սկսեցին չորս կողմը նայել:

— Ա՛յ թե լավ վախեցրեց դայլին մեր նապաստակը,— վճռեցին բոլորը: Ցեթե նա չլիներ, մենք կենդանի չեյինք մնա... Բայց ո՞ւր է նա, մեր անվախ նապաստակը:

Սկսեցին վիճաբել· ման յեկան, ման յեկան, անվախը չկար ու չկար:

— Մի ուրիշ դայլ կերած չլինի՞ նրան:

Վերջապես դաան նրան մի փոսի մեջ, թփի տակ պառկած, վախից կիսամեռ:

— Կեցցե՛ շղիկը,— գոռացին միաձայն:— Վա՛յ, շղիկ, ա՛յ թե վախեցրիր պառավ դայլին, հա՛, շնորհակալ ենք, յեղբա՛յր: Իսկ մենք կարծում եյինք, թե դու պարծենում ես միայն:

Խորամանկ շղիկը հանկարծ սիրտ առավ, դուրս յեկավ իր փոսից, աչքերը ճպճպացրեց ու ասաց հպարտ·

— Հապա դուք ի՞նչ եյիք կարծում, ա՛յ դուք, վախկոտնե՛ր:

Ու այն որվանից մեր նապաստակն սկսեց ինքն էլ հավատալ, թե ճիշտ վոր ինքը վոչ վոքից չի վախենում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Կրնկակոխ— հետևից հասած, մոտեցած:
2· Կոնդ—կտրված ծառի բնի մնացած մասը:
3· Լեզուն փորն ընկնել—սաստիկ վախենալ, վախից պապանձվել:

ՀԱՐՑԵՐ

1· Կարելի՞ յե հետևյալ որինակները փոխարինել փակագծերում բերված նախադասություններով·

ա) «Վախեցավ մի որ, յերկու որ, մի շաբաթ, մի տարի» (մինչև վախենում եր)·

բ) «Վո՛չ դայլից եմ վախենում, վո՛չ աղվեսից, վո՛չ էլ արջից—վոչ վոքից չեմ վախենում» (դայլից, աղվեսից, արջից չեմ վախենում)·

գ) «Ման յեկան, ման յեկան, անվախը չկար ու չկար» (շատ փնտռեցին, բայց անվախը չկար):

Վո՞րն է ավելի պատկերավոր:

2· Վո՞ր հատվածներն են ցույց տալիս նապաստակի վախկոտությունը կամ նրա խորամանկությունը:

3· Գրվածքի վո՞ր տեղերն են ցույց տալիս, թե ինչու վախկոտ նապաստակը քաջի անուն ստացավ:

Պատմեցեք այս գրվածքի բովանդակությունը համառոտած:

---

53. ԳԱՐՆԱՆ ՀՐԱՎԵՐ

Բացվում են դարնան
Որերը պայծառ·
Կդաս, իմ ընկեր,
Գնանք դեպի սար,
Գնանք դեպ այնտեղ՝ յերկնահաս վերև,
Կյանքը լայնարձակ, յերկինք ու արև...

Փթթում են գարնան
Ծաղկունքը վառ-վառ.
Վե՛ր կաց, վեր, ընկե՛ր,
Ցելնենք դեպի սար.
Հազար գույներով, հազար-հազար ցեղ,
Ժպտում են նրանք ու բուրում այնտեղ...

Կանչում են գարնան
Հավքերն անհամար.
Գնանք, ի՛մ ընկեր,
Թռչենք դեպի սար,
Ցերգենք նրանց հետ՝ յերկնահաս վերև,
Կյանքը լայնարձակ, ծաղիկ ու արև:

---

34. ՏՐԱԿՏՈՐԻՄՏԸ

1

Մի որ Ավետիքը կոլտնտեսության գրասենյակը մտավ այն ժամանակ, յերբ նախագահը մի գրություն եր կարդում, «ըհը, ըհը» անելով և ուրախությունից դեռինը գոփելով: Ընթերցումն ավարտելուց հետո նախագահը գրությունը թափահարեց ոդում, ձեռքով բռնցքահարեց սեղանը և ցնծությամբ բացականչեց.

— Ուռռա, գարունը տրակտոր կունենանք մեր արտերը վարելու համար, ա՛յ, սա արդեն իսկական սոցիալիզմ է...

— Եղ ի՞նչ տրակտոր է,—ասաց Ավետիքը չփոթվելով նախագահի գոռգոռոցից,— ո՞վ է տալիս եդ տրակտորը:

— Տալիս են, ե՛, Ավետիք ամի, գարունը մեզ տրակտոր են ուղարկելու, գլակդ թեք գցիր,— շարունակում եր հպարտանալ նախագահը,— այ, հրես ես գրության մեջն է, տրակտորի համար ել մարդ են պահանջել:

— Վո՞նց թե մարդ,— հարցրեց Ավետիքը:

Մարդ, ջահել, բանիմաց, ուժով մարդ, վոր գնա տրակտորի խասյաթը սովորի, սանձը դնի բերանն ու քչի մինչև եստեղ:

— Կիսագրագետը կարա՞ բան հասկանալ գրանից:

— Ավետիք ամի, չա՛տ ես հետաքրքրվում,— նկատեց հաշվապահը կատակով,— յերևի միտքդ փոխել ես, ուզում ես տրակտորիստ դառնալ:

— Ինչի՞ յես ծիծաղում, չե՞մ կարա տրակտորիստ դառնալ, հիսուն տարեկան է՝ չկամ, յերկու լիկկիայան եմ սովորել:

Ներկաները ծիծաղեցին:

— Կդառնաս, Ավետիք ամի,— քրքջաց նախագահը,— ո՞վ է ասում, թե չես դառնա, միայն քո տրակտորը դեղի կոտրենները հագիվ վարի:

Մի քանիսը թերահավատությամբ գլուխները շարժեցին:

— Ժամանակդ անցել է, Ավետիք:

— Տրակտորը գիտություն է, եղբան հեշտ չի կարելի սովորել:

— Ասենք՝ ո՞վ է իմանում, յերկաթի սավդա յա...

Բայց Ավետիքը գրեթե ուշք չեր դարձնում նրանց ասածներին:

— Ուղարկիր ինձ,—համառորեն պնդում եր նա,— չես փոշմանի. իմ գլխին դդակ կա դրված, ամոթով չեմ անի մեր կոլխոզին:

Համոզեցին նրան հրաժարվել այդ մտքից՝ բան դուրս չեկավ: Նա կատակ չեր անում: Հագիվ եր առիթ պատահել իր վաղեմի ցանկությունը կատարելու: «Այ մարդ,— ասում եր կինը աղաչական ձայնով,—արի ձեռ քաշի եդ փորձանք բաներից, յեղ ու գոմեշ չի, յերկաթ է, լեզուն իմանալ չի լինի»: Ցավ տխուր-տրտում ճամբա դրեց ամուսնուն:

2

Արևը դեռ չեր ծագել, վոր տրակտորը մեծով ու փոքրով շրջապատված շարժվեց դեպի դաշտ: Ավետիքի հաղթանդամ մարմինն ամուր տեղավորվել եր դեկի մոտ և թեթև որորվում եր տրակտորի կատաղի ցնցումներից: Նրա սափրած, առույգ դեմքը, վոր կարծես յերիտասարդացել եր մի գիշերում, փայլում եր ներքին յերջանկությունից, ինչպես յերկինքը նորածագ արևի շողերից: Նրան թվում եր, թե արևը ծագում եր սրտից:

Տրակտորը հաղթական աղմուկով անցնում եր հիացող յերիտասարդների միջով: Նա մերթ-մերթ իր հետևից սև քուլաներով ծուխ եր արձակում, վոր լուծվում եր դարնանային ողի պարզության մեջ:

Թափորը հասավ հանդ: Գարնանացանին ու յերջանկությանը նվիրված միտինգից հետո Ավետիքը դործի դրեց տրակտորը: Խոփերն ուժգնորեն խրվեցին փափուկ հողի մեջ: Մանուկները հրճվանքից թավալվում եյին հենց նոր սևացած հողի մեջ. ծերունիները ցամաքած աչքով թարմ հող եյին վերցնում դեռնից, քամում ու յերջանկության արտասուքներն աչքերին քսյլում եյին տրակտորի հետևից: Սկսվեց գարնանացանը: Դաշտը լցվել եր ուռաներով ու հիացական բացականչություններով:

— Կեցցե՛ տրակտորիստ Ավետիքը,— գոռում եր մեկը բարձր ու հնչեղ ձայնով:

— Ավետի՛ք, հալալ ըլնի քեզ ռանչպարական կաթը,— ասում եր մի ուրիշը:

— Կեցցե՛ կոլեկտիվ ստեղծողը:

— Կեցցե՛, կեցցե՛...

Ցեվ տրակտորի հոնդյունը կորչում եր մարդկային հաղթական կանչերի մեջ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բռնցքահարել— բռունցքով խփել:
2. Խասյաթ (բարբառ)—բնավորություն:
3. Սավդա—սեր, կարոտ:
4. Ռանչպար—հողագործ:

ՀԱՐՑԵՐ

Պատմեցեք ոյս դրվածքը հետևյալ պլանով.

1. Ավետիք ամու խոսակցությունը կոլանտեսության նախագահի հետ.

2. Ավեսիքի ցանկությունը և շրջապատողների վերաբերմունքն սկզբում.
3. Ավեսիքը տրակտորի վրա.
4. Շրջապատողների վերաբերմունքը վերջում:

---

55. ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՎՐԱ

Յերեկո յեր. արևը մայր եր մտնում՝ իր թեք ճառագայթները ցրելով յերկրի վրա: Գյուղը մթնում եր: Շուտով վառվեցին լապտերները փողոցում:

Վիտյան բակը դուրս յեկավ, նայեց շուրջը: Աքաղաղը սանդուխքի վրա թռավ և ցատկեց մարդը, նրան հետևեցին հավերը:

Հանկարծ վախեցած հավերը դուրս թռան և աղմուկով ցրվեցին բակի այս ու այն կողմը:

— Սա ի՞նչ բան է,— զարմացավ Վիտյան:— Տեսնես՝ ինչից վախեցան. չլինի՞ մեկը մտել է ներս: Նա բարձրացավ չարդախը: Մթության մեջ նա հիշեց, որ մոտը լուցկի կա. բայց չվառեց. վտանգավոր եր. չարդախում խոտ եր դիզված:

— Եյ, ո՞վ կա այդտեղ,— կանչեց նա:

Պատասխան չկար. «Սա ի՞նչ բան է. վոչ վոք չկա. ապա ինչո՞ւ հավերն անհանգիստ են»:

Վիտյան կանգ առավ. մթության մեջ դժվար եր առաջ շարժվել: Վերջապես վորոշեց վառել լուցկին. վառել ու իսկույն հանգցնել: Լուցկու լույսի տակ տեսավ անկյունում կծկված մի մարդու:

— Ո՞վ է այդտեղ,— ձայն տվեց ու ցատկեց մի կողմ:

— Ցես... ձերոնցից եմ... — պատասխանեց մարդը, աշխատելով հանգիստ յերևալ.— գյուղխորհրդի նախագահն ինձ թույլ տվեց... կգիշերեմ այստեղ և ձեզ լուսաբացին կհեռանամ...

«Սուտ է ասում»—անցավ Վիտյայի մտքով, բայց ասաց վստահ ձայնով.

— Դե վոր նախագահը թույլ է տվել, պառկեցեք...

Մարդը յերևի հասկացավ, վոր Վիտյան խորամանկություն է անում: Նա ցատկեց իր տեղից, ինքը վառեց լուցկի: Ժպիտը դեմքին՝ նայում եր տղային:

— Կուզես — կգնամ իսկույն... Կուզես կմնամ և փող կվճարեմ գիշերելու համար: Գրքեր կգնես, ֆուտբոլի գնդակ կառնես: Ահա, բայց տես՝ մարդու բան չասես. նա հանեց գրպանից փողի մի մեծ կապոց:

—Ինչի՞ս են պետք քո փողերը,— պատասխանեց Վիտյան:

Անծանոթը քաշվեց: Աչքերը կկոցեց ու աշխատեց խղճալի թվալ:

— Ա՛ռ, վորդիս,— ասաց նա լացակումած ձայնով,— խղճա ինձ,— ասում եր ու փողը դեմ անում Վիտյային:

Յերբ Վիտյան նորից վառեց լուցկին, տեսավ, վոր անծանոթը բռնել է խոտի յեղանն ու իրեն է նայում: Վիտյան իսկույն հանգցրեց լուցկին ու ցատկեց մի կողմ: Յեղանը խրվեց պատի մեջ այնտեղ, ուր մի քիչ առաջ կանգնել եր Վիտյան:

Վիտյան աննկատելի կերպով դուրս վազեց ու ընկավ հարևանի, կոլտնտեսական Նիկիտի տունը:

— Քեռի Նիկիտ, մեզ մոտ չարդախում ինչ-վոր մի անծանոթ մարդ է պահվել: Դու մի գնա՝ տես, իսկ յես վազեմ — նախագահին հայտնելու:

Հարևանը մի մեծ մահակ վերցրեց ու սկսեց հրակել չարդախի մուտքը:

Մի քանի րոպե անց յեկան սահմանապահները. Վիտյան նրանց առաջնորդեց դեպի իրենց չարդախը: Լապտերի ուժեղ լույսի տակ սահմանապահները տեսան սև չորերով մի մարդու, վոր թաղնվել եր խոտե-

բի մեջ։ Նրա աչքերը շարժվում էին անհանգիստ, ատելությամբ լի։

— Ձեռներդ վե՛ր,— հրամայեց պահակախմբի պետը։— Դո՛ւրս արի։

Անծանոթը դուրս յեկավ։ Նրան տարան պահակատուն։ Պարզվեց, վոր նա հայանի լրտես է։

Անձնազոհության և համարձակության համար Վիսայային շնորհակալություն հայտնեցին և պարգևատրեցին։

---

56. ԼՈՒՍԱԴԵՄԻՆ

Անուշ հովերն են փչում,
Վոսկի հասկերն են ծփում,
Մանր ուլունք շաղ տալով՝
Բարակ առուն կարկաչում։

Առվի կանաչ ափերին
Գառներն, ուլերն արածում—
Ծաղիկներն են թփերին՝
Անուշ բուրմունք տարածում։

Արշալույսը վոսկեզոծ
Ծաղեց հեռվից շողալով,
Խոփը մաավ հողի ծոց՝
Ակոս չարեց սողալով։

---

57. ՊԱՀԱԿԱԿԵՏՈՒՄ

1

Կես ժամ առաջ Ալեքսանին հանձնեցին մի ծրար, վորի յերեսին մակագրված եր. «Ստանա կարմիր-բանակային Ալեքսան Ռուշանյանը»։ Ծանոթ ձեռագիրը կարդալուց հետո նրա դեմքին յերևաց արտասովոր մի պայծառություն և սիրտը լցվեց փաղաքշող ջերմությամբ։

Նամակը կինն եր գրել։ Նամակի տողերն ուրախ հուզմունքով համակեցին նրան։ Հայացքը յերկար չեր հեռացնում նամակից։ Անվարժ գրված տառերի, կիսատ ու կցկտուր տողերի հետևից նրան նայեցին ջահել, չիկահեր կինը, փոքրիկ, լուսեղեն մանչուկը, ծերհել, չիկահեր կինը, փոքրիկ, լուսեղեն մանչուկը, ծերունի ողները։ Հայրը նայում եր նամակի տողերից և քաղցր ժպտում։ Ալեքսանն անսահման խանդաղատանքով հիշում եր նրա պայծառ ճակատը, ուր անցած վիշտերի ու հոգսի կնճիռներն այլևս չեյին նշմարվում։

— Գնա,— ասել եր կոլտնտեսականն իր ավագ վորդուն բանակ ճամբելիս,— բայց վոր առանց պարգևի վերադարձար, ալևորիս սիրտը կցավի...

Մտաբերելով այս՝ Ալեքսանն արագ քայլերով գնաց դեպի ակումբ։ Նստելով սեղանի առաջ՝ վերցրեց գրիչը։ Ստացած նամակի պատասխանն եր գրում։ Ստացած գնելով գրիչը՝ լայն ճակատն առավ ափի մեջ։ Մտածում եր. ի՞նչ գրել հորը, ի՞նչ գրել իր մասին։ Կկոցելով իր սև, փայլուն աչքերը, հանկարծ նա ժպտաց և, վերցնելով գրիչը, շարունակեց. «Ցես արդեն ստացել եմ առաջին պարգևը, հրամանատարն ինձ յերկու անգամ շնորհակալություն և հայտնել գնդի առաջ... Իսկ այժմ ավելի պատասխանատու գործեր են վստահում ինձ. այսոր յես առաջին անգամ ժամապահ եմ կանգնելու մի շատ պատասխանատու պոստում... Դա մեծ պատիվ է...»

Նամակը ծրարեց, գցեց փոստարկղն ու դնաց դեպի զորանոց: Հրամայված եր պառկել, հանգստանալ:

Յերեք ժամից հետո նա պետք է մեկներ ժամապահության:

Պառկել եր Ալեքսանն իր մահճակալին և վերմակը գլխին քաշած լուռ մտածում եր: Նրա մտքում վերակենդանանում էին վառ, հուզիչ պատկերներ:

...Մեկը մյուսի հետևից գալիս և անցնում են հուզիչ տեսարանները: Յեվ Ալեքսանի շրթունքները լուռ արտասանում են բազմաթիվ հերոսական անուններ...

Վորքա՜ն շատ են նրանք:

2

Տարված վառ մտապատկերներով՝ Ալեքսանն արդեն սկսեց նիրհել: Նա քաղցր մշմշում եր. դեմքի վրա նկատվում եր խաղաղ և անդորր մի ժպիտ...

Յերկու ժամից հետո վոտնաձայն լսելով՝ նա բացեց աչքերը: Որապահն եր:

— Ի՞նչ կա,— հարցրեց նա մեղմ ժպիտով:

— Վեր կաց, Ալեքսան:

— Գնալու ժամանա՞կն է:

— Այո՛, արդե՛ն...

Ցատկելով մահճակալից՝ նա արագ-արագ հագավ կոշիկները, շինելը, վերցրեց հրացանն ու շտապ քայլերով դուրս յեկավ զորանոցից:

Աշնանային գիշերն իր խոնավ թևերն եր փռել դաշտերի ու լեռների վրա: Հորիզոնում հրեղեն ոճերի նման բեկբեկվում էին չանթի սյաքները և հանգչում մթագնած ամպերի մեջ: Ցուրտ եր ու քամի: Տեղատարափն սկսվեց: Անձրևն ասես թափվում եր դույլերով և աղմկում թիթեղե տանիքների վրա:

Այդ ահեղ տեղատարափի ժամին իր մարտական պոստն եր հսկում կարմիր բանակային Ալեքսանը: Պողպատե սվինն ազատ վայել եր արձակում թանձր խավարի մեջ: Ալեքսանը հաստատ և համաչափ քայլերով ման եր գալիս քարաշեն տան շուրջը, հաճախ մոտենում եր նրա յերկաթե դռներին, ունկնդրելով անձրևի միապաղաղ ու ձանձրալի յերգին: Յերբեմն կանգնում եր աննկատ մի տեղ ու ամբողջ լսողությունը լարած՝ դիտում եր շուրջը, ասես իր սուր հայացքով նա ձգտում եր պատռել խավարի ծավալուն, սև վարագույրը և տեսնել, թե ինչ է կատարվում նրա հետևում:

... Իսկ անձրևը սաստկանում եր: Զինվորական գլխարկի յեզրերից ծորում էին անձրևաջրի կաթիլները, սահում այտերի վրայից ու ընկնում ներքև: Զրի մի կաթիլ հանկարծ սահելով դնաց դեպի թիկունքը: Անախորժ սարսուռ զգալով՝ նա ցատկեց տեղից և մտածեց. «Ավելի լավ չե՞ կանգնել ահա այստեղ, քիչ հեռվում գտնվող ծածկի տակ»: Բայց այս միտքն իսկույն չանթահարեց յերիտասարդ ժամապահին: Լուռ բարկանալով ինքն իր վրա՝ նա շարունակեց խռովահույզ քայլերով շրջել պահեստի շուրջը:

3

Ամպրոպը պայթեց: Ասես թե հզոր մի հրետանի յեր նա, վոր ուժգին դղրդյունով վորոտաց ամպերի մեջ: Կայծակն իր հրեղեն լախտերով մտրակեց լեռների կողը և մի ակնթարթում լուսավորեց ամբողջ շրջակայքը: Յերիտասարդ ժամապահը տեսավ դեպի իրեն շարժվող յերկու սև կերպարանք: Սիրտը թունդ առավ ջահել կրծքի տակ և լսվեց նրա ահավոր կանչը.

— Կաց, ո՞վ է գալիս...

Զայնն անարձագանգ մեռավ անձրևի չափչափյունի մեջ: Ժամապահն զգում եր, վոր սև սավանները շարունակում էին շարժվել առաջ:

— Կա՛ց, կկրակե՛մ...

Վոչ մի պատասխան: Կրկին փայլատակեց կայծակը և հրազարկի վորոտը միախառնվեց ամպերի խլացնող վորոտին: Լավեց մի խուլ հառաչ, հետո՝ ինչ-վոր բան ծանրությամբ տապալվեց գետին: Բայց այդ միջոցին ժամապահն ինչ-վոր հարված զգաց իր կրծքին: Ողբվեց, ասես կորցնում եր հավատարակչռությունը: Սակայն այդ տևեց մի ակնթարթ միայն, ձեռքի մեջ ավելի պիրկ սեղմեց հրացանը, յերկու քայլ հետ ցատկեց և կրակեց: Հակառակորդն ընկավ, սկսեց թպրտալ անձրևաջրի մեջ: Ժամապահը չոքելով նրա կրծքին, մատներով սեղմեց կոկորդը: Ելի մի քանի րոպե, և թշնամին անշարժացավ...

Ալեքսանը թողեց նրան:

Կայծակը կրկին լուսավորեց շրջակայքը և ժամապահը տասը քայլ հեռավորության վրա տեսավ իր մյուս հակառակորդին: Նա մեռել եր առաջին հրազարկից:

Ժամապահն ապատ չունչ քաշելով՝ փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ: Սրտի մոտ ծակոցներ զգալով՝ նա շոշափեց կուրծքը և զգաց, վոր շապիկը թրջվել է սեփական արյունով:

Նա հասավ հեռախոսին և, վերցնելով խոսափողն, ասաց.

— Ընկե՛ր պետ, պահեստը վտանգի մեջ է:

Շտապ կերպով ոգնության յեկող կարմիր բանակայինները նրան մեռած գտան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խանդաղատանք—*դուրդուրանք, կարոտ:*
2. Ստապատկեր—*մտքում առաջացած պատկեր:*
3. Անդորր—*խաղաղ, հանդարտ:*
4. Շանթ—*կայծակ.* շանթահարել—*շանթով խփել:*
5. Ցեղատարափ—*առատ անձրև (կամ ձյուն):*

6. Ծավալուն—*տարածված, շատ տեղ բռնող*
7. Պիրկ—*ամուր:*
8. Համակել—*պատել, տիրել:*
9. Բեկբեկվել— *կոտրատվել:*
10. Ունկնդրել— *ականջ դնել, լսել:*
11. Խռովահույզ—*անհանգիստ:*

ՀԱՐՑԵՐ

1. Նամակն ո՞ւմից եր և ի՞նչ եյին գրում Ալեքսանին:
2. Հայրն ի՞նչ եր պատվիրել վորդուն:
3. Ի՞նչ գրեց Ալեքսանն իր նամակում:
4. Ի՞նչ մտքերով տարվեց Ալեքսանը:
5. Ո՞ւր գնաց Ալեքսանը հանգստից հետո:
6. Ի՞նչպիսի գիշեր եր Ալեքսանի ժամապահության ժամանակ:
7. Ի՞նչպես վարվեց Ալեքսանը թշնամու հետ:
8. Ի՞նչ եր պատահել Ալեքսանին:
9. Ի՞նչ արեց Ալեքսանն իր կյանքի վերջին րոպեին:

---

58. ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակն յերկնքից,
Հովվի սրինգն եր անուշ:
Հոտագն յեղներ կարածե,
Մանկալ պառկել, քունն անուշ.
Զրզրզրուն քամին կիչե,
Ծովային հովն եր անուշ:
Դաշտեր, ձորեր մնջեր են,

Ջրեր գլգլան, ձենն անուշ։
Հավքեր թռան իրանց բուն,
Բլբուլի տաղն եր անուշ.
Անմահական հոտ բուրեր,
Կարմիր վարդի հոտն անուշ։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զղզղուն — սվսվացող։
2. Մնջեր են — լռել են։
3. Տաղ — յերգ։

---

59. ՅԵՂՆԻԿԻ ԶԱԳՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ամպրոպն անցավ։ Թռչուններն սկսեցին իրենց հա-մերգը։ Ծառերն ու ծառերի տերևներն ուրախության արցունքներ եյին թափում։ Մայրիկը սիրում եր թարմ անձրևանցին զբոսնել։ Գնում եր մարգագետին ու ինձ ել հետը տանում։ Հիմա ել գնացինք ու մարգագետնի ափերով լեռան կողմն ուղևորվեցինք։

Լսվում եր սրնգի անուշ ձայն։ Լեռան ստորոտին փռվել եր վոչխարն ու անուշ-անուշ արածում եր նոր թրջված խոտը։ Արևը կիսով չափ թաղնվել եր բլրի հետևը. նրա աղոտ ճառագայթները հրաժեշտ եյին տալիս լեռների և անտառի կատարներին։

Վերևը, բլրի լանջին, նստած եր հովիվը յափունջու մեջ փաթաթված ու սրինգ եր նվագում։ Նրա կողքին շնթռել եր մի թավամազ ու զարհուրելի գամփռ, ժիր-ժիր շրջում եր աչքերը հոտի վրա և յերբեմն զբաղվանքով նայում եր տիրոջը։

— Վատ տեղ յեկանք,— ասաց մայրիկը։— Հովիվն անզեն է, նրանից մի՛ վախենա, բայց շունը մեր հոտը



կառնի ու կարելի յե հետապնդի մեզ։ Հե՛ռ դարձիր. աչք բռնիր, թե մեր կողմը վազեց, յես նրան կերևամ, իսկ դու թաղնվիր խոտերի մեջ։

Հոտը մեզ նկատելով՝ խրտնեց և սկսեց մեր կողմը նայել։ Յես թաղնվեցի խիտ, պառաված թփերի մեջև աչքերս չեյի հեռացնում այն թավամազ գամփռից...

Հոտի խրտնելն ու շան վնդոտալը մեկ յեղավ. նա սրեց ականջներն ու մեր կողմը նետվեց...

Հովիվը մեզ վրա գոռաց, դողս բռնեց։ Գամփռը նկատեց մայրիկիս ու նրա կողմը վազեց։ Մայրիկը սրլացավ ու մի ակնթարթում աչքիցս կորավ։ Աչքերս արտասվակալեցին. յես նվաղեցի։ Վա՜յ գլխիս, մայրի՛կ ջան, յեթե այդ գարշելին քեզ բռնի։ Յես յերկար լսում եյի փախչող վոտների ու ձորը թափվող քարերի ձայնը։

Իսկ յեթե նա բռնել է մայրիկիս ու գզում է իր սուր ատամներով... ո, վա՜յ ինձ...

Արդեն մթնշաղ եր։ Հովիվը սուլեց հոտին և գեղի տուն քշեց։ Սրտատրոփ հետևում եյի նրա շարժումներին։ Խեղճ վոչխարներին հովիվը ծեծում եր, միքանիսի վրա քարեր նետում։ Ինձ նման մի փոքրիկ գառնուկի

քար խփեց։ Խեղճը վայր ընկավ և սկսեց վոտները թափահարել...

Հովիվը բարձրացավ բլուր և սկսեց կանչել շանը։

— Ղո՛ւրչիա, Ղո՛ւրչիա։

Փոքր ինչ հետո հորիզոնի վրա յես նկատեցի նրա Ղուրչիային, վոր կարմիր լեղուն դուրս դցած՝ կանգնել եր տիրոջ կողքին։

Ցես վախենում եյի, մտածում՝ թե մի դուցե մայրիկի արյունով և ներկել իր դունչը։

Մթնեց։ Խորը խավար եր։ Վոչ մի տեղից ձայն չեր լսվում։ Ի՞նչ յեղավ մայրիկս։ Դուցե ինձ չգտնի, յեթե նույնիսկ կենդանի յե նա։

Հանկարծ մի ձայն լսեցի։ մայրիկիս ձայնին եր նման։ Ցես ել նրան ձայն տվի։ Խեղճ մայրիկս եր, հոգնած, ուժասպառ վրաս ընկավ։

— Այստե՞ղ ես, բալիկ ջան։ Մի՛ վախենա, մայրիկդ կենդանի յե։ Շունն ու գայլը նրա համար վտանգավոր չեն։ Դու հո կենդանի՞ յես։

— Կենդանի յեմ, —պատասխանեցի յես։

Մայրիկս սկսեց կարոտալի փաղաքշել ինձ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ամպրոպ — *կայծակ, վորոտ (ամպերի)։*
2. Գգվանք — *փաղաքշանք, դուրդուրանք։*
3. Նվաղել — *թուլանալ, մաբել։*
4. Մթնշաղ —*մութ, մթնող։*
5. Զարհուրազդեմ— *սարսափելի դեմքով։*
6. Թավամազ — *թավ, խիտ մազերով։*

60. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Դու կապուտակ ծովով արի,
Թեթև, թեթև թևով արի.
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան յերգով, կանչո՛վ արի։
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, դարուն դու բեր։

Սևիկ-մևիկ աչիկ ունես,
Մկրատաձև պոչիկ ունես,
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի։
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, դարուն դու բեր։

Ծիծեռնակով դարուն կգա,
Անծիծեռնակ դարուն չկա,
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի։
Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, դարուն դու բեր։

61. ԶԱԼԱՆԿԸ

1

Մեր Զալանկը մի սև բրդոտ շուն էր, կուրծքն ու վիզը ճերմակ, վոր հեռվից թվում էր սպիտակ վզկապ: Փոքրուց նրա ականջներն ու պոչը կտրել էին, այդ պատճառով ամառը սատկիկ տանջվում էր ճանճերի ձեռից. հողը փոս էր անում, մեջը պառկում, կամ ժամերով մտնում էր թփերի ու լոբիների մեջ և դուրս էր գալիս այն ժամանակ միայն, յերբ անծանոթ վոտնաձայն էր լսվում բակում, կամ անցնող շան հոտ էր առնում: Մեր տավարին սիրում էր նա... Յեթե պատահեր, որինակ, մեր յեղներն առանց հսկողի մնային դաշտում, Զալանկը կմնար նրանց մոտ, նույնիսկ առավոտից մինչև յերեկո կհսկեր քաղցած և յերեկոյան միայն, յերբ յեղները գային տուն, նա էլ հետները կգար...

Զմեռը հայրս Զալանկին կապում էր մեր գոմի դռան առջև, ուր նա յերեկոները խոտ էր դնում նրա համար, վոր տեղը տաք ու փափուկ լինի: Հայրս Զալանկին գոմի դռանը կապում էր, վոր գող գալու դեպքում իմացնի, վորովհետև գոմը գտնվում էր մեր տնից բավական հեռու:

— Ինածն ու մեռածը մեկ է,— ասում էր հայրս և միշտ զգուշացնում, վոր յեթե ինքը, պատահեց, տանը չեղավ, մենք չմոռանանք Զալանկին կապել գոմի դռանը:

Յեվ, պետք է ասած, Զալանկի պատճառով, թե նրա ահից, մեր գոմից բան չէր գողացվում: Հայրս հավատացած էր, վոր մի բան պատահելիս՝ Զալանկը հաջողով կիմացներ: Իսկ Զալանկը յերբեք սուտ չէր հաջում... Այդ արդեն հայտնի յեր:

2

Զմռան մի գիշեր, յերբ մեր տանը բոլորս խոր քնած էյինք, հանկարծ զարթնեցինք ինչ-վոր տարօրինակ ձայներից: Մեկը դիպչում էր մեր դռանը, չանդռում այն և ինչ-վոր մոմոտցի նման ձայներ հանում:

Ամենից առաջ զարթնեցինք յես ու մայրս: Հայրս, սովորաբար, խոր էր քնում. մինչև չհրելիր՝ չէր զարթնի: Մի քանի անգամ ականջ դնելով այդ տարօրինակ ձայներին՝ մայրս զարթեցրեց հորս:

— Տես մի, են ի՞նչ է, վոր դուռը չանդռում է,— ասաց մայրս:

Այդ բոպեին դռան չանդռոցը կրկնվեց. նորից մեկը դիպավ դռանը և լսվեց զսպված կլանչոց:

— Շուն է՞,— հարցրեց հայրս տարակուսած, անկողնում նստելով: Ապա վեր կացավ, արխալուղը գցեց ուսերին ու գնաց դեպի դուռը:

Բայց մայրս չթողեց դուռը բանալ:

— Կատաղած շուն կլինի, բաց մի՛ անի:

Հայրս նայեց լուսամուտից, բայց բան չնկատելով, լուսամուտի մի փեղկը բաց արավ ու գլուխը դուրս հանեց:

— Դե կո՛րի,— գոռաց նա և, հետ դառնալով, ասաց.

— Մեր շունն է, կապը կտրել է...

— Բայց ինչի՞ յե դուռը չանդռտում, — ասաց մայրս: Չլինի՞ սոված է:

—Չե՛, հենց իրիկունը գոմը փակելուց հետո յեմ հաց տվել,— պատասխանեց հայրս:— Ով գիտի, գելի հոտ է առել, վախից կապը կտրել, դեսն է յեկել...

Ու հայրս, ուսերին գցած արխալուղը մի կողմ դնելով, ուզում էր կրկին անկողին մտնել, յերբ շունը կրկին դիպավ դռանն ու կլանչեց:

— Չէ՛: Սա ի՛սկ վոր գելի հոտ է առել,— կրկնեց հայրս,— վախից կլանչում է...

Ու նորից բարկացավ վրան:

— Դե կորի՛, անպետք...

Զալանկն ընդհատեց կլանչոցը, բայց դարձյալ դռնովը դիպավ:

— Քեզ պես հազարը լինի, ես ցրտին դուրս չեմ գա,— ասաց հայրս ու մտավ անկողին:

3

Բայց հազիվ անկողին էր մտել, շունը դարձյալ յեկավ, դարձյալ դռնովը դիպավ ու կլանչեց: Հայրս ուզում էր ելի բարկանալ, բայց այս անգամ մայրս խորհուրդ տվեց վեր կենալ, տեսնել, թե ի՛նչ է պատահել:

— Ես շունն իսկի եսպես չի արել: Չլինի՞ գոմը գող է մտել,— կասկած հայտնեց:

— Ցես կարծում եմ՝ գել է տեսել, դրանից է վախչում,— ասաց հայրս, դժդոհ վեր կենալով ու հագնվելով:— Ցեթե գող լիներ՝ կհաջեր: Շունը մենակ գել տեսնելիս չի հաջում:

— Դե վոր եղպես է, հրացան վերցրու, — խորհուրդ տվեց մայրս անհանդստացած:— Սոված գելը կլինեն, կվնասեն...

Հայրս այդպես ել արավ. հագնվելուց հետո՝ վերցրեց տան անկյունում կախված մեր հին հրացանը և սկսեց վառոդ լցնել:

— Դու ե՛լ վեր կաց, ա՛յ վորդի,—ասաց մայրս, — վեր կաց, ճրագը վառի, հորդ հետ գնա: Գելերը ճրագի լույսից վախենում են...

Ասաց ու ինքն ել վեր կացավ:

Ցեվ մինչև հայրս հրացանը կլցներ, յես հագնվեցի արագ: Շատ եյի լսել գայլերի մասին, բայց չեյի տեսել... Ճրագը դատ, վառեցի և հորս հետ դուրս յեկա:

Դուռը բաց արինք թե չե, Զալանկը, կապի կտորը վզին, դիպավ հորս վոտքերին, կլանչեց ու առաջ վազեց:

Բայց հայրս կանգ առավ՝ շուրջը նայելու: Ցես նույնպես նայեցի. գայլ չի՞ յերևում արդյոք... Ցուրտ եր... ձյուն... Գետինը, տանիքները, պատերը, ծառերը — ամեն ինչ ծածկված եր ձյունով... Թեև անլուսին գիշեր եր և սպիտակի վրա ամեն ինչ պարզ յերևում եր, բայց գայլ չկար...

«Ցերևի գոմի մոտ է»,— մտածեցի:

Շունը, վոր առաջ եր գնացել, նկատելով հորս ու իմ կանգ առնելը, հետ դարձավ ինքույն, կլանչեց և՝ կրկին առաջ յեկավ, շուտ շուտ հետ՝ հորս յերեսին նայելով. կարծես ուզում եր հասկացնել, վոր հետևենք իրեն:

Հայրս, հրացանը պատրաստ բռնած, ելի չորս կողմն աչք ածելով, յես ել նրա հետ, քայլ առ քայլ գնացինք շան հետևից:

Զալանկը վազում – գնում եր մինչև գոմի դուռը, այնտեղից վազում գալիս հորս մոտ, կլանչում և դարձյալ գնում դեպի գոմը:

Այս բանը կրկնեց մի քանի անգամ, և հայրս այլևս առանց շուրջը նայելու՝ շտապեց դեպի գոմը:

— Եստեղ ինչ-վոր բան կա,— ասաց նա ու քայլերն արագացրեց:

Ցես, ճրագը ձեռքս, հետևեցի նրան:

Զալանկը գոմի դռան առջև կանգնելով՝ սկսեց կլանչել ու անհանգիստ շարժումներ անել:

Հայրս բացեց դռան դուռը, և յերբ ներս մտանք ու յես ճրագով լուսավորեցի դոմը, մեր աչքին պարզվեց հետևյալ տեսարանը:

Մեր մեծ կովը ծնել եր: Հորթն աղբի մեջ ընկած՝ մզզում եր և ուզում եր բարձրանալ, բայց չեր կարողանում: Իսկ մայրը բառաչելով՝ անհանգիստ շուռ եր գալիս յերկու կողմի վրա, կապը ձիգ տալիս՝ դունչը հորթին հասցնելու... Ու չեր կարողանում:

Հայրս խնկուցն վերցրեց հորթը՝ մաքրեց, աղ տրավ ու դրեց մոր առաջ... Յեվ մինչ հայրս հորթը մաքրում, աղ եր անում, Զալանկը, ուրախ կլանչելով, թռչկոտում եր դես ու դեն:

— Այ կեցցե՛ս, Զալանկ,— ասում եր հայրս նրա գլուխը շոյելով,— յես քեզ դուր տեղը ծեծեցի:

Պարզվեց, այսպիսով, վոր Զալանկը դրսից լսելով դոմում կատարվող անհանգստությունը, կապը կտրել եր, յեկել մեզ իմաց անելու:

Այդ օրվանից մենք սկսեցինք սիրել Զալանկին առանձին սիրով: Յեվ յերբ պատահում եր, վոր նա հաջում, կլանչում եր դուրսը, միշտ ուշադիր եյինք նրա ձայնին: Դիտեյինք, վոր Զալանկը ստոտ չի հաջի:

Շունն իմաստուն կենդանի յե,— ասում եր հայրս այդ դեպքից հետո:— Շանն ախպոր պես պիտի սիրել...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տարակուսել — կասկածել:
2. Վառոդ — պայթուցիկ նյութ (փամփուշտի միջի):
3. Աչք ածել — ուշադիր նայել, հսկել:
4. Արխալուղ — տղամարդու հին ձևի վերնազգեստ:

---

62. ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ,
Թե պատահմամբ,
Մի մեծ ագռավ
Մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թռավ:
Ո՛, ի՞նչ պանիր, դեղին վոսկի...
Բայց դեռ չառած համը խսկի,
Աղվեսն անցավ ծառի մոտով,
Գերվեց,
Երվեց
Պանրի հոտով:

Վազեց, գնաց բերնի ջուրը
Ու թուլացան կուռն ու ճուռը։
Են ժամանակ իրա ձևին,
Ծառի տակից, աչքն ագռավին
Հեզիկ նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն անուշ, մեղուշ,
Թափեց, չափեց շաքար ու նուշ.
«Ինչքան լա՛վն ես,
Ցես քո գերին—
Քո եղ սևիկ
Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զույգ թևերին։
Մի դու մտիկ—
Եղպես քթիկ,
Եղպես ճտիկ.
Մախմուր ագին,
Խաս ու դումաշ
Ատլասն հագին։
Գիտեմ անշուշտ, իմ քույրիկի
Զայնըն ել է հենց սոխակի։
Ցերգի՛, քույրիկ, մի՛ ամաչի,
Իմ ուղածը մի մեծ բան չի»։
Ագռավ ագին իրեն տված
Գովեստներից չչմած, ուռած՝
Ագռավային
Բկովը մին,
Վար չկռա՛ց—
Պանիրն ընկավ ծառիցը ցած
Շողոքորթը հախռեց, գնաց։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. կուռն ու ճուռը— ձեռքն ու վոտքը։
2. Մախմուր — թավիշ։
3. Շողոքորթ — կեղծավոր։
4. Հախռել — վրա տալով, աղահարար ուտել։



63. ՑԵՐԵԽԱՆԵՐԸ

(Ցարական կարգերում)

Ցերը յես պատանի եյի, կիրակի որերը—գարնանը և ամառը— հավաքում եյի մեր փողոցի յերեխաներին և առավոտից տանում եյի դաշտ, անտառ. ինձ համար հաճելի յեր մտերիմ լինել այդ փոքրիկների հետ, վորոնք ուրախ եյին թռչունների պես։

Ցերեխաներն ուրախությամբ եյին թողնում քաղաքի նեղլիկ, փոշոտ փողոցները։

Մայրերը տալիս եյին նրանց հացի կտորներ, յես

եւ եղի գնում վորևէ համեղ բան, մեծ չիչը լցնում էին կվասով՝ և ինչպես հովիվ, քայլում էին անհոգ գառների հետևից՝ քաղաքի փողոցներով, դաշտերով, մինչև կանաչ անտառը, վոր զուգված եր գարնան հիանալի և փաղաքշական զարդերով:

Մի անգամ, յերբ յերեխաների խմբի հետ յես քաղաքից դաշտ եղի գնում, մեր դեմ հանկարծ հայտնվեց բոլորիս անծանոթ մի հրեա տղա, վոտաբոբիկ, պատառոտած վերնաշապիկով, սև հոնքերով, նրբակազմ ու գանգրահեր, ինչպես գառնուկը:

Նա հուզված եր ինչ-վոր բանից: Նկատելի յեր՝ վչ առաջ լաց եր յեղել, նրա անփայլ սև աչքերի ծոպերն ուռել ու կարմրել եին և խիստ աչքի եին ընկնում կապտելու աստիճան դալկացած սովահար դեմքի վրա:

Նա հանկարծ, միանգամայն հանդիսա, պարզ ու հասկանալի ասաց.

— Ուղղո՞ւմ եք Ֆոկուսներ ցույց տամ ձեզ:

— Յո՛ւյց տուր,— կանչեցինք մենք:

Գեղեցիկ նրբակազմ տղան ճկեց իր նիհարիկ մարմինը դեպի հետ, ձեռքերը կպցրեց հողին և վոտքերը հանկարծակի վեր բարձրացնելով՝ կանգնեց ձեռքերի վրա ու բացականչեց.

— Հո՛պ:

Ցեվ պտույտներ եր գործում հրդեհվածի նման, թեթևությամբ ու ճարպկորեն խաղացնելով իր մարմինը:

Թվում եր, թե ահա, յերբ նա մի անգամ եվ կոբանա, այդ բարակիկ վոսկորները ճրթճրթոցով կփըշրվեն:

Նա չարչարվեց մինչև քրտնելը, մեջքի քրտինքից թրջվեց նրա վերնաշապիկը. կատարելով վորևէ վարժություն՝ նա շինծու, մեռած ժպիտով նայում եր յերեխաների դեմքին, և անհաճելի յեր դիտել նրա անփայլ աչքերը, վորոնք ասես լցնացել եին ցավից: Յերեխաները քաջալերում եին նրան բացականչությունների աղմուկով, շատերն արդեն ընդօրինակում եին նրան:

Բայց այդ ուրախ բոպեներն անմիջապես չքացան, յերբ տղան, դադարեցնելով իր ճարպիկ վարժությունները, նայեց յերեխաներին փորձված արտիստի տարեհաճ ժպիտով և, մեկնելով բարակիկ ձեռքն, ասաց.

— Այժմ տվեք ինձ վորևէ բան:

Բոլորը լռեցին, ինչ-վոր մեկը հարցրեց.

— Փո՞ղ:

— Այո՛,— պատասխանեց տղան:

— Մի սրան տե՛ս:

— Փողով մենք ինքներս էլ կկարողանայինք...

Ի հարկե, մերոնցից վոչ վոքի մոտ դրամ չկար, իսկ ինձ մոտ կար միայն յոթ կոպեկ: Ցես յերկու փոքրիկ դրամ դրեցի նրա փոչոտ ափի մեջ, տղան մատներով իրար տվեց այն և ուրախ ժպտալով ասաց.

— Շնորհակա՛լ եմ...

Նա հեռացավ ինձնից և յես տեսա, վոր նրա վերնաշապիկի թիկունքն ամբողջովին ծածկված է մուգ բծերով և կպել է թիակոսկրներին:

— Սպասիր, այդ ի՞նչ է:

Նա կանգ առավ, հետ դարձավ, ուշադիր նայեց ինձ և նույնպիսի ուրախ ժպիտով պարզ ասաց.

— Սա՞, թիկունքիս վրայի՞նը: Այդ մենք կրկեսում ենք վայր ընկել մարդաձողերից. հայրս դեռ պառկած է, իսկ յես արդեն առողջ եմ...

Ցես բարձրացրի նրա վերնաշապիկը. թիկունքի մաշկի վրա, ձախ ուսից վար՝ դեպի կողքը— տարածված եր մուգ ու լայն մի քերծվածք. նա չորացել եր, հաստ կեղև բռնել, բայց վարժությունների ժա-

մոռեակ կեղեվը նորից պատռվել եր մի քանի տեղ և այժմ պատռվածքներից ծորում եր կարմիր արյունը։

— Հիմա եվ չի՛ ցավում,—ասաց նա ժպտալով,— չի՛ ցավում, միայն քոր է դալիս։

— Կարծում եք, թե այս յես ի՞նձ համար աշխատեցի։ Ազնիվ խոսք՝ վոչ։ Հա՛յրս... Մեզ մոտ վոչ մի պատառ հաց չկա։ Իսկ հայրս այնպես է ջախջախվել։ Գիտե՞ք, հարկավոր է լինում աշխատել։ Իսկ այստեղ եվ — դե հրեաներ ենք մենք և բոլորը ծիծաղում են մեզ վրա... Ցտեսություն։

Նա խոսում եր ժպիտով, ուրախ և աշխույժ։

Իր գանգրահեր գլխի խոնարհումով հրաժեշտ տալով ինձ, նա չափազանց արագ անցավ տների մոտով, վորոնք իրենց ապակե աչքերով նրան եյին նայում անվրդով և անկենդան։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Փաղաքշական — սիրալիր, գուրգուրող։
2· Գալկացած — գունատ, դժգույն։
3· Ափ — ձեռքի ներսի մասը («բուռ»)։
4· Անվրդով — հանգիստ, խաղաղ։
5· Ճկել — թեքել, ծռել։
6· Արտիստ — դերասան։
7· Բարեհաճ — սիրալիր, հաճելի։

ՀԱՐՑԵՐ

1· Ի՞նչն եր այդ տղայի թշվառության պատճառը։
2· Ի՞նչպես եյին ապրում աշխատավորների յերեխաները ցարական կարգերում։
3 Ի՞նչպես եյին վերաբերվում ցարական կարգերում հարուստները հրեաներին և մյուս փոքր ազգություններին։

Համեմատեցեք այս գրվածքը Հ· Թումանյանի, Ա· Չեխովի նման գրվածքների հետ («Գիքորը», «Վանկա»)· ի՞նչ ընդհանուր գծերը կան այս գրվածքներում։

64· ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի մեջին·
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին,
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի մեջին։

Տղան ասավ·— Քեզ կպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի մեջին։
Վարդը ասավ·— Տե՛ս, կծակեմ,
Վոր չմոռնաս փշոտ վարդին·
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի մեջին։

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի մեջին·
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց եվ չոգնեց քնքուշ վարդին·
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի մեջին։

---

65. ՎԵՐՋԻՆ ՍԱՏԱՆԱՆ

1

Ապրիլ ամիսն էր. ձյունը հալվել էր, որը յերկարել, կանաչը փթթել: Ճիշտ, ե, սարերի կատարները դեռ սպիտակին էին տալիս և լեռների լանջերին նոր-նոր էր կանաչը ծլում, բայց ձորերում, քարերի տակ արդեն բսել էին ծնեբեկն ու սինդրիկը, վոր տարվա այդ յեղանակին սքանչելի կերակուր էին մարդկանց համար:

Ու մի որ, յերեկոյան դեմ, գյուղի հրապարակում աղմուկ բարձրացավ: Տղամարդիկ կոլխոզի նախագահի հետ դաշտում ցանք էին անում: Կոոպերատիվի խանութի առաջ հավաքվել էին մի քանի ծերունիներ: Թեվոս բիձեն կանգնել էր մեջտեղը և գոռգոռում էր.

— Սատանա յեր, այ ձեզ մատաղ, սատանա՛— հենց ձեն էր հանում, հենց ձեն, վոր սիրտս գող ընկավ:

— Թեվոս բիձա, պոզ էլ ունե՞ր, պոչ ե՞լ,— կատակով հարցնում էր պիոներ Սուրիկը, վոր յեկել էր կոոպերատիվից լուցկի գնելու:

— Դե կորեք, լա՛վ,— թողեք մի բան հասկանանք.— բարկանում էր Մաղթաղ տատը:

— Ա՛յ, կնանիք, յես ձեզ ասում եմ —ես քան ապրել եմ, ըռենց ձեն չեմ լսել.— ինձ վոր տեսավ, վրա ընկավ, ամա յես թռա, ու ինձ քարը տվի, նա մնաց ձորումը:

— Վա՛յ, քոռանամ յես,— ծնկանը խփեց Հռոռոմ Հոքիրը,—դե՛ ասա՝ էլ ձորը գնալ չի լինի, ասա ծնեբեկը, սինդրիկը չորանալ պտի, փչանալ, ելի՛...

— Աղջի, ի՞նչ եք խոսում, բա մեր Մուշեղն ասում է, բոլշևիկները սատանաներին քշեցին—էլ ի՞նչ

ա խոսում ես սիրտը մեռած Թեվոսն,— ասաց Նարգիզ տատը:

— Ճիշտ է, ճիշտ,— Նարգիզ տատը ճիշտ է ասում. ընկեր Գոհարը՝ մեր ուսուցչուհին պատմել է, վոր բոլորը սուտ է. վո՛չ սատանա կա, վո՛չ էլ նման մի բան,— արագ-արագ վրա տվեց պիոներուհի Լենան.— Թեվոս բիձեն սխալվում է:

— Ե, վախկոտ մարդ է, ո՞վ գիտե՝ ինչից է վախեցել,— ծիծաղեցին յերիտասարդները:

Թեվոս բիձեն վոչ միայն այդ գյուղում, այլ ամբողջ շրջանում հայտնի յեր իբրև վախկոտ ու մի քիչ էլ սնահավատ մարդ: Ցերը լուրը տարածվեց գյուղում, կոլտնտեսականները վոչ մի նշանակություն չտվին այդ խոստկությանը, միայն պառավներն էին, վոր վաշ-վիշ արեցին, ու հաջորդ որը վոչ միայն իրենք չգնացին սինդրիկի, այլ և աղջիկներին չթողեցին ձորը գնալ:

— Հայ-վա՛յ, ի՞նչ ծնեբեկ, ի՞նչ սինդրիկ է փչանո՞ւմ,— ասում էին աղջիկները,— ես խելքը կորցրած պառավներն էլ չեն թողնում մեզ ձորը գնալու:

— Ձե, եսպես չի լինի, — ասաց կոմյերիտուհի Վարսիկը, յերեկոյան պետք է խոսել մեր կոմյերիտական տղաների հետ և մի բան անել. եսպես չի կարելի թողնել:

2

Ցերեկոյան կոմյերիտականները ժողովի վերջում խոսեցին նաև Թեվոս բիձու տեսած «սատանայի» մասին. վորոշվեց, վոր կոմյերիտական Վահանը, Մուշե-

դը Ե պիոներ Վաղոն գնան ձորը, տեսնեն, թե դա ի՞նչ բան է:

— Պետք է անպայման զինված գնալ,— ասում էր Վաղոն,— ով գիտե՝ ի՞նչ է, յերևի մի գազան կլինի:

— Դե իհարկե՝ զինված. յերևի արջ կլինի, կամ մի բան: Չե՞ վոր յերբեմն հեռու անտառներից արջ է մտնում մեր ձորը,— ասաց Մուշեղը, վոր լավ վորսորդ էր:

— Սպասեցեք, սպասեցեք,— աղաղակեց Վարսիկը. ախար վոր գնաք, վո՞ր կողմն եք գնալու, դուք ի՞նչ գիտեք, թե էդ գազանը վո՛րտեղ է. ձորը մեծ է և հեռու. պետք է Թեվոս բիձուն էլ հետներդ տանեք:

— Նա չի՛ դա,— վախից նրա թուքը կպչում է,— Ղրա բերին մի քանիսը:

— Չե՛, նրա դալն անհրաժեշտ է, պետք է տանենք,— վճռեց Մուշեղը:

Կանչեցին Թեվոս բիձուն: Նա վոչ մի կերպ չեր համաձայնում:

— Ձենը դեռ ականջումս ա, վոտներս դեռ դողում են, յես վո՞նց գամ:

Այդ ժամանակ ներս մտավ Բագրատը, կոլխոզի նախագահը: Իմանալով, թե ինչի մասին է խոսքը, ասաց.

— Թեվոս բիձա, գնա տղաների հետ, թե վոր դը-ըուստ տղերքը մի բան վորսացին, համ եդ «սատանան» քեզ կտամ, համ յերկու աշխորի չափ նվեր կը-տամ:

Նվերը գրավեց Թեվոս բիձուն և նա համաձայնվեց:

3.

Հաջորդ օրը — ճաշից հետո չորս հոգով, հրացաններով, պարաններով զինված՝ գնացին Դարմանա-

թաղի ձորը, վորտեղ պետք է լիներ Թեվոս բիձու տեսած «սատանան»:

Արդեն մթնում էր, յերբ տեղ հասան: Թեվոս բիձեն վերևի քարերի տակ կանգնեց և մատով ցույց տվեց ցածի թփուտները, ուր ինքը տեսել էր «սատանային»: Հենց այդ բոպեին մի սոսկալի վոռնոց լսվեց ցածից — դա ավելի շուտ նման էր անտեր յերեխայի սոսկալի լացի...

— Կացեք, ասաց Վահանը, սա գազան չի — սա յերևի կորած յերեխա յե:

— Չե, յերեխա չի, սա ուրիշ բան է,— չընջաց Վաղոն:

— Տեսա՞ք, վոր սատանա յե,— ասաց զունատված Թեվոս բիձեն:

— Տո, ի՞նչ սատանա, կաց մի տեսնենք,— բարկացավ Մուշեղը:

Հանկարծ նույն ձայնն ավելի բարձր և աղիողորմ լսվեց մի քիչ մոտիկից:

— Կացեք, ես հո չախկալ է, — գլխի ընկավ Վահանը, յես մեծ անտառում շատ եմ լսել չախկալի ձայնը. յերևի ներքևի ձորերից է յեկել, ետտեղ քարերում չչկլվել:

Վահանը լավ էր հասկացել. ճիշտ այդպես էր: Մուշեղն այդմասին կասկած չուներ: Բայց վորոշեցին չսպանել, այլ կենդանի բռնել չախկալին: Թեվոս բիձեն խորհուրդ էր տալիս սպանել, ասելով, վոր չախկալը կատաղի գազան է, կվնասի: Բայց Մուշեղը համառ տղա յեր: Ծառի ճյուղերից, թփերի վոստերից թակարդ շինեցին —և ամբողջ գիշերը չարչարվելով, առավոտյան դեմ կենդանի բռնեցին չախկալին: Կապեցին դունչն ու վոտքերը և քարշ տալով, լուսաբացին գյուղ բերին:

Ամբողջ գյուղը հավաքվել էր կոոպերատիվ խանութի առջևի հրապարակը: Որվա հերոսը չախկալն էր ու Թեվոս բիձեն: Եվ ինչ անեծք ու ծաղը ասես, վոր կանայք չեյին թափում վախկոտ Թեվոսի գլխին: Իսկ կոլխոզի նախագահ Բագրատը հպարտ-հպարտ հետ արավ ընչակաուը չախկալի վոտքերը և ծիծաղելով ասաց.

— Ը՛հը, ա՛յ ժողովուրդ, ա՛յ կնանիք, մեր ձորեբում ես մի «սատանան» էր մնացել, են էլ մեր կոմսոմոլները բռնեցին, բերին: Խոստացել ենք Թեվոս բիձին — թող նրան լինի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ծնեբեկ, սինդրիկ — կանաչի (բանջար), վոր ուտում են:
2. Սնահավատ — սուտ բաների հավատացող:
3. Աղիողորմ — սրտաճմլիկ, ցավալի:

66. ԾԱՂԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

ՄԵՂՈՒ

Բարե՛վ, բարե՛վ, կապույտ ծաղիկ,
Ա՛խ, ինչ լավն ես ու գալար,
Թող քո սրտից մեղուն քաղի,
Անուշ հյութեր իր համար:

ԾԱՂԻԿ

Պստիկ մեղու,
Ճստիկ մեղու,
Աչխատասեր ու արի,
Ո՞ւր ես տանում,
Ի՞նչ ես անում
Փոչին դու իմ թերթերի:

ՄԵՂՈՒ

Կապույտ ծաղիկ, նուրբ ու նախշուն,
Բացված գարնան հովի հետ,
Ցես քո հյութից մեղը եմ քաշում
Համով, հոտով բուրավետ:
Առավոտից մինչ ուշ գիշեր
Շրջում եմ դաշտ ու այգի,
Չե՞ վոր ցես էլ անդամն եմ ժիր

Մեր յերջանիկ համայնքի:
Ի՞նչ է մեղուն համայնքից դուրս,—
Թուլ ու չնչին և անզոր,
Իսկ իր հսկա համայնքի մեջ
Յե՛վ ուժեղ է, և՛ հզոր:
Մենք միասին հաշտ և ուրախ
Աշխատում ենք ու դատում.
Աշխատանքը՝ աշխույժ մի խաղ,
Կյանքը՝ վայելք է խնդուն:
Ով չաշխատեց մեղվանոցում,
Չի ունենա կյանք ու հաց...
Հոտով, հյութով սիրաղ լեցուն,
Կապույտ ծաղիկ, իմ դեմ բաց:

ԾԱՂԻԿ

Յես արևի ջինջ շողերով,
Ջերմ շողերով եմ բացվել,
Աբշալույսի մաքուր ցողով,
Գայծառ շաղով լվացվել:
Աբի՛, աբի՛, սիրուն մեղու,
Յե՛վ ժրաջան, յե՛վ կայտառ,
Բաց եմ արել սիրտս քո դեմ,
Աբի՛, քաղի՛ր հյութը, տար:

———

67. ՄԻՉՈՒՐԻՆԻ ԱՅԳԻՆ

Մի մեծ գյուղում, բերքի տոնի ժամանակ, գյուղատնտեսական ցուցահանդես կար:

Ամեն տեսակ հացահատիկների, բանջարեղենների հետ դրված էին նաև սքանչելի պտուղներ:

Գյուղացիները հավաքված նայում էին այդ պտուղներին:

— Զարմանո՞ւմ եք, հա՞,— ասաց գյուղատնտեսը, մոտենալով նրանց.— դուք դեռ այդ եք տեսել. բա Միչուրինի այգին վոր տեսնեք, ի՞նչ կանեք:

— Միչուրինն ո՞վ է, ընկեր Վահրամ, նրա այգին ի՞նչ տեսակ է վոր,— հարց տվեց գյուղացիներից մեկը:

— Ա՛յ, լսեք, պատմեմ:

Գյուղացիները շրջապատեցին գյուղատնտեսին. նա շարունակեց.

— Խորհրդային մեծ գիտնական, հայտնի այգե-

գործ էր Միչուրինը։ Նա տասնյակ տարիներ փորձեր էր անում, վորպեսզի նոր տեսակի բույսեր աճեցնի մեր յերկրում։ Յես յեղել եմ նրա մշակած այգիներում և ահա թե ինչեր եմ տեսել։

Ահա՛ թփերի մի մարդ։ սրանք թզուկ տանձենիներ են։ Զնայած տանձը սովորական տանձից էլ խոշոր է ու համեղ, բայց ծառն այնքան փոքր է, վոր կարող ես վրայից թռչել։ այսպես ավելի քիչ տեղ է բռնում, հեշտ է խնամելն ու պտուղը հավաքելը։

Ահա՛ բալենին։ նա աճում է ծաղկամանի մեջ, սեղանի վրա։ Բայց տեսեք՝ ինչքան բալ կա վրան։ ամեն մի կոթի վրա վոչ թե զույգ բալեր են աճել, այլ հիսուն, վաթսուն հատ։

Միչուրինի այգում այնպիսի խնձորներ կան, վորի տակ պահակները վախենում են քնել։ Զեռքերիդ ափերի մեջ հաղիվ կարող ես տեղավորել մի խնձորը։ Յեթե ծառից վայր ընկնի տակը քնած պահակի գլխին, կարծում եմ՝ այնքան էլ հաճելի չի լինի նրա համար։

Միչուրինի մորենուամեկ թուփը տալիս է վեց-յոթ կիլոգրամ մորի։ այն էլ ի՞նչ մորի։ ամեն մի հատիկը չորս անգամ մեծ է մեր մորուց, համեղ է, դիմացկուն։ ուր ուզում ես ուղարկիր—չի տրորվի, չի փչանա։

Ամենացուրտ և ամենատաք յերկրների բույսերը Միչուրինն ընտելացրեց և այժմ նրանք աճում են մեր յերկրի ամեն մի մասում։

— Մեզ մոտ ել պետք է այդ փորձերն անենք,— վրա բերեց կոմյերիտական Լևիկը։

— Այո, այո, մեր շատ գյուղերում արդեն կատարել են այդ փորձերը և մեծ հաջողության են հասել։ Մեր շրջանում ել պետք է նույն փորձերն անե՛, — ասաց գյուղատնտեսը։

---

68. ԱՌԱՎՈՏԸ

Արշալույսի ցոլքերը
Շողիկ հազան ծիրանի։
Տեսան, թռան հավքերը,
Նրանց հազար յերանի։

Դաշտի քնքույշ ծաղիկը
Բացեց թերթեր բուրավետ,
Յեվ վաղորդյան շաղիկը
Յերկինք թռավ շողի հետ։

Ու բարձրացավ թանձր մեգ
Գետի փրփուր ջրերից։
Զրին ասավ մի յեղեգ։
— Տե՛ս, լույս ծագեց վերևից։

---

69. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՅԵՐԵԿՈՒՅԹԸ

1

Հավաքվել էին ծաղիկները փոքրիկ մարգագետնի վրա՝ սարի լանջին, անտառի յեզերքին։ Հավաքվել էին բոլորը՝ զարդարված իրենց գույնզգույն թանկագին զարդերով։

Սիրի-սիրի

Այնտեղ եր սուսամբարը՝ կանաչ շրջազգեստը հագին, մարգարիտները՝ սպիտակ պսակներն իրենց գեղին գլուխներին։

Այնտեղ էին բոժոժները՝ սպիտակ, աշխույժ ու զվարթ. այնտեղ եր սիրի-սիրին իր կարմրավուն, գանգուր գլուխն ուղիղ պահած։

Ցեղածաղիկն էլ եր այնտեղ, կապույտ մանուշակները, վորոնք խմբով մի թփի տակ քաշված, փսիրսում էին իրար հետ։

Հապա գանազաններ՝ իրենց գույնզգույն թավիշ գլխարկներով ու վզները նազանքով թեքած. հապա հպարտ, ցից մեխակը ատամնավոր պսակը գլխին, կարմիր կամ ճերմակ։

Յե՛վ սպիտակ յեղինջը՝ վարթամ տերևների ծոցում, և՛ կապույտ անանուխը, և՛ դեղին պուպուն, բոլորն էլ այնտեղ էին, սարի լանջին, անտառի յեղերքին, ամառվա այդ գով իրիկունը։

Շուշան

Մարգարիտ

Հենց վոր ահագին կաղնու հետևից լուսինը յերևաց և նրա արծաթի շողերն ընկան փոքրիկ մարգագետնի վրա, ծաղիկներն ավելի զվարթացան, լուսատիկներն ավելի պայծառ վառեցին իրենց լապտերիկները ծառերի տակ ու ծղրիդներն ե՛լ ավելի յեռանդուն սկսեցին իրենց նվագը։

Թեթև զեփյուռը դուրս պրծավ հանկարծ անտառի հետևից ու վազ տվեց մարգագետնով. բոլոր ծաղիկները չնորհալի վողջունեցին իրար ու պարերն սկսեցին։

Զանազան

Մեխակ

Անանուխ

Նարդիլն իր յերկայն վիզը պչրանքով թեքած՝ գլուխն ե ծռմռում թեթև ու սիրուն, և ամբողջ ցողունը զողում ե հուզումից։

Իսկ ինչպես խելառ թռթռում էին կապույտ ու ճերմակ զանգակները՝ շարված իրենց յերկար-բարակ ցողունի՛ն։ Ինչպե՛ս շուշանը նազանքով շարժում եր կամաց իր քնքուշ ճերմակ գլուխը։

Պուպու

Զանգակ

Բոժոժիկ

Ի՜նչ յեռանդով պարում էին բոլորը:

Կապուտիկ պատատուկը թփերի ու վոստերի վրա յեր մագլցել, վոր ավելի լավ տեսնի: Մինչ ցածում տեսակ-տեսակ խոտերն ու սեղերն ուրախությունից ծափ էին տալիս:

3·

Հանկարծ կարվեց ծղրիդի նվագը, քամին հոգնած՝ թողեց ու քաշվեց, ու պարերը դադարեցին:

Նարգիզ



Մանուշակ

Յեվ հնչեց սոխակի քաղցր ու անուշ յերգը։ Յերգում եր ու զովում դարնան գովքը, սարերի թաքմությունը, ծառ ու ծաղկի գեղեցկությունը:

Ծաղիկները հավաքված ականջ էին դնում անշարժ, անշունչ: Ականջ եր դնում ամբողջ անտառը՝ կարծես քարացած:

Ահա լուսինը մտավ ամպերի հետևն ու ծածկվեց. մութը պատեց մարգագետինը: Բոլոր ծաղիկները կախեցին իրենց ծանրացած գլուխները, փակեցին իրենց հոգնած աչիկներն ու քուն մտան:

Անտառի խորքից լսվում եր միայն սոխակի մեղմ ու քնքույշ յերգը. կարծես անուշ որոր եր ասում...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Լանջ — կուրծք:
2. Յեզերք — ափ:
3. Լուսատտիկ — մթնում լույս տվող փոքրիկ միջատ:
4. Ծղրիդ—մի տեսակ միջատ՝ մորեխի նման, վոր յուրահատուկ ձայներ ե հանում թևերն իրար շփելով:
5. Պչրանքով — նազ անելով, զարդարվելով:
6. Սեզ— քնքույշ, բարակ խոտեր:
7. Հափշտակվել— տարվել, դրավվել:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ այս հոդվածի վերնագիրն ե «Ծաղիկների յերեկույթը»:
2. Բացի ծաղիկներից, ել ո՞վ եր մասնակցում «յերեկույթին»:

---

1. Արտաբերեցեք ծաղիկների անուններն իրենց հատկանիշները ցույց տվող բառերի հետ միասին:

70· ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Մայիսմեկին
Լուսածեղին
Բաժանվեցի յես քնից,
Ալ փողկապով,
Ծիծաղ–ծափով
Դուրս վազեցի մեր տնից...
Հոծ շարքերով,
Բյուր յերգերով
Տոն ենք տոնում մենք այսոր.
Շողշողում են,
Փողփողում են
Դրոշները ալ–բոսոր...
Կենսաթրթիռ
Մի ինքնաթիռ
«Ճերմակ սունկեր» ե թափում—
Որորալով,
Շորորալով
Նրանք իջնում են տափում...
Մեզ հետ քայլում,
Հպարտ փայլում
Մայր արևը մեր դարի,
Շող ե տալիս,
Ցող ե տալիս,
Վոր խինդը մեր վարարի։
Խինդով արբած
Ու սրտաբաց
Ընթանում ենք միասին.
— Վողջույն քեզ, կյա՛նք
Անուշ ու թանդ,
Վողջույն պայծառ մայիսին...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Հոծ — խիտ, մարդաշատ։
2· Ալ–բոսոր — վառ կարմիր։
3· Կենսաթրթիռ— տչխույժ, շարժուն (կյանքի թրթռացով)։
4· «Ճերմակ սունկեր» — այստեղ՝ պարաշյուտներ։

71· ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

1

— Մայրի՛կ, մեկը պատուհանը ծեծում է։

— Պատուհա՞նը։ Ի՞նչ պատուհան։

Մալանկան իջնում է անկողնից, խարխափելով շոշափում է պատերը, իսկ մեկը շարունակում է պատուհանը ծեծել։

— Ի՞նչ կա։ Ո՞վ է ծեծում։

Մալանկան բաց է տնում պատուհանը։

— Շտապիր գործարան։ Դժբախտություն... Անդրեասը ձեռքը վնասել է։

— Դժբախտությո՛ւն... կրկնում է Մալանկան։ Շա՞տ է վնասել։

— Չգիտեմ։ Մեկն ասում՝ է, թե ձեռքն է պոկել, մյուսը թե՝ մատները։

— Վա՛յ ինձ, վա՛յ ինձ...

Մալանկան մթության մեջ դես ու դեն է ընկնում, ինչպես մուկը թակարդի մեջ, իսկ թե ի՛նչ է ուզում անել—չի հասկանում։ Վերջապես Գաֆիկը տալիս է նրան շրջազգեստը։

Ինչպե՛ս անվերջ յերկար է դյուղը։ Այնտեղ, գործարանում, դժբախտություն։ Անդրեասը գուցե մեռել է, այնտեղ յերկար ու ձիգ, անչարժ պառկած է, իսկ այստեղ, այս խրճիթները — քնած ու խաղաղ. մեկը

կանգնես—մյուսն է ճամբին ցցվում... Զափարից դենը —չափար, դարպասից դենը —դարպաս... Իսկ գործարանը հեռու չե:

Միայն այժմ նկատում է Մալանկան, վոր իրեն հետևում է գործարանի տղան:

— Տեսե՞լ ես Անդրեասին,— հարցնում է Մալանկան:

Վո՛չ, ինքը չի տեսել, իրան ուղարկել են: Մի ինչ-վոր բան պատմում է յերկար ու բարակ, բայց Մալանկան ականջ չի դնում:

Հանկարծ խավարի մեջ յերևացին շարք-շարք լուսավորված պատուհաններ ու կարծես Մալանկայի սիրտը դանակով կտրեցին: Գործարանը ծուխ է չընչում և ամբողջովին դղրդում է՝ պարզ վորոշվելով դիշերվա մեռելության մեջ:

Բակում մի խումբ մարդիկ, իսկ նրանց մեջտեղը՝ լույս: Անդրեասը մեռե՞լ է: Կինն աղաղակում է և դես ու դեն է հրում ամենքին:

— Լռի՛ր, այ կնիկ...

Մի բարկացած ձայն նրան կանգնեցնում է, նա սակայն լռում է և միայն հլու հպատակ, աչքերը ման է ածում ամեն կողմ: Նրան բացատրում են...

— Անդրեասն սպիտակ մեքենայի մոտ եր կանգնած.

— Սպիտակ մեքենայի մոտ,— կրկնում է Մալանկան:

— Ձեռքին բռնած ուներ ձեթի տմանը, իսկ ատամնավոր սանիվը հանկարծ, մեկ էլ տեսար... պըտույտ յեկավ:

— Պտո՛ւյտ յեկավ,— կրկնում է Մալանկան:

— Այն ժամանակ նա աջ ձեռքով ուզեց պահել ատամը, իսկ մեքենան չորս մատն էլ պոկեց:

— Կենդանի՞ յե,— հարցնում է Մալանկան:

— Կենդանի՛ յե. բուժարան այնտեղ է:

Լույսը լավ է լուսավորում, սակայն ի՛նչ են անում այնտեղ, ի՛նչպես է Անդրեասը— Մալանկան չը-գիտի: Միայն այժմ լսեց տնքոցը. ուրեմն՝ կենդանի չե:

Վերջը նույն բարկացած ձայնը կանչում է.

— Այստե՞ղ է կինը: Դե՛հ, կնիկ, արի՛...

Բանվորները ճամբա յեն տալիս: Նա տեսնում է մի ինչ-վոր սպիտակ բան, բարձ պիտի լիներ, և մի-այն մոտիկից նկատում է մեղրամոմի պես դեղնած, սիրթնած դեմք...

— Անդրեա՛ս, այդ ի՞նչ են արել քեզ:

Լռում է և տնքում:

— Ի՞նչդ է վնասվել, Անդրեաս...

— Յես գիտե՞մ վոր, անդամալույծ յեղա: Հավաքիր իմ մատները:

— Ի՞նչ ես ասում, Անդրեաս:

— Հավաքիր իմ մատները, թաղիր գետնի մեջ... Նրանցով յես հաց եյի գտնում...

Մոտեցան յերկու բանվոր և վերցրին Անդրեասին: Զթողին, վոր Մալանկան վրա տա:

Մեքենայի շուրջը Մալանկան վորոնում եր Անդրեասի մատները: Ցերեքը ձեթի մեջ դեղնատած մնացել եյին սպիտակ մեքենայի տակ, իսկ չորրորդն այնպես էլ չգտնվեց: Նա մատները փաթաթեց թաշկինակի մեջ և հետը տարավ:

Անդրեասին տարան քաղաք՝ հիվանդանոց, իսկ Մալանկային կանչեց պարոն Լյոլյոն: Նա յերկար բարկանում եր, դոռում եր նրա վրա, կարծես Անդրեասը լիներ դեմը կանգնած, սակայն հինգ ռուբլի փող տվեց:

Ցերեք շաբաթ անցած՝ Անդրեասը տուն վերադարձավ: Նիհարել, դեղնել եր, մազերը ճերմակել եյին, ձեռքը վզակապին եր:

— Ձեռքս ցավում է,— դանդաղում էր նա Մալանկային:— Հենց վոր շարժում եմ, շարունակ անհանգստացնում է, ցավում է: Թաղեցի՞ր մատները:

— Ի՛նչպես չէ — բոստանո՛ւմ:

— Հիմա ի՞նչ պիտի անենք,— ասում էր Մալանկան:

— Վո՞նց թե ինչ: Կերթամ գործարան— թող մի ուրիշ աշխատանք տան:

Բայց գրասենյակում ասացին, վոր հաշմանդամներին չենք ընդունում: Նույնիսկ թույլ չտվին պարոն Լյուլյային տեսնել:

— Ա՛յ քեզ լավ բան,—աղաղակում էր Անդրեասը գործարանատիրոջ հասցեին:— Աշխատեցի տասն և յերկու տարի քո աներոջ մոտ շաքարի գործարանում, այժմ քեզ մոտ անդամալույծ յեղա, իսկ դու ինձ դուրս ես շպրտում, ինչպես մի անպետք մի բան:

Գնում էր և Մալանկան: Աղաչում, պաղատում էր, բայց իզուր... Առանց այն էլ, ասում էին, ծախսերը մեծ էին — հիվանդանոցին վճարեցին, հինգ ռուբլի տվին... իսկ ինչքա՞ն գլխացավանք էր այդ բոլորը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Անդամալույծ — հաշմանդամ:

2· «Հաց դատել» — վոչ աշխատել:

ՀԱՐՑԵՐ

1· Միայն Անդրեասի հետ այսպես վարվեց գործարանատերը:

2· Ի՞նչպիսի պայմաններում են գտնվում խորհրդային բանվորները:

Իսպանիայում ապրում էր
Իսպանացի մի տղա·
Նրա հայրն աշխատում էր
Նավատորմիղի վրա:

Նավատի յեր հայրիկը—
Ցեռանդուն էր, աննկուն,
Խորհուրդների յերկիրն էր
Իր յերգերում միշտ գովում:

Ընկերների հետ տղան
Մեծանում էր փողոցում,
Նա ազնիվ էր ու քաղցած,
Բոբիկ էր, բայց անտրտում:

Ահա՛ մի օր հայրիկը
Վերադարձավ նավից այն
Ցեվ ասաց· «Այս յերկիրը
Պատկանում է մե՛զ միայն·

Այդ ինները խաղողի,
Բաղաքները մարդաշատ
Ֆաշիստներին չե՛նք զիջի—
Լինելու յենք միշտ ազատ:

Ցեվ թող այսօր գոռ մարտում
Ընկնեմ, փուլթ չե այդ բընում·
Հրացանս չե՛մ զիջի
Ներդ թշնամուն անիրավ»:

Ընկերոջ պես Իր հորը
Ուզեցավ պատանին,

Ընկերոջ պես նա հպվեց
Հոր ամրակուռ ձեռքերին:

Արևմուտքն ու հյուսիսը
Հրդեհվել են մարտերով.
— Հայրի՛կ, վերցրու ինձ քեզ հետ,
Ցես կկռվեմ անվրդով:

Ցեթե հանկարծ քո ձեռքից
Հրացանը վայր ընկնի,
Քո բարեկամն ու վորդին
Ձենքը գետնին չի թողնի:

Պիոների աղնիվ խոսք
Տալիս եմ քեզ ու յերդում.
Քո այդ ղենքով թանկագին
Ցես չեմ սարսիլ մարտերում:

---

73. ԿԱՐՄԻՐ ԱՐԱԳԻԼ

1

Բուլղարական Բրագա քաղաքում ընդհանուր անհանգստություն եր տիրում: Անհանդիստ եր վոստիկանությունը, անհանդիստ եյին քաղաքացիները: Ցերկու կողմնել ահով սպասում եյին ինչ-վոր արտակարգ դեպքերի:

Վաղը մայիսի մեկն ե, և իշխանությունը կարգադրել եր՝ վո՛չ մի ցույց, վո՛չ մի դրոշակ, վո՛չ մի համախմբում: Կարգադրված եր, վոր այդ որը նույնիսկ կարմիր կտոր չլինի տների պատուհաններում, խանութների ցուցափեղկերում և մարդկանց վրա: Առհասարակ կարմիրը, վորպես հեղափոխության նշան, չպետք ե յերևար քաղաքում:

Այդ եր պատճառը, վոր վոստիկաններն այժմյանից շրջում եյին փողոցները, զննում պատուհանները ու խանութները, անգամ կուրները՝ տեսնելու, թե կարմիր դրոշակ չե՞ն ամրացնում վորևե տեղ, կամ թռուցիկ չե՞ն փակցնում: Գիտեյին, վոր կոմունիստները համարձակ մարդիկ են, կարող են հանկարծ մի այնպիսի բան անել, վոր քաղաքի իշխանությունն ու վոստիկանությունը խայտառակվեն: Դրանից եր, վոր նրանք կրկնապատկել եյին իրենց հսկողությունն ու յեռանդը:

2

Վոստիկանների ուժեղացած այդ հսկողությունն անհանգստացնում եր քաղաքացիներին, վոմանք վախենում եյին խուզարկությունից, ձերբակալությունից, իսկ քաղքենիները՝ անսպասելի աղետներից:

Բայց այդ որն ամենից ավելի անհանգիստ եյին յերկու փոքրիկ տղա— Պետկոն ու Խրիստոն: Դեռ մի քանի որ առաջ նրանք վորոշել եյին՝ Մայիսի մեկին, ընկերների հետ, կարմիր դրոշակով դուրս գալ փողոց և մասնակցել հասակավորների միտինգին (լսել եյին, վոր այդպիսի միտինգ պիտի լինի). հետո այդի գնալ հինգ տարի առաջ սպանված հեղափոխականների գերեզմաններին, ուր թաղված եյին նաև Պետկոյի հայրը և Խրիստոյի մեծ յեղբայրը: Բայց իշխանության սպառնալից արգելքն ամբողջովին քանդում եր նրանց ծրագիրը, և նրանք այժմ անհանդիստ մտածում եյին այնուամենայնիվ մի բան անել, մի այնպիսի բան, վոր վոստիկանությունը գլուխը կորցնի և ավելի կատաղի: Ցեվ դրա համար Խրիստոն առաջարկում եր

գիշերը նավթ լցնել վոստիկանական շենքի վրա և վառել։ Պետկոն համաձայն չեր. գտնում եր, վոր դրանից կարող է քաղաքը հրդեհ ընկնել և անմեղ մարդիկ կվնասվեն իզուր։

Շատ առաջարկներ արին ընկերներն իրար, բայց բոլորն էլ անհարմար գտան։ Վերջում, յերբ արդեն հուսահատվել եյին, Պետկոն վեր թռավ տեղից.

— Գտա՛։

— Ի՞նչ,— հետաքրքրվեց Արիստոն։

— Հետևի՛ր ինձ, կիմանաս։

Ու ընկերները ճանապարհ ընկան դեպի քաղաքի այդինները։

Բայց թե ինչ եր Պետկոյի գաղտնիքը — այդ պարզվեց միայն հետևյալ որը, Մայիսի մեկին։

3.

Մայիսի մեկի առավոտը վոստիկանները թվով սովորականից ավելի եյին։ Նրանք՝ աչքերը չորս՝ հսկում եյին հրապարակին ու մյուս փողոցներին, վոր ցույց լինելու դեպքում՝ ցրեն, հարկ յեղած դեպքում՝ կրակեն։ Դրա համար սովորականից ավելի եյին զինված։

Առավոտը, ժամի տասին, յերբ շուկան լիքն եր արդեն մթերք ծախող գյուղացիներով և առևտրի յեկած քաղաքացիներով, Պետկոն ու Արիստոն շուկա յեկան՝ մի փակ կողով ձեռներին։ Տպավորությունն այն եր, թե յեկել են բան գնելու կամ վաճառելու։ Դրա համար էլ մի ծերունի հարցրեց.

— Ձո՞ւ յեք ծախում։

— Ձե՛,— ասացին նրանք ու անցան առաջ, մտան բազմության մեջ և կողովն զգուշությամբ գետնին դրին։

— Հիմա ի՞նչ անենք,— հարցրեց Արիստոն։

— Սո՛ւս, ասասիր,— զգուշացրեց Պետկոն։

Ցերկու վոստիկան՝ թուք ու ատրճանակ կապած և սուլիչը վզներիցը կախ՝ շրջում եյին շուկայում և հեռվից ուշադիր զննում ամեն մեկին ու նրա ապրանքը։ Յերբ նրանք յեկան, ու սրա-նրա ապրանքը հոտոտելով անցան, Պետկոն շշնջաց Արիստոյին.

— Բաց թող...

Կողովը բացվեց և դուրս թռավ մի կարմիր բան ու առևտրով զբաղված բազմության միջից բարձրացավ վեր:

Զարմանքի ձայներ լսվեցին, իսկ վոստիկաններից մեկն ապշեց մի վայրկյան. կարմիրը նրան այնպես չփոթեց, որ մի քանի քայլ հետ գնաց. մեկ նրան թվաց, թե «փռռան» է, մեկ էլ կարծեց՝ ծալած կարմիր դրոշակ: Յերկու դեպքում էլ՝ կարմիրն անթույլատրելի էր, ուստի նա առաջ վազեց, որ բռնի. բայց վորքան մեծ յեղավ զարմանքը, յերբ այդ թռչող կարմիրը թևերը բաց արավ և մի տարորինակ ձայն հանեց. «կըրլը՛կ»...

Կին, մարդ, յերեխա, առևտուրը թողած՝ նայեցին թռչող կարմրին, իսկ վոստիկանը, բացականչելով, հետևեցին վոստիկանին: Վոստիկանը, չհասնելով թռչողին, դա համարեց ցույցի նշան ու սուլեց.

Սուլոցի վրա վոստիկանատնից անմիջապես դուրս թափվեցին կազմ ու պատրաստ վոստիկանները և վազեցին դեպքի վայրը, ուր բոլորն արդեն նայում էին վեր՝ ոդում սավառնող կարմրին:

— Արագի՛լ է, արագի՛լ, — բացականչում էին մարդիկ:

4.

Իսկապես արագիլ էր: Նա թևատարած մի յերկու պտույտ գործեց շուկայի վերև, մի յերկու անգամ գլուխը թեքեց դես ու դեն ու թռավ դեպի վոստիկանատուն, հանդարտ իջավ նրա աշտարակի գլխին, ժամացույցից վեր... Շուկայում ծիծաղ բարձրացավ: Իսկ յերբ արագիլն իրեն հանգիստ զգալով՝ վոտի մեկը ծալեց, դրեց վորի տակ— ծիծաղը փոխվեց քրքջիկի:

Դա փոքրիկ քաղաքին ծանոթ արագիլն էր, վոր որվա վորոշ ժամերին սիրում էր թառել յեկեղեցու գմբեթին, կամ վոստիկանատան աշտարակի գլխին, ուր մարդկանցից հեռու հանգստանում էր:

Բայց ինչո՞ւ յեր կարմրել—այդ էր զարմանալին:

— Արյունոտված է,— ասում էին մարդիկ:

— Յերեսի վերավորված է:

— Ներկել են, ներկել,—բացականչեց մեկը հանկարծ:— Չե՞ք տեսնում, մինչև անգամ գլուխն ու վոտները կարմիր են...

Ու սկսեցին փսփսալ, թե ո՛վ կարող է ներկած լինել:

5.

Կարծում եք՝ արագիլի պատմությունը սրանով վերջացա՞վ:— Վո՛չ:

Այնուհետև մի ամբողջ շաբաթ, նա, կարմիր թևերը դրոշի պես պարզած, հաճախ սավառնում էր քաղաքի գլխին ու մեկ-մեկ իջնում կա՛մ յեկեղեցու գմբեթին, կա՛մ վոստիկանատան աշտարակին:

Նրա թևերը կարմիր մնացին այնքան, մինչև վոր անձրևները լվացին կարմիր ներկը:

Բայց մինչև այսոր էլ Բրազայում չգիտեն, թե ո՛վ էր ներկել նրան:

Այդ բանը գիտեն միայն Պետկոն ու Խրիստոն:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Արտակարգ — անսովոր, վոչ սովորական:
2. Համախմբում — հավաք, ժողով:

3. Ցուցափեղկ — խանութի կամ արհեստանոցի պատուհան՝ ապրանքներ ցուցադրելու համար:
4. Գմբեթ — շենքի բարձր, սուր ծայր:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ դրության մեջ էր Բրագա քաղաքը Մայիսի 1-ի նախօրյակին:
2. Ո՞ւմնից էր վախենում իշխանությունը:
3. Ի՞նչ ձեռնարկեցին Խրիատոն և Պեսկոն:
4. Ինչո՞ւ նրանք զամբյուղը չուկա տարան:
5. Ինչո՞ւ մարդիկ փութալով եկին ասում իրար՝ «ո՞վ է ներկել արադիլը»:

---

1. Կարդացեք պատմվածքի այն մասը, ուր նկարագրված է Պեսկոյի և Խրիատոյի նախապատրաստական աշխատանքը:
2. Գրեցեք այն մասին, թե ի՛նչպես չուկայում արադիլը դուրս թռավ զամբյուղից:
3. Պատմեցեք, թե ուրիշ ի՞նչ կերպ կարող էր վերջանալ այս պատմվածքը:
4. Կարդացեք «Կարմիր Կոլանը» գիրքը և համեմատեցեք այս պատմվածքի հետ:

74. ՀԵՐՈՍԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Վալերի Պավլովիչի տնակը, վոտրեղ ծնվել է նա, գտնվում է Վոլգայի ափին: Մոտակայքում լեռներ են, վորտեղ ձմեռը նա սահում էր դահուկներով, մակույկն է, վորով նա սիրում էր վորսի գնալ: Գետի վրայով լաստերն են լողում: Ցերեխա ժամանակ Չկալովը սիրում էր սուզվել նրանց տակ:

Վերջերս, 1938 թ. ոգոստոսին, քաղաքը զարդարել էին: Դաշտում բարձրացել էր ամբիոնը: Ամբիոնի վերևում դրոշակներ, առաջնորդների նկարներ: Հեռավոր գյուղերից հյուրեր էին յեկել: Մենք սպասում էինք մեր հայրենակցի գալուն.

Ցեվ ահա հորիզոնի վրա յերևաց սավառնակը:

— Գալի՛ս է, գալի՛ս,— հնչեցին ուրախ ձայներ:

«Ուռա՛» բացականչություններով բոլորը վազեցին դեպի վայրեջքի տեղը: Շո՛ւտ, շո՛ւտ:

Չկալովը համբուրեց իր մայրիկին, հարազատներին, դրկեց ընկերներին և մոտեցավ ամբիոնին:

Ցեռանդով ճանապարհ բանալով, ամբիոնին մոտեցավ մի պառավ կին։

— Վո՞ր տեղից ես, տատի,— հարցրինք նրան։

— Հեռավոր գյուղից։ Ցերեկ յերեկոյան գյուղից դուրս յեկա, և ահա նո՛ր միայն հասա։ Չկալովին եմ ուզում տեսնել։

Վալերի Պավլովիչը, լսելով խոսակցությունը, մոտեցավ Ա. Պետրովային։

— Տատի, յես եմ Չկալովը։

— Մի՞թե դու յես. ինչքան չքանչաններ ունե՞ս։ Ախր յես ել քեզ ձայն եմ տվել։

Չկալովին չրջապատեցին։ Մոտենում է ջրային տրանսպորտի մի հին աշխատակից.

— Թույլ տուր մի բան միայն ասել. ուզում եմ թռչել սավառնակով, հետո թեկուզ մեռնել...

— Թռչելը — կթռչես ինձ հետ, իսկ մեռնել թույլ չեմ տալիս քեզ, քեռի Ցակով,— ասաց Չկալովը։

Լավ եմ հիշում ընկեր Չկալովի այդ օրվա ճառը միտինգում.

— Ցես ժողովրդի ծառան եմ. սիրում եմ իմ հայրենիքը, իմ ժողովրդին, ձե՛զ — իմ հայրենակիցներին։ Ո՞վ եյի յես առաջ։ Բանվորի զավակ։ Իսկ այժմ դուք ինձ ընտրել եք Գերագույն Խորհրդի պատգամավոր։ Ո՞վ տվեց ինձ համաշխարհային հռչակ. իմ հարազատ հայրը, մեր մեծ Ստալինը։ Նրա անունով յես անցա ովկիանոսներ, անցա բևեռի և յերկու մայրցամաքի վրայով, անանցանելի սառնդրանքներով ու լեռներով։ Այդ անունով և ապրում վաղչ խորհրդային ժողովուրդը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տունդրա — անտառազուրկ հարթավայր՝ մշտական սառած հողի շերտով ու ճահճուտներով։
2. Ամյուն — մարմնի մնացորդ, դիակ։
3. Տրանսպորտ — բեռների, ուղևորների տեղափոխություն։



75. ՍԱՐԳՍԱՆԸ

1

Ահա դարձան հետ և չարան-չարան
Դաշտավայրերից դեպի դով սարեր
Զրվեց սայլերի, ուղտերի քարվան—
Փախչում են շրջից թե թուրք, թե հայեր։

Թնդում են ձորում զանգի հնչյունները,
Ձիերի խրխինջ, պայտերի դոփյուն,
Մեկ-մեկի կցած անվերջ քարվանները
Քաշում է նառը, ահեղ մռնչում:

Լեռների տոնն է. մարդ և անասուն
Ուրախ յերգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջելով անցնում են ձորեր:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
Գարնան արևից փայլում են դենքեր,
Յեվ թարմ, կենսաբույր թավիշ կանաչով
Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:

Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
Թնդում կովերի, հորթերի բառաչ,
Իսկ սրբընդալով դոմեշը ճաղին
Կանչում է դանդաղ վազելով առաջ:

Վազում են հոդնած չները հոսի
Յեվ լեզուն հանած թանչին են տալիս,
Լսվում է հանկարծ ձայնը լակոտի,
Վոր քոչից ընկած՝ կալանչ է դալիս:

2

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ճուլվեց թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի հետևից բուսավ
Ծաղիկների մեջ դույն-դույն, սիզավետ:

Ալաչուխ, զազա, անվերջ վրաններ,
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
Հենվեցին մեկ-մեկ բարձր քարափին:

Ու հով սարերի սիզավետ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ յերևում են ուղտի քարվաններ:

Խրխնջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն ել իրանց յուրան են ճանաչում.
Բայում է անուշ ամլիկը գառան,
Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

3

Գիշերը հասավ, մթին է ճամբան.
Մարում է կամաց աղմուկը քոչի,
Առվակի ափին քարվաններ լինան,
Կանչում են՝ «Ցդե՛րք, ապրանք չկորչի՛».

Ձիերի ջոկեր, ուղտերի քարվան,
Սայլերի ճռռոց, վոչխար ու տավար
Գոռնելով ձորում գիշերն լինեան,
Հանդիստ են առնում մյուս որվան համար:

Կրակի վրա, առվակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ ել կորած գառանն ու հորթին՝
Սար ու ձորն ընկած հովիվն է կանչում:

Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթ ու խորոված:
Գիշերն ել արդեն մնջում է, լռում,
Հոդնած քոչվորին հանդիստ քուն բերում...

4

Բայց Լոք սարերի կանաչ լանջերում
Մի բինա ել կա, վորը չի քնում.

Այնտեղ Խարույիի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Ցեվ մեծ ու փոքր՝ ականջներ սրած,
Աշուղ Գիքորի յերգերն են լսում։

Պատմում է, յերգում աշուղն անդյալից,
Զորերում տեսած հին իգիթներից.
Կրակին դցած կաղնի մեծ գերան,
Սարվորն ել արթուն լսում է նրան։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Նաա — քարվանի առաջնորդ ուղտ։
2. Դաշտավայր— հարթ տեղ, ուր ամառը չոր է լինում (արան)։
3. Կենսաբույր — կյանք բուրող։
4. Թանչել — հեռվ
5. Սեզ — կանաչ, նուրբ խոտ։
6. Ալաչուխ, դազալ — վրանների տեսակները։
7. Բինա — վրանների տեղը։
8. Յուրտ — վրանի զբաղեցրած տարածությունը։
9. Արկած — պատահած նշանակալի դեպք, պատահար։
10. Իգիթ — քաջ, կորիճ։

ՀԱՐՑԵՐ

1. Այս բանաստեղծության մեջ ինչն է ավելի շատ գրավում հեղինակին (բնության տեսարան, կենդանիներ և այլն։)

2. Վո՞ր աղղերի քոչվորների կյանքն է նկարագրած այստեղ։

3. Վո՞ր ժամանակաշրջանի քոչն է նկարագրում բանաստեղծը։

4. Ինչո՞ւ եյին քոչում դյուղացիները։

---

1. Այս բանաստեղծությանն ուրիշ վերնագիր դրեք։
2. Գիտեք դրված՝ քի հետևյալ մասերը.
   ա. քոչը դիշերով.
   բ. տեղ հասնելը.
   գ. քոչը ճանապարհին։
3. Կարդացեք այն մասերը, վորտեղ պատկերացված են քարվանը, հովիվը, կենդանիները, խարույիի տեսարանը։

76. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԲԵՎԵՌՈՒՄ ԶՄԵՌՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Տեղ հասանք

Մեզ ինչպես Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի Բելի կղզու ամայի ափը։ Առափնյա բնակիչները այդ կղզին անվանում են Սեր-ա, վոր նշանակում է սառուցե կղզի։

Մենք յերկար ժամանակ նայում եյինք հեռացող շոգենավի հետևից։

Ռադիոն Պետյան թևերը թափահարում եր նավի կողմն ու աղաղակում.

— Ռադիոն կսարքենք՝ ամբողջ աշխարհը կթրոչեմ։

Մենք հրացանի վերջին հրաժեշտի համազարկը տվինք ու ցրվեցինք աշխատանքի։ Աշխատանք շատ կար. հարկավոր եր դույքը դասավորել, փայտ պատրաստել, բնակարան կառուցել...

Հետևյալ որը ձյուն տեղաց, ուժեղ սառնամանիք սկսվեց, իսկ մի շաբաթ անց՝ կղզին բոլոր կողմերից սկսեցին սառույցով։ Վրա հասավ բևեռային գիշերը։ Պարզ յեղանակին բռնկում ու մարում եյին հյուսիսափայլի շողշողուն, հրավառ շերտերը։ Այդ տեսարանից աչք հեռացնել չեր կարելի, և մենք հիացած՝ ժամերով կանգնում եյինք սառնամանիքում։

Թվում եր, թե մենք կտրված եյինք ամբողջ աշխարհից։

Սակայն չեյինք տխրում։ Բոլորս զբաղված եյինք, կարում եյինք, հղկում, պատերի ճեղքերը խծուծում, անպակի դցում, թիթեղյա վառարաններ եյինք շինում և դիտական աշխատանք կատարում։ Հարկավոր եր պարզել, թե ծովային հոսանքներն ամենից շատ վո՞ր կողմն են գնում, վո՞ր կողմն են շարժվում սառույցակողմն են գնում։



նները, ամենից շատ վո՛ր կողմից ե փչում քամին, յե՛րբ ե լինում մառախուղ, սառնամանիք ու ձյուն:

Այնուհետև հարկավոր եր իմանալ, թե ի՛նչ կղզի յե այդ, ի՛նչ գազաններ ու թռչուններ են ապրում այնտեղ, ի՛նչ բույսեր են աճում, ի՛նչ ձկներ կան ծովում:

Արջը սառույցի վրա

Առաջին անգամ մեզ սպիտակ արջ պատահեց դեռևս ճանապարհին: Մենք Արկտիկա եյինք գնում ծովով, մի մեծ շոգենավով, իսկ «Միշան» լողում եր մի սառույցի բեկորի վրա: Սառույցը շատ ավելի մեծ եր մեր շոգենավից: Մենք հիանալի տեսնում եյինք, թե ինչպես արջը հանդիստ նայում ե մեզ, ինչպես տան-

նները կնայի անկոչ հյուրերին: Նարեկներից մեկը ցանկանում եր կրակել, բայց չթողին: Ինչո՞ւ կրակել, միևնույն ե, վերցնել չես կարող:

Բոլորս ծիծաղում եյինք, կանչում.

— Միշա, ո՞ւր ես գնում:

— Միխայլ Պոտապիչ, ընդունիր հյուրերին:

Բայց արջը հանդիստ կանգնել եր սառույցի վրա և զանգաղ ու հանդիսավոր կերպով գլուխն եր որորում:

Արջը և սպիտակեղենը

Զմեռողների մեջ կին չկար: Մեզ համար ամենադժվար աշխատանքն սպիտակեղեն լվանալն եր:

Այդ գործը դյուրացնելու համար մեր բարեսիրտ բժիշկ Արկադի Պետրովիչը մի նոր միջոց հնարեց. նա սպիտակեղենը լցրեց ջրով լի մի ամանի մեջ, ոճառը կտրեց դցեց մեջը, վրան ել ավելացրեց սոդա և նաշատիրի սպիրտ: Ապա այդ ամենը յեռացրեց ու յերկու որ ու գիշեր թողեց ամանում:

Նրա կարծիքով՝ ամբողջ կեղտն ինքն իրեն պետք ե դուրս գար, առանց լվանալու:

Բայց յերբ նա սկսեց սպիտակեղենն ամանից հանել, պարզվեց, վոր բոլոր շորերը սևացել են:

Նա սոսկումով ամանից հանում եր սև ու կեղտոտ սպիտակեղենը և գայրանում, իսկ մենք նայում եյինք նրան և ուրախ ծիծաղում:

— Ա՛յ թե լվացո՛ղ:

— Ա՛յ քեզ նոր ձևի լվա՞ցք:

Բանից դուրս յեկավ, վոր նա սպիտակեղենի հետ ամանն ե դցել նաև մի սև խալաթ, մոտքի փաթաթաններ և ելի մի ինչ-վոր սև շոր:

Սպիտակեղենն ավելի կեղտոտ դուրս յեկավ, քան առաջ եր:

Բայց նրան մի ուրիշ փորձանք էլ էր սպառնում. նա սպիտակեղենը փռեց չորանալու և գիշերը դուրսը թողեց: Իսկ այդ գիշեր արջը յեկել էր կայան, նրա բոլոր սպիտակեղենը պատառոտել ու ցրիվ տվել հեռու, ձյունների մեջ:

Պետք էր տեսնել, թե Արկադի Պետրովիչն ինչպես էր անեծքներ ու հայհոյանքներ թափելով շրջում ու հավաքում սպիտակեղենի ցրիվ տված ծվենները:

Մի ամբողջ ամիս մեզ զբաղեցնում էր այս պատմությունը:

Բեվեռային ձմեռ պապի կատակները

Մի անգամ ահա թե ինչ պատահեց: Շներ լծած սահնակով յես գնացի կղզու խորքը: Խիստ սառնամանիք էր: Իմ մորուքը ծածկվեց յեղյամով և շուտով դարձավ մի ահագին սառցալուլա: Յես դանդաղ, ընդհատումներով սկսեցի քիթս սրբել թևքով: Յեվ հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ մի անախորժ բան: Թևքս սառավ, կպավ բեղիս: Վոչ մի կերպ պոկել չկարողացա. ցավ էր տալիս: Սոսկալի յեղա թևս դուրս քաշել թևքիս միջից և ծոցումս պահել, իսկ թևքս այնպես էլ մնաց բեղերիս ու մորուքիս կպած, քթիս առաջ կախված: Յես շտապ տուն վերադարձա, վագերի խոհանոց, վառարանի մոտ թևքս հալեցնելու: Ուզում էյի այնպես անել, վոր վոչ վոք ինձ այդ վիճակում չտեսնի, բայց չհաջողվեց: Բոլորը վրա վազեցին և—ա՛յ թե ծիծաղեցին հա՞:

Մոլորվեցի

Վրա հասավ բևեռային յերիկամուտ ցերեկը: Մի անգամ յես վորսից տուն էյի վերադառնում: Մառախուղ էր: Մառախուղը փաթաթվում էր ինձ, թափանցում գուլպաներիս ու չապիկիս մեջ: Մշուշը ծածկում էր ամեն ինչ և տասը քայլի վրա գտնվող առարկաներն անտեսանելի յեր դարձնում: Մինչև մեր բնակավայրը հինգ կիլոմետրից ավելի յեր: «Մեկ ժամվա ճանապարհ»,— մտածում էյի յես:

Սկզբում տեսանելիությունը լավ էր: Բայց մի պատնհինդ բոպե չանցած՝ ամեն ինչ մշուշի մեջ թաղվեց: Յես ուղղություն վերցրի հիշողությամբ: Արդեն մոտ յերեք ժամ էր անցել, իսկ բնակավայրը դեռ չեր յերևում: Սկսեցի պատվել մեկ այս կողմ, մեկ՝ այն: Բայց այդպես կարելի յե հեռանալ՝ ով գիտե, թե վորքան: Ա՞յս ինչ բան է: Ո՞ւր գնալ:

Յես կանգ առա: Շարժական վրանս խփեցի ու սկսեցի սպասել: Յերկու գալետ կերա, մի կտոր պաքսիմատ, մի բուռ ձյուն «իմեցի» և շուտով քուն մտա: Արթնացա սաստիկ ցրտից: Ամբողջ մարմինս դողում էր: Վրանից դուրս յեկա, վորպեսզի շարժումներ անեմ և գեթ փոքը ինչ տաքանամ: Մառախուղն սկսեց նոսրանալ: Մշուշն քողի միջով սկսեց լույս ցոլալ: Հանկարծ մի մութ սիլուետ տեսա: Մտածում եմ. «Այս ի՞նչ հրաշք է»: Մի քանի քայլ արի դեպի այդ մութ կետը և շենքերի գծագրությունը նկատեցի: Ավելի մոտեցա և ուրախացա. այդ մեր տունն էր՝ ընդամենը մի քանի քայլի վրա իմ վրանից:

Կռիվ ծովացուլի հետ

Պատահեց, վոր մի անգամ յես ու կայուրը (վորսորդը) գնացինք գազան վորսալու: Մենք արդեն հեռու, ծովումն էյինք: Զրի միջից սկսեցին յերևալ փոկերի, ծովացուլերի և ծովային նապաստակների գլուխներ: Յես, հենց այն է, ուզում էյի կրակել, հանկարծ յերևաց մի մռութ, դեպի ցած ծռված ժանիքներով: Ծովացո՞ւլ: Կայուրը մոտորը կանգնեցրեց:

Ծովացուլը ջրի տակ թաղնվեց: Մենք յերիտասս եվ հրացաններս պատրաստեցինք ու սկսեցինք սպասել դազանի յերկրորդ յերևալուն: Շուտով գլուխը նորից յերևաց: Յես կրակեցի, բայց ծովացուլը սուզվեց ջրի մեջ, վորի յերեսին մի կարմիր բիծ մնաց:

— Վիրավորեցի՛ր,— ասաց կայուրը և սկսեց մոտորը գործի դցել:

— Շուտ ափ հասնենք,— գոչեց նա: Յես սկսեցի յերկու պահեստի թիերով թիավարել:

Ծովացուլը սիրում է արևի տակ տաքանալ: Յերբ նա դուրս է գալիս սառույցի վրա քնելու, վտանգավոր չե: Սակայն բաց ծովում նրան հանդիպելը շատ է վտանգավոր: Մանավանդ, յեթե վորևե բանով նրան բարկացնես կամ վիրավորես: Այդ դեպքում նա կհետապնդի հակառակորդին:

Մենք խիստ և խիստ այդպիսի վտանգավոր դրության մեջ ընկանք: Վիրավոր ծովացուլը ջրից դուրս պրծավ և կատաղած մոնչաց: Դրանով նա մյուս ծովացուլերին ողնության եր կանչում:

Շուտով ծովացուլերի մի ամբողջ նախիր յերևաց: Իրարանցում սկսվեց: Ծովացուլերը հրհրում եյին իրար, առամները չրխկացնում, կռվում, իրար կծում և հուսահատությունից մոնչում: Մեր մակույկը թռչում եր ալիքները կտրելով: Ծովացուլերը հետապնդում եյին մեզ: Մենք արդեն զգում եյինք մակույկի կողերին տրվող հարվածները:

Ջուրն սկսեց մակույկի մեջ հոսել: Մի բոպե ևս— և կործանումն անխուսափելի կլիներ: Բայց մենք յարեցինք մեր վերջին ուժերը և շուտով ափ ցատկեցինք: Մի քանի ծովացուլ դուրս ցցվեցին ջրից: Մենք կրակեցինք: Կենդանիներից յերկուսն անշնչացած ընկան: Մենք հարպուններով նրանց վեր քաշեցինք ու կապեցինք մակույկին: Մակույկի կողքի ճեղքն եվ նորոգեցինք և ափի մոտով նավարկեցինք դեպի կայան:

Վիրավոր ճայեկը

Մի անգամ խոհարարը պատահմամբ մի ճայեկ վիրավորեց: Նա այդ ճայեկը տուն բերեց, վերքը լվաց, յոդ քսեց ու փաթաթեց: Մի քանի որից հետո ճայեկն առողջացավ և մենք նրան ազատ արձակեցինք: Դրանից հետո նա հաճախ հյուր եր գալիս մեզ և մենք սիրով դիմավորում եյինք նրան, վորպես վաղեմի ծանոթի:

Մի ուրիշ անգամ յես ուղում եյի մի կրակոցով մի զույգ սագ սպանել, բայց միայն մեկին կպավ: Մյուս սագը վեր թռավ և սկսեց իմ գլխավերևը պտույտներ անել:

— Պի-կուրլի, պի-կուրլի,— ճչում եր նա:

Դրանից հետո շատ որեր անցան, բայց նա միշտ գալիս եր նույն տեղը, կանչում ու վողբում իր ընկերոջ կորուստը:

Արեգակն սկսեց ավելի հաճախ յերևալ: Բայց ձմեռը դանդաղորեն եր հեռանում: Վերջին բուքն ավարտվեց հունիսի 26-ին և դրանից հետո սկսվեց ամառը:

Թռչուններն սկսեցին բուն դնել և շուտով ճուտերը յերևացին: Զյունը հալվեց, տեղ-տեղ սկսեց թարմ խոտ յերևալ:

Սպիտակ, անծայրածիր անապատի տեղ փռված եյին մուգ կանաչ բլրաշատ բարձրություններ ու հովիտներ: Լճերը բացվեցին:

Մենք շատ վորս եյինք անում. ձվեր եյինք հավաքում և վորսի թարմ մսով եյինք սնվում: Իսկ ծովում դեռ նույնքան ամուր սառույց եր կանգնած: Սառցասարերը շարժվելու միտք եվ չունեյին: Այդ

մեզ վախեցնում էր: Ցեվ միայն ոգոստոսի առաջին կիսին հյուսիս-արևմուտքից սկսեցին ահեղ ամպեր յերևալ:

Ութ որ մրրիկը մոլեգնում էր: Շրջապատում ամեն ինչ աղմկում էր, դղրդում ու ճաքճատում: Սառցի վիթխարի կտորները ցցվում եյին կողքի վրա և վայր ընկնում խլացուցիչ դղրդյունով:

Իսկ ոգոստոսի 12-ին ծովը մաքուր էր: Շուտով չոգենավեր յեկան:

Սեպտեմբերին թռչունները նորից չվեցին: Ջուրը կրկին սկսեց սառչել: Ծովում սկսեցին հաճախակի յերևալ լողացող սառույցներ: Հյուսիսային բևեռից ցուրտ եր գալիս, վորպեսզի նորից սառն ամառով կդդրդին կաշկանդի սառցե ողակի մեջ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հրաժեշտ — բաժանվել, մնաս բարով անել:
2. Համազարկ — կրակել միաժամանակ (հրացաններից, թնդանոթներից):
3. Տեղալ — գալ, իջնել:
4. Կաշկանդվել — կապվել:
5. Բռնկել — վառվել, բոցավառվել:
6. Խծուծել — ծեփել, յցնել:
7. «Միշա», «Միխայիլ Պոտապիչ» — արջի մանկանունը (ռուսերեն):
8. Ոճառ — սապոն:
9. Ցեղյամ — ցողը սառած:

---

77. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ ԳԱՌՆԱՐԱԾ

Ես գարում Մըսրը անհաղթ ու հզոր
Մսրա Մելիքն եր նստած թագավոր:
Հենց վոր իմացավ՝ եկ Մհեր չկա,
Վեր կացավ կռվով Սասունի վրա:
Ձենով Ոհանը ահից սարսափած՝
Թշնամու առաջն յելավ դիմաբաց,
Աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դո՛ւ յեղիր, ասավ, մեր գլխի տերը,
Ու քո չվաքում քանի վոր մենք կանք,
Քո ծառան լինենք, քո խարջը միշտ տանք,
Միայն մեր յերկիրը քար ու քանդ չանես
Ու քաղցը աչքով մեզ մտիկ անես:
— Չե՛, ասավ Մելիք, քո ամբողջ ազգով
Անց սլիտի կենաս իմ Թրի տակով,
Վոր եդուց-ելոը, ինչ եկ վոր անեմ,
Վոչ մի սասունցի Թուր չառնի իմ դեմ:
Ու գնաց Ոհան՝ բոլոր բովանդակ
Սասունը բերավ, քաշեց Թրի տակ.
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Սոա չեկավ դուշման Մելիքի Թրին:
Ցեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տվավ մարդկանց գցեց դես ու դեն:
Փոքրիկ ճկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կրակ դուրս թռավ:
— Պետք է ոպանեմ ես փոքրիկ ծուռին,
Ասավ Թագավորն իրեն մեծերին:
— Թագավո՛ր, ասին, դու եսքան հզոր,
Թրիդ տակին է վոդջ Սասունն եսոր,
Ի՞նչ պետք է անի քեզ մի յերեխա,

Թեկուզ իր տեղում հենց կրակ դառնա՞
— Դո՛ւք դիտեք, ասավ Սասրա թագավոր,
Բայց թե իմ գլխին փորձանք գա մի որ,
Ես որը վկա,
Սրանից կդա։

2

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հսկան
Մի մանուկ եր դեռ յոթ–ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
Վոր նրա համար թե մարդ, թե մժեղ։
Բայց վա՛յ խեղճ վորբին աշխարհքի վրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա։
Զենով Ոհանին ուներ մի չար կին։
Մին–յերկու լռեց, մի որ եկ կարդին
Իրեն մարդու հետ սկսավ կռվել.
— Ցես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի վորբին տուն բերել,
Նստեցրել գլխիս պարապ հացակեր...
Հողե՞մ գլուխը... յես գերի հո չե՞մ։
Սմենքի քեֆի յետևից թռչեմ...
Մի կուռ կոցցրո՛ւ, կարգիր մի բանի,
Գնա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկսավ վողբալ ու կոծել,
Իր որը սգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ յեղավ աշխարհքի մեջում,
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն ե խղճում...
Գնաց Ոհանը յերեխի վոտի
Մի զուլդ վոտնաման բերավ յերկաթի,
Ցերկաթի մի կոռ չալակին դրած,
Ու ասավ Սասմա քաղքի դառնարած։



3

Քշեց դառները մեր հովիվ հսկան,
Ցելավ Սասունի սարերն անմման.
«Ե՛յ ջան, սարեր,
Սասմա սարեր...»
Վոր կանչեց, նրա ձենից ահավոր
Դղորդ–դմբդմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բներից փախան,
Քարեքար ընկան, դաղարկուն յեղան։
Դավիթը ընկավ նրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից—

Աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բռնեց,
Հավաքեց, բերավ, դառներին խառնեց,
Իրիկվան՝ քշեց վոդջ Սասմա քաղաք։
Կաղկա՛նձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղքցիք հանկարծ մին ել են տեսան՝
Գալիս են հրես անհամար դաղան.
«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»
Մեծերը, յերեխեք
Սրտաճաք յեղած,
Գործերը թողած,
Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՛հ, ես մարդիկը ի՞նչ վաղ են քնում.
Հե՛յ ուլատեր, հե՛յ դառնատեր,
Ցելե՛ք, շուտով բացեք դռներ.
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քսան արել...
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր դառն ու ուլ գոմերն արեք։
Տեսավ՝ չեն դալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնվեց քաղքի մեյդանում,
Գլուխը դրավ մի քարի մնաց
Ու մուշ-մուշ քնեց մինչև լուսաբաց։
Լուսին՝ իշխաններ յելան միասին,
Գնացին Զենով Ոհանին,— ասին.
— Տո՛, Զենով Ոհան, տո՛, մահի տարած,
Ես խենթը բերիր, արիր դառնարած,
Վոչ դառն ե ջոկում, վոչ գելն ու աղվես,
Գազանով լցրեց մեր քաղաքն եսպես.
Հոգիդ կսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չե ես խալխին լեղաճաք կանի։

ԲԱՌԵՐԻ ԲՈՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խարջ — հարկ։
2. Նլոր՝ — մյուս որը։
3. Դուշման — թշնամի։
4. Կորյուն —դաղանների ճաղ (տոյուծի)
5. Կարգել — դարձնել (նշանակել)։
6. Ծուռ — խենթ, խելառ։
7. Կոծել — լաց լինել։
8. Կոռ — մահակ։
9. Դաղարկուն լինել — անտուն-անտեղ մնալ։
10. Կաղկանձ — դաղանի ձայն։
11. Մեյդան — հրապարակ։
12. Կուռ — կողմ (նաև՝ բազուկ)։
13. Խալխ — ամբոխ, ժողովուրդ։

Ց Ա Ն Կ

(Աստղանիշերը՝ չափածո նյութեր են)

		Եջ
*	1· *Ցերեխաները*— Ս· Ստալսկի (*Թարգմ.՝* Մ· Դ·)	5
*	2· *Ծաղկաձորում*— Մ· Կորյուն	6
	3· *Խաղողի այգում*— Ստ· Զորյան	8
	4· *Խաղողի յերգը*— Մ· Կորյուն	11
	5· *Տեր-Սվանեսի դպրոցը*— Շիրվանզադե	13
*	6· *Անիծած հարսը*— Հով· Թումանյան	15
	7· *Զրանցքի բացումը*— *ըստ* Մ· Մանվելյանի	18
	8· *Առյուծն ու մարդը*— Վ· Այգեցի	20
*	9· *Առատ բերք*— Վ· Գրիգորյան	22
	10· *Գասպարյանի չարաղբությունը*— *ըստ* Գորնովի	23
*	11· *Աղբյուրը*— Հով· Թումանյան	25
	12· *Ճնճղուկը*— Ի· Տուրգենև (*Թ·* Ալ· Ծատուրյան)	26
	(*Թարգմ.՝* Ալ· Ծատուրյան)	26
	13· *Վանկա*—*ըստ* Ա· Չեխովի	27
*	14· *Հերոս մանուկը*— Հ· Հայրապետյան	33
	15· *Արջը*— Ստ· Զորյան	34
*	16· *Զարի վերջը*— Հով· Թումանյան	37
	17· *Գելը*— » »	44
*	18· *Ցերկու ընկեր*— Ղ· Աղայան	48
	19· *Հերոս տղան*— «*Հասկեր*»-*ից*	49
	20· *Բևեռային գիշեր*— Պապանինականների որագրից	54
*	21· *Բևեռի առումը* (*հատված*)— Հ· Շիրազ	56
	22· *Ցերիտասարդ քաղաքացին*— Ստափֆի	57
*	23· *Հին գինվորի նամակը*— Ս· Վահունի	61
	24· *Սահմանապահ Ուսանողը*— (*փոխադր.* Մ· Դ·)	63

25. Համարձակ ուղան— 65
* 26. Տաջիկական յերգ— մշ. Հռ. Պզոսյան 66
27. Սուտլիկ վերսկանը— Հով. Թումանյան 67
* 28. Մաղայ պապն ու նապաստակները— ըստ Նեկրասովի (Թարգմ.՝ Հ. Հ.) 69
29. Տերն ու ծառան— Հով. Թումանյան 72
* 30. Խոզն ու ոզոտվը— Խնկո-Ապեր 78
31. Յերկաթուղին— ըստ Ստ. Զորյանի 79
* 32. Լուսաբացին— Հ. Հակոբյան 83
33. Լենինի ուղարկած մարդը— (փոխադր. Մ. Դ.) 84
34. Խնդության առնածառ— Մ. Կորյուն 88
35. Վլադիմիր Իլյիչի պատանեկությունը— Ա. Ուլյանովա 89
36. Լենինի մոտ— ըստ Ս. Որջոնիկիձեյի 90
* 37. Այն մասին, թե ինչ պատահեց Կրեմլում մեկ անդամ— Դիլակտորսկայա (Թարգմ.՝ Մ. Դ.) 92
38. Հիշողություն ընկեր Ստալինի մասին— Թիբվինիձե 94
* 39. Ստալին— Ա. Գասպարյան 96
40. Ինչու յեմ սիրում ընկեր Ստալինին— «Մուրզիլկա»-ից 97
* 41. Որոր— Վեսպեր 100
42. Առաջին թռիչքը— Լյուբա Բեռլին 101
43. Ընկեր Սերգոյի նվերը— «Պիոներսկ. Պրավ.»-ից 104
* 44. Վոսկի ձկնիկ— Ա. Պուշկին (Թ. Ղ. Աղայան) 106
45. Մի դեպք Ֆրունզեյի կյանքից— Մանկ. որացույցից, 38 թ. 117
46. Անվախ հրամանատարը— փոխադր. (Մ. Դ.) 119
47. Մի դեպք կամուրջի վրա— «Հոկտեմբերիկ»-ից 121
48. Անձնազոհ նավաստին— Ստանյուկեվիչ 122
* 49. Բասկական հին յերգ— Ավ. Իսահակյան 128
50. Լինա Ոգենա— ըստ «Պիոներ Կանչ»-ի 129
* 51. Ինչու մայրիկին Գրիչկա անվանեցին— Դիլակտորսկայա (Թարգմ.՝ Մ. Դ.) 131
52. Քաջ նավաստակը— Մ.-Սիբիրյակ 134
* 53. Գարնան հրավեր— Հով. Թումանյան 137
54. Տրակտորիստը— Զ. Դարյան 139
55. Սահմանապահի վրա Շմուշկեվիչ 142
* 56. Լուսաղեմին— Խնկո-Ապեր 144
57. Գահակատեղում— Ա. Շահբազ 145
* 58. Լուսնակն անուշ— Ժողովրդական 149
59. Յեղնիկի ձագուկի պատմությունը— Վ. Փշավելի 150
* 60. Ծիծեռնակին— Խնկո-Ապեր 153
61. Զալանկը— Ստ. Զորյան 154
* 62. Աղռավն ու աղվեսը— Խնկո-Ապեր 159
63. Յերեխաները— Մ. Գորկի 161
* 64. Վարդը— Վ. Գյոթե (փոխադր. Հ. Թում.) 165
65. Վերջին սատանան— (փոխադր. Սիմակ) 166
* 66. Ծաղիկն ու մեղուն— Մ. Կորյուն 171
67. Միչուրինի այդին— մշ. Սիմակ, Մ. Դ. 173
* 68. Առավոտը— Աք. Խնկոյան 175
69. Ծաղիկների յերիկությը— «Լուսաբեր»-ից 176
* 70. Մայիսմեկյան յերգ— Յեվգինե Ն. 180
71. Գործարանում— Կացյուրինսկիյ (Թարգմ. Ս. Լիսիցյան) 181
* 72. Ընկերներ— Վ. Ինբեր (Թարգմ. Մ. Դուրգ.) 185
73. Կարմիր արտիլ— ըստ Ստ. Զորյանի 186
74. Հերոսի հայրենիքում— «Կոմսոմ. Պրավդա»-ից 193
* 75. Սար գնալը— Վ. Միրաքյանից 195
76. Պատմվածքներ բեվեռում ձմեռողների կյանքից— Դ. Զարեցկի 199
* 77. Սասունցի Դավիթը դառնաբած— Հ. Թումանյան 207

Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տեր-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Վ.—2008. Հրատ. № 4806
Գատվեր 148. Տիրաժ 65,000
Թուղթ 62×94. Տպագր. 13,5 մամ.
Հանձնված է արտադրության փետրվարի 9-ին 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար մարտի 25-ին 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0240216

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.
ԿԱՉՄԸ 50 Կ.

14 ապր. 1939
8273

АРМЯНСКИЙ ЯЗЫК
книга для чтения
учебник для III-го класса
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.